

Գ. Մ. ՄԱՐԶԱՆՅԱՆ  
ОБЯЗАТЕЛЬНЫЙ  
КОНТРОЛЬНЫЙ  
ЭКЗЕМПЛЯР

## ԻՆՍԵԿՏՈՑՈՒՆԴԻՍԻԴՆԵՐ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐԻ  
ՎՆԱՍԱՏՈՒ ՈՐ ԳԱՆԻՋՄՆԵՐԻ ԴԵՍ  
ՈԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԹՈՒՆԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԸ  
ՅԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ

632 | 2801

U-37 | ~~Сурьезная г.~~

~~платформа. 9-го класса. 4-го я.~~

~~Платформа 9-го класса 4-го я.~~

1939г.			30.

632.952

5-37

Գ. Մ. ՄԱՐԶՈՆՅԱՆ

ԱՏՈՒԳՎԱՍ Է 1961 թ.

## ԻՆՍԵԿՏՈՑՈՒՆԳԻ ՍՈՒԴՆԵՐ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐԻ  
ՎՆԱՍԱՏՈՒ ՈՐԳԱՆԻ ԶՄՆԵՐԻ ԴԵՄ  
ՈԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԹՈՒՆԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԸ  
ՅԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ

~~2801~~

A 18123



## ՊԱՅԲՄԱՆ ԲԻՄԱԿԱՆ ՍԵՔՈՂԵ

Պյուզատնտեսական կուլտուրաների վնասատու որդանիզմների դեմ ոգտագործվող բոլոր տեսակի պայքարի մեթոդների մեջ պայքարի քիմիական մեթոդը դյուզատնտեսութան զարգացման ներկա շրջանում հանդիսանում է հիմնականը և առաջատարներից մեկը :

Պայքարի քիմիական մեթոդի ներկա վիճակը և նրա հետագա զարգացումը պայմանավորվում է մի կողմից՝ մեր յերկրի որքան որքան աճող քիմիական արդյունաբերութամբ և մյուս կողմից սոցիալիստական դյուզատնտեսութան զարգացմամբ :

Կողմակերպված խոշոր տնտեսությունները ոժտված նորագույն տեխնիկայով հնարավորություն են տալիս լայն չափերով վնասատու որդանիզմների դեմ ոգտագործել նորագույն միջոցներ :

Պայքարի քիմիական մեթոդն իր ծավալուն կիրառումը գտավ միայն սոցիալիստական կարգերի որով, կրիդիաներով տառապող կապիտալիստական աշխարհն այսօր ընդունակ չի գործադրելու քիմիական պայքարի այն առաջավոր ձևերը, վորոնք մեզ մոտ ոգտագործվում են միլիոնավոր հեկտարների վրա :

Վնասատու մորեխների ու մկների ռախների վոնչացումը, հացաբույսերի մրիկով վարակվածութան տոկոսի իջեցումը 30%-ից 3%-ի և այլ շատ պայքարի ասպարիզում ձևեր բերված հալթանակները հետևանք են քիմիական մեթոդի կիրառման, իսկ վերջինս հնարավոր եր միմիայն խորհրդային յերկրի կազմակերպված տնտեսութան պայմաններում : Վո՛չ միայն նախկին Ռուսաստանը, այլ կապիտալիստական և վոչ մի յերկիր ընդունակ չեն ալրպիսի մասշտաբով պայքար մղելու :

Պայքարի քիմիական մեթոդի նվաճումների լավագույն ցուցանիշը կարող է հանդիսանալ Թունավոր նյութերի գործադրման աճումը ԽՍՀՄ-ում, ալսպես, որինակ, յեթե 1927 թվին դյուզատնտեսութան մեջ ծախսվել է 7000 տոնն դանագան թու-

նալոր նյութեր, ապա 1935 թվին այն բարձրացել է 40.000 տոն-  
նի, իսկ ներկայումս պետք է յենթադրել, վոր այս թիվը ավելի  
քան յեռապատկվել է:

## ՔԻՄԻԱԿԱՆ ՍԵՔՈՂԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ

Պայքարի քիմիական մեթոդի նյությունն այն է, վոր մենք  
այս կամ այն թունավոր նյութը տեխնիկական այս կամ այն  
ձեվով գործադրելով՝ վոչնչացնում ենք մնասատու որդանիզմնե-  
րին: Այս տեսակետից պայքարի քիմիական մեթոդը հանդիսա-  
նում է մնասատու որդանիզմներին վոչնչացնելու ուղղակի մեթոդ,  
բայց սխալ կլիներ կարծել, թե քիմիական մեթոդը հանդիսանում  
է պայքարի միայն ուղղակի մեթոդ, շատ հաճախ այն գործա-  
դրվում է վորպես պրոֆիլակտիկ ձեռնարկում: Թունավոր նյու-  
թը փոշոտվում է կամ սրակվում մնասատու որդանիզմների առաջ  
գալը կանխելու համար, վորի դեպքում ստեղծելով բույսի մա-  
կերեսի վրա թունավոր միջավայր անհնար է զարծվում մնասա-  
տու որդանիզմների զարգացումը (որինակ պայքարը միլիտու-  
դեմ):

Այդպիսով, պայքարի քիմիական մեթոդը սոցիալիստական  
գյուղատնտեսության պայմաններում դառնում է նաև պայքարի  
պրոֆիլակտիկ ձևերից լավագույնը:

Քիմիական պայքարը մեծ չափով պայմանավորում է բարձր  
բերքի ստացումը: Հաշված է, վոր գյուղատնտեսության մեջ  
գործադրվող տարբեր ձեռնարկումների մեջ պայքարի քիմիական  
մեթոդը հանդիսանում է ամենապես ամենիզ և ֆեկտիվներից  
մեկը:

## ԹՈՒՅՆ ՅԵՎ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄ

Վորպեսզի քիմիական պայքարը դրական արդյունք տա առա-  
ջին հերթին անհրաժեշտ է ունենալ այնպիսի նյութ, վորն ըն-  
դունակ է մնասատու որդանիզմի թունավորում—մահ առաջաց-  
նել: Այդ տեսակետից անհրաժեշտ է, վորպեսզի գործագրվող  
նյութն ունենա թունավորող հատկություն—լինի քույն: Ընդ-  
հանրապես ընդունված է թույն անվանել քիմիական այնպիսի  
միացությունները, վորոնց փոքր քանակություները կարող է մնա-  
սատու որդանիզմների մեջ բերքիմիական և ֆիզիոլոգիական փո-

փոխութիւններ առաջ բերել և պատճառ դառնալ վնասատու որ-  
 դանիզմների վոչնչացման: Բայց պետք է տեսլ, վոր թույն հաս-  
 կացողութիւնը հարաբերական հասկացողութիւն է, բացարձակ  
 թույն բոլոր տեսակի վնասատու որդանիզմների համար գոյու-  
 թիւն չունի. այսպես, որինակ, պիւրետումը, վորը ուժեղ թույն  
 է համարվում վնասատու միջատների համար, բոլորովին անվնաս  
 է սնկերի և կրծողների համար, նույնիսկ ավելին, շատ միջատ-  
 ներ անմիջապես սպանվում են պիւրետումի ազդեցութիւնից,  
 իսկ կան միջատներ, վորոնք բոլորովին չեն յենթարկվում պի-  
 ւրետումի ազդեցութեանը: Մծումբը լավագույն միջոց է ալրա-  
 ցող սնկերի դեմ պայքարելու համար, բայց բոլորովին չի ազ-  
 դում միլլիուլի կամ մրիկի վրա: Այսպիսի որինակներ բույսերի  
 պաշտպանութեան սլրակտիկայում բաղմամբիւ ևն: Այդպիսով  
 թույն հասկացողութիւնը կոնկրետ հասկացողութիւն է. ամեն  
 մի թունավոր նյութ կարող է թունավոր լինել միայն վորոշ որ-  
 դանիզմների համար և վորոշ կոնկրետ պայմաններում: Թունա-  
 վոր նյութերը կարող են ունենալ ազդեցութեան արեւի լայն և  
 կամ ավելի նեղ սֆերա: Այսպես, որինակ արսենի միացութիւն-  
 ները թունավոր են միջատների, սնկերի, բակտերիաների, մուլա-  
 խտաների և կրծողների համար: Արսենը թունավոր է նաև մարդ-  
 կանց, կենդանիների և բույսերի համար: Ճիշտ է, նա տարբեր  
 որդանիզմների վրա ազդում է տարբեր կերպով և տարբեր  
 չափով, բայց այնուամենայնիւ նա վերել բերված բոլոր որդա-  
 նիզմների համար հանդիսանում է թույն: Ընդհակառակը, պի-  
 ւրետումը ազդում է միայն միջատների վրա և բառիս լայն ի-  
 մաստով նա հանդիսանում է ինսեկտիսիդ: Հետեւապես, կարելի  
 չէ ասել, վոր արսենը ունի ազդման ավելի լայն սֆերա, քան  
 պիւրետումը:

Թունավոր նյութի թունունակութիւնը այս կամ այն վնա-  
 սատուի նկատմամբ կախված է մի շարք հանդամանքներից, վո-  
 բոնցից կարեւորներն են՝

- 1) Թունավոր նյութի քիմիական բաղադրութիւնը:
- 2) Թունավոր նյութի Ֆիզիկո-քիմիական հատկութիւնները:
- 3) Արտաքին շրջապատի պայմանները, վորում ընթանում է  
 թունավորման պրոցեսը:
- 4) Թույնի ազդման տեսողութիւնը:
- 5) Վնասատու որդանիզմի տեսակը, զարգացման ստադիան,  
 Ֆիզիոլոգիական վիճակը, սեռը և այլն:

6) Գործադրվող թույնի քանակը :

Թունավորման պրոցեսը հիմնականում ընթանում է յեբկուտաբբեր փուլով՝ 1) թույնի ներարկումը սրղանիլովի մեջ և 2) թունավորման բուն պրոցեսը, յերբ թույնը արղեն թափանցել և բջջի մեջ և աղոում է պլազմայի վրա :

Թունավորման սիլընական Փաղան կայանում և նրանում, վոր թունավոր նյութը բջիջի թաղանղի միջով ներս է թափանցում բջջանյութի մեջ : Այդ թափանցումը կարող է տեղի ունենալ միայն այն դեպղում, յերբ տվյալ նյութը դանվում է դաղ, դուրջի կամ հեղղուղ վիճակում. հնարավոր է նաև այնպիսի վիճակ, յերբ թափանցում է ծայրահեղ կոլլղղ վիճակում (ծուխ) :

Բացարճակորեն չլուծվող կամ վատ լուծվող նյութերը հանդիսանում են վոչ թունուհակ, կամ թե չե հանղես են բերում շատ թույլ թունավոր աղղեցղություն : Այսպես որինակ, արսենի յեռարժեք միացղությունները լինելղղ ավելի լավ լուծելի քան արսենի հնղարժեք միացղությունները հանղես են բերում ավելի բարձր թունուհակղություն :

Վորքան բարձր է ջերմաստիճանը և թունավոր նյութի կոնցենտրացիան, և վորքան թափանցելի յե բջջաթաղանղը, այնքան ավելի շատ թունավոր նյութ կթափանցի բջիջի ներսը և միավոր ժամանակամիջղղում ավելի շատ կկուտակվի բջիջի մեջ : Այղպիսի պայմաններում Թ. Ն. ավելի բարձր եֆֆեկտ է տալիս : Մեծ աղղեցղություն ունի նաև Թ. Ն. աղղման տեղղղությունը. վորքան յերկար ժամանակի ընթացղղում և աղղում թույնը, այնքան ավելի մեծ է թունավորման հնարավորղղությունը : Ասածներս ամենաղղորճնական նշանակղղությունն ունեն ջիմիական պայքարի կաղմակերպման տեսակետղղց : Այսպես, որինակ, Փումիգացիայի ժամանակ քանի բարձր է ջերմաստիճանը, այնքան ավելի ցածր են վերցնում թույնի կոնցենտրացիան, և, ընղհակառակը, յեթե ցածր է ջերմաստիճանը, վերցնում են ավելի բարձր կոնցենտրացիա և ավելի յերկարատև եկոպղղղցիա : Յերիտասարղ թրթուրների դեմ ողղտաղղորճում են կոնտակտ Թ. Ն. -ի ավելի թույլ լուծղղթներ, քան ավելի հասակավոր թրթուրների դեմ, վորոնք ավելի կոշտացած և դժվար թափանցղղ մաչղ ունեն :

Այղպիսով, թունավորման սիլընական Փաղան կախված է դիսավորապես Թ. Ն. Փղղղկղղջիմիական վիճակղղց, թաղանղի

ընույթից, ջերմաստիճանից, կոնցենտրացիայից և թ. Ն. աղբ-  
ման տեվոդուլից յունկից :

Թունափորման յերկրորդ փուլի ժամանակ կատարվում է թու-  
նափորման բուն պրոցեսը : Բջիջի մեջ տեղի յեն ունենում բազ-  
մատեսակ պրոցեսներ՝ ոգսիզացում և վերականգնում հիմքային  
միացությունների առաջացումը թթվայիններին զուգընթաց,  
մասնիկների մեծության փոփոխումը՝ կոազուլացիա և պեպտի-  
նացում և այլն : Թ. Ն. մուտքը բջիջներին մեջ առաջ է բերում  
այդ պրոցեսների նորմալ ընթացքի խանգարում : Թունափորման  
յերկրորդ փուլի դեպքում հիմնական դերը պատկանում է թույ-  
նի բաղադրությանը, այսպես որինակ՝ արսենի կամ Փտորի ա-  
տամի ներկայությունը թ. Ն. մեջ պայմանափորում է վերջինիս  
բարձր թունոնակությունը, վորի պատճառով արսենը և Փտորը  
մեծ դործածություն ունեն վորպես ինսեկտիսիզներ : Քիմիական  
փոփոխություններն որդանիզմի մեջ կարող են ավելի արագ և  
ավելի խորը դնալ բարձր ջերմաստիճանի և թույնի յերկարատե-  
ազդման դեպքում : Բացի թ. Ն. ի քիմիական հատկություննե-  
րից ներբջիջային փոփոխությունները կարող են առաջանալ նաև  
Ֆիզիկոքիմիական պատճառներով, այսպես որինակ, թ. Ն. կա-  
րող է նպաստել պլազմայի լուծված կորիզները անյուժեղի փի-  
ճակի վերածելուն :

Թունափորման ընթացքի ընդհանուր տեսակետից կարելով է  
նաև այն, թե տվյալ որդանիզմը ինչ չափով է ընդունակ իր մեջ  
մտած թ. Ն. արտածելու : Քանի շուտ և շատ կկարողանա որ-  
դանիզմը իր մեջ մտած թ. Ն. արտածել, այնքան ավելի պակաս  
կլինի թունափորման հալանականալթյունը : Հետեվապես անհրա-  
ժեշտ է ողտադործել այնպիսի նյութեր, վորոնք թ. Ն. ին ավե-  
լի յերկար կպահեն որդանիզմի մեջ, որինակ, կոազացյունն մի-  
ջատների ստամոքսի սպաղմա :

Տարբեր մասատու որդանիզմներ տարբեր կերպ են հակադ-  
րում տարբեր թ. Ն. ի հանդեպ : Հաճախ նկատվում է նաև  
տարբեր դեպքություն տվյալ մասատուի, զարգացման տար-  
բեր ստադիաների կողմից : Այսպես, որինակ, թունափոր դադե-  
րի հանդեպ ամենից ավելի դիմացկուն են միջատների ձվերը,  
այնուհետև հարսնյակները, թրթուրները և վերջապես բոլո-  
րից շուտ թունափորվում են թիթեռները : Մեծահասակ թրթուր-  
ներն ավելի դիմացկուն են քան ջահեղները : Եղ միջատներն ավե-  
լի դիմացկուն են քան արունները և այլն :

Քիմիական պայքարի ժամանակ լայլ եֆֆեկտ ստանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել բոլոր այն ֆակտորները, վորոնք այս կամ այն կերպ կարող են անդրադառնալ պայքարի վորակի վրա: Բոլոր տեսակի վնասատու որդանիզմների համար պայքարի մի ընդհանուր դեղատոմս դոյություն չունի և չի ել կարող ունենալ: Ամեն մի առանձին տեսակ վնասատուի համար, ամեն մի առանձին կոնկրետ պայմանում, պայքարի յեղած միջոցներից համապատասխանի ընտրումը և նրա ճիշտ գործադրումը միայն կարող է քիմիական պայքարի ցանկացած եֆֆեկտն ապահովել:

## ՔՈՒՆԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Գյուղատնտեսական տոկսիկոլոգիայի բազմակողմանիությունը և նրա զարգացման ներկա միճակը հնարավորություն չեն տալիս թունավոր նյութերը դասակարգելու մի ընդհանուր սխեմեով: Թ. Ն.—ի դասակարգման համար առաջնորդվում են մի քանի սկզբունքներով:

Թունավոր նյութերի դասակարգումը ըստ նրանց ֆիզիկալ բազադրուքյան— այս դեպքում թունավոր նյութերը դասակարգվում են ըստ իրենց քիմիական հատկությունների սովորական ձեկերով՝ խմբերով, վալենտականությամբ և այլն, անկախ նրանց հանդես բերած ֆիզիոլոգիական հատկություններից:

Թունավոր նյութերի դասակարգումն ըստ որքնկտմերի, վարակ դեմ նրանք ոգտագործում են—այս դեպքում Թ. Ն. դասակարգվում են անկախ նրանց քիմիական բազադրությունից և կոչվում են 1) ինսեկտիսիդներ— (լատինական insectum խոսքից) միջնապատան. կոչվում են այն թույները, վորոնք գործադրվում են վնասատու միջատներին սպանելու— վոչնչացնելու համար: Դրականության մեջ հաճախ գործածում են նաև լարվիցիտ (թրթուրասպան), ուլոսիտ (ձվասպան) տերմինները: Այնուհետև լատինական ստորածում ունի ազարվիցիտ տերմինը, վորը կազմված է լատինական acarus (տիզ) խոսքից— տիզասպան:

2. Փունդիսիդներ (լատինական fungus խոսքից) կոչվում են այն Թ. Ն. վորոնք ոգտագործվում են սնկային հիվանդությունների դեմ պայքարելու համար:

3. Բակտերիցիդներ—բակտերիալ հիվանդությունների դեմ ոգտագործվող թունավոր նյութեր:

4. Զոոտիղներ—ընդունված են կոչել այն Թ. Ն., վորոնք գործադրվում են կրծողների դեմ (մկներ, սուսլիկներ և այլն)։ Պետք է ասել, վոր այս տերմինը ճիշտ չի արտահայտում իրա իմաստը, այնքան վորքան լատինական ZOO տերմինը վերաբերում է կենդանիներին ընդհանրապես, բայց քանի վոր տերմինը մտել է դրականության մեջ, մենք ևս կոչաադործենք այն։

5. Հերերիսիղներ—կոչվում են այն Թ. Ն., վորոնք ողտադործվում են պարագիտ և մոլախոտ բույսերը վորջնչացնելու համար։ Թուևավոր նյութերի դասակարգումն ըստ նրանց ազդման մեխանիզմի— այս տեսակետից Թ. Ն. բաժանվում են՝ 1<sup>o</sup>. աղիքային Թ. Ն., վորոնք մնասատու միջատների կերի հետ միասին ընկնելով նրանց ստամոքսի մեջ՝ առաջ են բերում թունաՎորում։ Այս տեսակ Թ. Ն. կարող են գործադրվել այն տեսակ մնասատուների դեմ, վորոնք ունեն կրծող բերանի մասեր և վորոշ չափով ծծող միջատներից— ճանճերի դեմ։

2. Կոնտակտ թույներ— կոչվում են այն Թ. Ն., վորոնց գործադրումը պայմանավորված է նրանց կոնտակտ ազդեցությամբ։ Թ. Ն., ընկնելով բաց կյանք վարող որդանիզմի վրա, սպանում է նրան։ Այս խումբ Թ. Ն. ի շարքին կարելի չե դասել նաև ֆունգիսիղներին։

3. Ֆումիգանդներ—Ֆումիգանդներ են կոչվում այն Թ. Ն., վորոնք թունավորում են մնասատու որդանիզմներին՝ գաղ կամ գորրջի վիճակում թափանցելով նրանց որդանիզմի մեջ՝ շնչատուփյան սխտեմի միջոցով։

Վերեվ բերված դասակարգումների յերեք ձևն էլ ստուապում են միակողմանիությամբ և անշուշտ նրանց պետք է ընդունել վորպես պայմանական, որինակ վերցնենք դասակարգման յերրորդ ձևվը, տիպիկ աղիքային թույն հանդիսացող արսենը շատ հաճախ հանդես է բերում կոնտակտ ազդեցություն և ընդհակառակը, այնպիսի տիպիկ կոնտակտ թույն ինչպիսին է նիկոտինը ազդում է և վորպես աղիքային, և՛ վորպես ֆումիգանտ։ Անտարակույս է այն, վոր գիտության հետագա զարգացումը մեզ հնարավորություն կտա մի ընդհանուր սխտեմով դասակարգել Թ. Ն. ըրը յեղնելով նրանց քիմիզմից և հանդես բերած ֆիզիոլոգիական եֆֆեկտից, ինչպես այդ արդեն վորոշ չափով հաջողվում է բժշկական տոկսիկոլոգիայի մեջ։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՈԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԹՈՒՆԱՎՈՐ  
ՆՅՈՒԹԵՐԻՑ ՊԱՅԱՆՁՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գոյություն ունեցող բազմաթիւ Թ. Ն. շատ քչերն են, վորոնք դործադրվում են գյուղատնտեսութեան մեջ վորպես ինսեկտոֆունդիսիդներ: Վորպեսզի տվյալ Թ. Ն. պիտանի լինի վորպես ինսեկտոֆունդիսիդ պետք է բաւարարի հետեյալ պահանջներին.

1. Ունենա բարձր թունունակություն այն որդանիզմների նկատմամբ, վորոնց դեմ ուղտադործվելու յե տվյալ Թ. Ն.:

2. Յածր թունունակություն բույսերի նկատմամբ, յեթե տվյալ Թ. Ն. ուղտադործվելու յե այնպիսի վնասատու որդանիզմների դեմ, վորոնք սպրում են բոլակերի վրա: Անհրաժեշտ է, վոր Թ. Ն.՝ վոչնչացնելով վնասատու որդանիզմներին չհնասի բույսին, կամ յեթե ուղտադործվում է սերմերի ախտահանման համար, չաղբի նրանց ծլունակութեան վրա: Բայց պետք է ասել, վոր շատ քիչ բացառութեամբ (որինակ բուսական թույները) բոլոր Թ. Ն. թունունակ են և վնասատու որդանիզմներին և բույսերի համար, տարբերութեանը միայն թունունակութեան աստիճանների մեջ է: Վորպես ինսեկտոֆունդիսիդներ կարող են դործադրվել միայն այն Թ. Ն. վորոնք կիրառական քանակութեաններով վոչնչացնելով վնասատու որդանիզմներին չոչափելի վնաս չեն հասցնում պաշտպանվելիք բույսերին: Վորքան մեծ է Թ. Ն. կոնցենտրացիան, վորը կարող է տեղիք տալ պաշտպանվող բույսի զղալի վնասվածքների, և քանի քիչ է Թ. Ն. կոնցենտրացիան վնասատու որդանիզմին վոչնչացնելու համար, այնքան այդ Թ. Ն. լավորակ ինսեկտոֆունդիսիդ կարող է համարվել:

Ինսեկտոֆունդիսիդների պիտանելիութեանը այս տեսակետից ընդունված է արտահայտել քեմիտերապիայիկ ինդեքսով.

$$X = \frac{D}{d}$$

Վորտեղ D Թ. Ն. — է մինիմալ քանակութեանն է, վորը կարող է սպանել վնասատու որդանիզմներին, d Թ. Ն. — է մաքսիմալ թույլատրելի քանակն է, վորը պաշտպանվող որբիկախ համար կարող է անվտանգ լինել: Վորքան փոքր է քեմիտերապիայիկ ինդեքսի ցուցանիշը, այնքան Թ. Ն. արժեքավոր է համարվում վորպես ինսեկտոֆունդիսիդ: Բերենք մի որինակ, ցորենի հատիկների փորձնական ախտահանումից սուլեմայով և սնդիկա-

ալիցիլիական թթվի նատրիումի աղով՝ ստացվել են հետևյալ ուշանիչները D և d համար—

	D	d
ուլեմա	0,025	0,1
Սալ. թթվի նատր. աղը	2,0	2,5
	այսպիսով սուլեմայի գեղբում	
$X = \frac{0,025}{0,1} = 0,25$	, իսկ սնդ. Սալ. թթվի նատրիումի աղի	
ամար $X = \frac{2,0}{2,5} = 0,8$	, հաեակպես սուլեման վորպես ախտահանիչ նյութ	
վելի գերադասելի յե համարվում:		

Ընդունված է, վոր ինսեկտոֆունդիսիդների քեմիոտերապեվտիկ ինդեքսը պետք է լինի 0,5 վոչ ալեյի, հակառակ դեպում տվյալ թ. ն. վորպես ինսեկտոֆունդիսիդ ոգտադործելը դառնա վտանգավոր:

3. Ինսեկտոֆունդիսիդների կարևոր հատկութուններից է աև նրանց պակաս թունունակութունը մարդկանց և ոգտակարենդանիներէ համար: Ներկայումս աշխատում են ստեղծել այնպիսի թ. ն., վորոնց թունունակութունը տաքարյուն կենդանիների նկատմամբ մինիմումի հասցվի. այս պահանջի անհրաժեշտութունն ակնհայտ է: Ներկայումս ոգտադործվող ինսեկտոֆունդիսիդներից շատ քչերն են անվտանգ մարդկանց համար և աստ հաճախ քիմիական պայքարի ընթացքում անհրաժեշտ և վտում ձեռք առնել մի շարք նախադրուշական միջոցառումներ— ժբախտ պատահարները կանխելու համար, իսկ վերջին հանդանքն անշուշտ դժվարացնում և թանդացնում է ձեռնարկումը, վորոչ պայմաններում ուղղակի անհնար է դարձնում ինսեկտոֆունդիսիդի ոգտադործումը:

4. Եթանութունը և մասսայականութունը ինսեկտոֆունդիսիդների համար նույնպես շատ կարևոր հանդամանք է:

Գյուղատնտեսության մեջ շատ հաճախ անհրաժեշտ է լիում պայքարել միլիոնավոր հեկտար տարածութունների վրա այս կամ այն վնասատուի դեմ, պարզ է, վոր յեթե տվյալ թ. ն. չիչ է կամ շատ թանդ, ապա նրա դործադրումը տնտեսապես չի սրդարացնի իրեն, ինչքան ել տվյալ ինսեկտոֆունդիսիդը ուրիչ սրժեքավոր հատկանիչներ ունենա:

5. Ինսեկտոֆունդիսիդների հեշտ դործադրելիութունը և տանդարտ լինելը նույնպես կարևոր հանդամանք է նրանց ոգտադործման տեսակետից: Ինսեկտոֆունդիսիդները պետք է լի-

նեն պարզ և հարմար ինչպես տեղափոխելու և պահելու, այնպես  
եւ դորձադրելու տեսակետից: Մի շարք թույնների հեշտ բուն  
վելիությունը (որինակ ծծմբածխածինը) դժվարացնում և ն  
լայն չափերով ուղտադործումը, չնայած այն հանդամանքին, որ  
նա իր ուրիշ հատկություններով գերազանցում և մնացած Ֆ  
միզանտներին, (չի աղբում սերմերի ծլունակության վրա  
այն): Այնուհետև, կարևոր և, վորպեսզի ինտեկտֆունդիս  
միշտ արտադրվի նույնանման—ստանդարտ\* և կայուն թույ  
վոր հատկություններով՝ հակառակ դեպքում նրա դորձադրո  
դանում և համախ դժվար ու վտանգալիք. այսպես, որին  
չառ թույններ յերկար պահվելուց ուժեղացնում են իրենց այ  
հատկությունները:

Ներկայումս դորձադրվող ինտեկտֆունդիսիդներին շ  
բջևն են, վորոնք սծախած են վերև բերված բոլոր հատկ  
թյուններով և նրանց պիտանիությունը չափվում և նրանց ուն  
ցած դրական և բացասական կողմերի գերակշռությամբ:

## ՀԱՍԿԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՆՍԵԿՏՈՅՈՒՆԳԻՍԻԴՆԵՐԻ ԿՈՆ ՅԵՆՏՐԱՅՎԱՅԻ ԴՈՋԱՅԻ ՅԵՎ ԾԱԽՍՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԻ ՄԱՍ

Ինտեկտֆունդիսիդների դորձադրության ժամանակ նր  
դորձաձվող քանակությունները անփանակոչելու համար ողտո  
են մի քանի տերմիններից, վորոնցից յուրաքանչյուրին համ  
պատասխանում և վորոշ պայմանական բովանդակություն:

Դոզա կամ դոզիտովիա հասկացողությունը վերցված և ի  
ժշկական ֆարմակոլոգիայից, վորտեղ դոզա տերմինի տ  
հասկանում են թույնի այն քանակը, վորը մտցվում և որդան  
մի ներսը և կարող է ապրելը ևֆֆեկա առաջ բերել: Այս տ  
սակետից տարբերվում են 1. լետալ դոզա (մահացու), 2. սու  
լետալ (միառակար) դոզա, 3. բուժիչ դոզա: Դոզա տերմ  
ինտեկտֆունդիսիդների վերաբերյալ կարելի չե ողտադործել մ  
այն այն դեպքում, յերբ մենք դորձ ունենք աղիքային թ. ն  
հարաբերական թունունակությունը վորոշելու հետ և յերբ ճի

\* Ամեն մի ստանձին ինտեկտֆունդիսիդի համար ՄՏՈ-ի կողմից մշ  
վում են ստանդարտի հատուկ պայմաններ՝ ՈՍՏ (отдел стандартизац  
трусда) վորոնք հարաշարենելու դեպքում արգելվում և թունավոր նյութի ո  
տազործումը Ամեն մի ստանձին թ. ն. ստանդարտի ժամին կիտոսներ աա  
ձին պրեպարատների նկարագրման ժամանակ:

բայով չափում ենք միջատի կամ կրծողի որդանիզմի մեջ մե-  
թոն թ.Ն.-ի քանակը:

Գոգա տերմինի դործադրման մնացած բոլոր դեպքերը պետք  
ընդունել սխալ:

Կոնցենտրացիա—կոչվում է տվյալ թ.Ն.-ի այն քանակը,  
որը գտնվում է ողի, հեղուկի կամ փոշու կշռային կամ ծավա-  
կին մեկ միավորում: Թ.Ն.-ի կոնցենտրացիան ընդհանրապես  
դունված է արտահայտել տոկոսներով, այսպես որինակ, ա-  
ռում են 0,3% արտենատ կալցիումի ջրային սուսպենզիա, 0,75%  
որդոյան հեղուկ, 0,1% նիկոտին սուլֆատի ջրային լուծույթ,  
5% HCN (ողի մեջ) և այլն: Հաճախ կոնցենտրացիան արտա-  
այտում են ուղղակի ցույց տալով թ.Ն.-ի հարաբերությունը  
հեղուկին, փոշի պրեկարատին կամ դրավչանյութին, այսպես,  
որինակ, ասում են 1 մաս նիկոտին սուլֆատ 1000 մաս ջրին,  
եկ մաս արտենատ կալցիումը 10 մաս կողմնակի խառնուրդին,  
եկ մաս փարիզյան կանաչ 30 մաս դրավչանյութին, կամ թե  
30 դր. ջրալիկրին մեկ խորանարդ մետր տարածույթյանը և  
այլն:

Մախաման նորմա յե կոչվում թույնի այն քանակը, վորն  
մահաբեշտ է վորոշ տարածույթյան վրա պայքար կարմակեր-  
բելու համար, այսպես որինակ, ասում են բամբակի մեկ հեկ-  
տար տարածույթյան վրա լիճի դեմ պայքարելու համար տն-  
րածեշտ է ոգտադործել 1500 լիտր անարզին սուլֆատի ջրա-  
ին լուծույթ: Իմանալով վոր տվյալ դեպքում անարզին սուլ-  
ֆատը ոգտադործում են 0,1%-նոց կարող ենք հաշվել ծախսման  
որման, վորը տվյալ դեպքում հավասար կլինի 1½ կգր.:

Փոշի պրեկարատների վերաբերյալ ընդունված է ասել 30-  
50 կգր. ծծմբի փոշի մեկ հեկտարին կամ 10 կգր. արտենատ  
կալցիում մեկ հեկտարին և այլն:

Ախտահանիչների դեպքում արտահայտում են կ գր. տոննե-  
րով. այսպես որինակ, 2 կգր. ԱԲ պրեկարատը մեկ տոնն սեր-  
բացին և այլն:

Ֆունիզանտների դեպքում ասում են՝ 20 գր. Ֆունիզանտ  
ենքի մեկ խորանարդ մետրին և այլն:

Գրավչանյութերի դեպքում իմանալով պարտատի դրավչա-  
նյութի ծախսը և նրա մեջ յեղած թույնի կոնցենտրացիան, հաշ-  
վում են թ.Ն.-ի և դրավչանյութի ծախսման նորմաները:

Թունավոր նյութերի ողտաղբոծման վործի պակասութիւնը, ինտեկտֆունդիսիդներէց շատերի դործաղբոծման նորութիւն ինչպէս նաև այն հանդամանքը, վոր այս կամ այն ինտեկտֆունդիսիդի թունունակութեան կոնկրետ արտահայտութիւնը հանդիսացող եֆֆեկտիվութիւնը պայմանավորվում է մի շարքէին և արտաքին կարգի պայմաններով՝ վնասատվի վիճակի մետերոլոգիական պայմանները, ձեռքի տակ յեղած տեխնիկական միջոցները (սրսկիչներ, փոշոտիչներ, ֆումիգացիայի յեթարկվող շենքերի վիճակը) և այլն, դժվարացնում են նախորդ վորոշել այս կամ այն ինտեկտֆունդիսիդի ճիշտ կոնցենտրացիան կամ ծախսման նորման: Այդ պատճառով դասազրքերու առաջարկված ծախսման նորմաները և կոնցենտրացիաները աբսոլում են մեծ ինտերվալներով, այսպէս որինակ, դրում է ծծմբի փոշու ծախսման նորման մեկ հեկտար բամբակենու համար 25—50 կգր. քլորպիկրինի ծախսման նորման մեկ խորանարդ մետր շենքի համար 15—30 գր. և այլն: Պարզ է, վոր այս կամ այն ինտեկտֆունդիսիդի համար կոնցենտրացիան կամ ծախսման նորման ճիշտ կերպով կարելի յե վորոշել՝ ամեն մի ձեռնարկութեան դեպքում կոնկրետ հաշվի առնելով տվյալ ինտեկտֆունդիսիդի դործաղբոծման հետ կապված բոլոր առանձնահատկութիւնները:

## ԻՆՍԵԿՏՈՑԻՆՍԻՍԻԳՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Ինչպէս բոլոր քիմիական նյութերը, այնպէս և ինտեկտֆունդիսիդները կարող են լինել պիւնդ, հեղուկ և գազային վիճակում: Նրանց ֆիզիկական վիճակն ու հատկութիւնները ինչպէս նաև մշակման յենթակա որչեկտի առանձնահատկութիւնները վորոշում են այս կամ այն ինտեկտֆունդիսիդի դործաղբոծման ձեւը:

Ինտեկտֆունդիսիդների դործաղբոծման ձեւերը ըստ նրանց կերպածման տեխնիկայի կարելի յե դասակարգել հետևյալ կերպով:

1. Փոշոտում,
2. Սրսկում,
3. Ֆումիգացիա և այրողութիւն,
4. Թունավոր դրամիչանյութեր,

5. Սերմերի ախտահանում ,

6. Ներքին տերապեա :

Այս կամ այն թունավոր նյութի կիրառման ձևի ընտրու-  
թյունը պայմանավորվում է մի շարք հանգամանքներով :

1. Պրեպարատի ֆիզիկական և ֆիզիոքիմիական հատկու-  
թյունները՝ լուծվելու, փոշոտվելու—զաղանալու և այլն :

2. Թունավորման յենթակա որյեկտի առանձնահատկու-  
թյունները և նրա ֆիզիոլոգիական վիճակը (սունկ, միջատ,  
կրծող թե ծծող, նրա ապրելակերպը և այլն) :

3. Պայքարի կազմակերպման վայրը՝ դաշտ, այգի թե ծած-  
կատուն :

4. Ձևքի տակ յեղած ինսեկտոֆունդիտիզների ասորտի-  
մենտը :

5. Տեխնիկական և բնական հարմարություններ—յեղած ազ-  
պարատների տեսակը, լավորակ ջրի մոտիկությունը :

6. Եկոլոգիական պայմանները և այլն :

Փոշոտում : Փոշոտում է կոչվում թ.Ն. գործադրման այն  
յեղանակը, յերբ մենք թ.Ն. համապատասխան մեքենաների ուղ-  
նությամբ փոշոտում ենք, վարակված բույսերն հավասարաչափ  
ծածկելով թունավոր փոշով :

Վորպեսզի այս կամ այն թ.Ն. փոշի վիճակում ուղտադործե-  
լի լինի, պետք է վոր այն ունենա մի շարք հատկություններ—  
դրանցից կարևորներն են .

Համապատասխան մանրվածք—վորը հանդիսանում է նրա  
առաջնակարգ հատկություններից մեկը : Մանրվածության աս-  
տիճանը մեծ չափով պայմանավորում է փոշի պրեպարատի—  
փոշոտելիությունը, կալչողականությունը, ինչպես նաև թունու-  
նակությունը : Վորքան մանր է փոշին, այնքան մեծ է նրա մտա-  
նիկների մակերեսը և, հետևապես, այնքան մեծ է նրա թունա-  
տու մակերեսը : Նայած պրեպարատի ելությանը, նրա գործա-  
դրման նպատակներին և այլն, ամեն մի պրեպարատի համար  
ՈՍՏ-ի կողմից մշակվում է մանրվածքության համապատասխան  
ուտիճան :

Փոշի պրեպարատների մանրվածությունը չափում են հատուկ  
մագլերի ուղնությամբ և արտահայտում մեկ քառակուսի սանտի-  
մետրի վրա յեղած անցքերի թվով : Շատ հաճախ մասնիկների  
մեծությունը տրվում է նաև մեշերով, վորը անդլերեն հանգույց

խոսքն և և ցույց և տալիս մեկ դժային դարձի վրա յեղած անցքերի թիվը: Այս չափսերից մեկը մյուսին վերածելու համար ուղարկում են հետևյալ աղյուսակից՝

Մեծ՝ մեկ դժային դրամի վրա յեղած անցքերի թիվը	Մեկ քառակուսի մմ. վրա յեղած անցքերի թիվը	Մաղկց անցնող մասնիկների դիամետրը
30	144	0,49 մ.մ. փոքր
70	576	0,25 > >
150	3600	0,10 > >
175	4900	0,08 > >
200	6400	0,07 > >
250	10000	0,055 > >
300	14000	0,045 > >

Կնճիկացում և փոշոտելիություն: Թ.Ն. շատերը հաճախ պահելու ինչպես նաև փոշոտելու ժամանակ կնճիկանում են և խանդարում Թ.Ն.—ը հավասարաչափ բաշխելուն (որինակ ծծումբը), այս հատկութունն անշուշտ բացասական և և աշխատում են զանազան միջոցներով պայքարել նրա դեմ (խառնում են կողմնակի խառնուրդներ, չորացնում են և այլն): Կնճիկացումը կախված է փոշի պրեպարատի հիդրոսկոպիկ լինելուց, ելեկտրական լիցքից, ինչպես նաև քիմիական փոփոխութուններից, վորոնք կարող են տեղի ունենալ պահելու ժամանակ:

Թ.Ն. պետք է լինի այնպիսին, վոր փոշոտելու ժամանակ հնարավորին չափ լավ ծածկի փոշոտվող բույսը, իսկ այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է, վորպեսզի նա ունենա լավ փոշոտելիություն: Վերջինս կախված է—փոշոտող ապարատի տիպից, ինչպես նաև փոշու մասնիկների մեծությունից և տեսակարար կշռից:

Փոշին շատ մանր լինելու դեպքում, յեթե նա ունի նաև փոքր տեսակարար կշիռ, փոշոտելիս կտարվի քամու հոսանքների կողմից: Ընդհակառակը փոշու մեծ մասնիկների և մեծ տեսակարար կշռի դեպքում՝ փոշոտման ժամանակ կստացվի փոշու նեղ ալիք, մասնիկները շուտ կնստեն, վատ կկաշեն և լավ չեն ծածկի բույսերին:

Բոլորից շատ զործադրելի թունավոր նյութերը ունենում են 175—200 մեզ. մասնիկների մեծությունը և 1,3—2,5 տեսակարար կշիռ: Այսպիսի տեսակարար կշռի և մասնիկների մեծության դեպքում պրեպարատը ունենում է լավ փոշոտելիություն, փոշու ալիքը լավ շարժում է բույսը և խիտ կերպով ծածկում այն բոլոր կողմերից:

Կաչողականություն և պահունակություն: Վորպեպի այս կամ այն թ.Ն. համապատասխան էֆֆեկտ տա, անհրաժեշտ է, փորպեպի նա փոշոտելիս կաշի և պահվի բույսի վրա. այս հատկությունները հասկապես կարևոր են աղիքային ինսեկտիցներին և Ֆունդիսիդների զործադրման դեպքում: Այդ իսկ պատճառով փոշի պրեպարատների պատրաստելու ժամանակ հատուկ ուշադրություն են դարձնում նրանց կաշող և պահվող հատկություններ տալու վրա:

Վերջիններս մեծ չափով կախված են՝

1. Փոշու մասնիկների մեծությունից և տեսակարար կշռից:

2. Փոշու մասնիկների ձևից, նկատված է, փոր սֆերիկ փոշու մասնիկներն ավելի վատ են կաշում բույսերին, քան տձև և

2007

18123

խորդուրդը մակերես ունեցող մասնիկները:

3. Մասնիկների ելեկտրական լիցքից, փոքր մեծ չափով ազդում է փոշու կաչողականության վրա: Պարզված է, փոր բույսի մակերեսն ընդհանրապես ունենում է բացասական լիցք, հետևապես յեթե փոշոտվող մասնիկները փոշոտելուց դուրս դալու մոմենտին նույնպես ունենում են բացասական լիցք, ապա այդ դեպքում նրանք կլանվեն բույսի կողմից և չեն կաշի նրանց, իսկ դրական լիցքի դեպքում՝ ընդհակառակը:

Հաճախ փոշի պրեպարատների կաչողականությունը լավացնելու համար խառնում են նրանց հետ դանադան խառնուրդներ— բոնիֆիկատորներ: Վերջերս մեծ հաջողությամբ փորձարկվում է հանքային յուղերի ոգտազործումը այս նպատակների համար, փորոնք զգալի չափով (մինչև 50%-ով) ավելացնում են փոշի պրեպարատների կաչողականությունը (որինակ նաթրումի ֆտորոսելիկատին):

Նույն նպատակին հասնելու, ինչպես նաև պրեպարատի փոշոտելիությունը լավացնելու համար, ոգտազործում են նույնպես դանադան փոշի խառնուրդներ—ինդրիդիկատներ՝ տալի փոշի, հանդած կրի փոշի, մոխիր, դանադան տեսակի կավեր և



այլն: Ինգրիդիկներն են խառնում հաճախ նույնպես նպատակ ունենալով մեծացնել փոշի Թ. Ն.—ի ընդհանուր մասսան, վորպեսզի հնարավոր լինի յեղած տեխնիկական հնարավորություններով քիչ քանակութեամբ թունավոր փոշին հավասարաչափ տարածելու փոշոտվող դաշտի պահանջվող տարածության վրա: Ինգրիդիկներն եւ բոնիֆիկատորներն գործածման բոլոր դեպքերում նրանք պետք է լինեն այնպիսին, վոր չազդեն հիմնական Թ. Ն.—ի թունունակութեան վրա ինչպես նաև չուժեղացնեն նրա այրող հատկութեանները:

Վորոչ դեպքերում փոշի Թ. Ն.—ին խառնում են զանազան դունավոր նյութեր, վորպեսզի փոշոտելու ժամանակ հնարավոր լինի նկատելի դարձնել մշակված բույսերը: Այս հանգամանքը կարևոր է նաև փոշու հավասար տարածվելը ստուգելու համար:

Փոշի պրեպարատների գործադրման ժամանակ անհրաժեշտ է լինում հաշվի առնել նաև արտաքին պայմանները, վորոնցից ամենից կարևորը քամու առկայութեանն է: Վոչ մի ուրիշ ձեռնարկման ժամանակ քամին այն կարևոր նշանակութեանն ունենալ չի կարող, վորքան փոշոտման ժամանակ. թեթև քամին անգամ կարող է բացասաբար անդրադառնալ փոշոտման վրա—քամին խանգարում է Թ. Ն. հավասարաչափ տարածվելուն, առաջացնելով մի տեղում Թ. Ն.—ի ավելորդ կուտակումներ, իսկ մնացածում՝ բացուտներ:

Շատ դեպքերում անհրաժեշտ է լինում քամուց խուսափելու համար աշխատել դիշերները կամ առավոտյան վաղ:

Փոշոտումից հետո ուժեղ անձրևներ լինելու դեպքում անհրաժեշտ է լինում փոշոտումը կրկնել:

Փոշոտման վրա շատ դրական է ազդում առավոտյան ցողը, վորը մեծապես նպաստում է փոշու մասնիկների բույսերին կլայզելուն: Այդ իսկ պատճառով առավոտյան վաղ, ցողով կատարած փոշոտումը միշտ տալիս է լավ արդյունք: Հաճախ նույն նպատակին հասնելու համար նախքան փոշոտումը սրսկում են ջրով: Այս մեթոդը գործադրում են Միջին Ասիայի բամբակացան ստախանովականները ծծումբը փոշոտելիս:

Փոշի պրեպարատները գործադրելու համար ոգտադործվում են՝

1. Չեռքի, մեջքի փոշոտիչներ,
2. ձիաքարչ փոշոտիչներ,
3. ավտո և արակտորային փոշոտիչներ,
4. Ավիոփոշոտիչներ:

Փոշոտման ժամանակ այս կամ այն մեքենայի ընտրությունը կախված է առաջին հերթին ձեռքի տակ յեղած մեքենաների տեսակներից, տարվելիք աշխատանքի ծավալից, յերբ մնաստուն է կամ հիվանդությունը հանդես են յեկել ոջախներով փոքր տարածությունների վրա, ապա այս դեպքում անհրաժեշտ չի լինում հոր մեքենաների ոգտագործումը և աշխատանքը տարվում է ձեռքի կամ մեջքի փոշոտիչներով: Ընդհակառակը յեթե մնաստուն հանդես է յեկել համատարած կերպով և մեծ տարածությունների վրա, ապա այս դեպքում անհրաժեշտ է ոգտագործել աջակիսի մեքենաներ, վորոնք հնարավորություն են տալիս կարճ ժամանակամիջոցում մեծ տարածություններ մշակելու (այլիս փոշոտում, տրակտորային փոշոտում և այլն):

Արտկում: Արտկում է կոչվում ինստրիւմենտների գործադրման այն յեղանակը, յերբ մենք այս կամ այն Թ.Ն. -ը գործադրում ենք հեղուկ վիճակում—ջրի հետ խառնված:

Հեղուկ վիճակում ոգտագործվող Թ.Ն. -ի կառուցվածքային սկզբունքները և նրանց տիպերը: Վորպեսզի հնարավոր լինի այս կամ այն Թ.Ն. -ը գործադրել հեղուկ վիճակում, անհրաժեշտ է, վոր այն վորեւէ կերպ խառնվի ջրի հետ: Այս տեսակետից հեղուկ վիճակում գործադրվող Թ.Ն. -ին կարելի յե բաժանել հետևյալ խմբերի՝

1. Թ. նյութեր, վորոնք ջրի մեջ դիտոցվելով առաջացնում են իսկական լուծույթներ (որինակ քլորական բարիումը):

2. Թ. նյութեր, վորոնք գործադրվում են սուսպենդիոն վիճակում, վորի դեպքում ջուրը հանդիսանում է դիսպերսիոն միջավայր, իսկ նրա մեջ կախված վիճակում գտնվում է Թ.Ն. փոշի մասնիկները: (որ. փարիզյան կանաչը, կալցիումի արսենատը և այլն): Այս տեսակի լուծույթների ավելի կատարելագործված ձևը պետք է համարել ծայրահեղ դիսպերսիայի յենթարկված փոշի պրեպարատների կոլոիդալ լուծույթները, որինակ կոլոիդալ ծծումբը:

3. Թ. նյութեր, վորոնք ջրի մեջ առաջացնում են եմուլսիաներ, վորի դեպքում ջուրը հանդիսանում է վորպես «դիսպերսիոն միջավայր», իսկ նրա մեջ Թ.Ն. -ի հեղուկ մասնիկները գտնվում են կախված վիճակում, առաջացնելով «դիսպերսիոն ֆազա»: Այս խմբին են պատկանում բոլոր տեսակի հանքային յուղերը, բուսական թույների կոնցենտրացիաները և այլն:

## ՏԱՐԲԵՐ ՁԵՎԵՐԸ

Թունավոր լուծույթի բնույթը ինչպես և սրակման տեխնիկան մեծ չափով կախված է սրակման նպատակադրումից, թե արդյոք սրկումը ինչ տիպի վնասատուի կամ հիվանդության դեմ է տարվում, ինչ պայմաններում և այլն: Այս տեսակետից կարելի չէ տարբերել սրակման յերկու ձևեր:

1. Տերապևտիկ նպատակով կատարվող սրկում, յերբ մենք նպատակ ենք դնում վոչնչացնել վնասատվին անմիջապես սրակման մոմենտին:

2. Պրոֆիլակտիկ, յերբ սրակումը կատարվում է այն նպատակով, վորպեսզի բույսը պաշտպանվի հետագա վարակումից կամ վոչնչացումից:

Առաջին տիպի սրակման շարքին են պատկանում գլխավորապես կոնտակտ ինսեկտիսիդների ուղտադործումը, իսկ յերկրորդ տիպին՝ ադիբային ինսեկտիսիդների և ֆունդիսիդների մեծ մասի դործադրումը: Սրակման այս յերկու տիպերի մեջ կարելի չէ նշել հետևյալ հիմնական տարբերությունը: Առաջինի դեպքում, նպատակ ունենալով վոչնչացնել վնասատուին թունավոր լուծույթի կոնտակտ ազդման միջոցով, մենք աշխատում ենք վորքան հնարավոր է լավ «թրջել» բույսը և նրա վրա վրա դառնալով վնասատու որդանիդմբ: Այս դեպքում հանդես և զալիս թունավոր լուծույթին «թրջողունակություն» տալու անհրաժեշտությունը, վորի դեպքում թունավորլուծույթի մասնիկները հսկայով սրկվող որչեկաի մակերեսին՝ թրջում են նրան բոլոր կողմերից: Այս տիպի սրակման ժամանակ հեղուկը առատ կերպով է դործադրվում, այնպես, վոր նրա կաթիլները թափվում են բույսի վրայից:

Պրոֆիլակտիկ սրակման դեպքում աշխատում են վորքան կարելի չէ քիչ թունավոր լուծույթ ուղտադործելով՝ ալելի շատ Թ.Ն. նոտեցնել և հնարավորին չափ յերկար ժամանակ Թ.Ն. պահել բույսի վրա: Այդ նպատակին հասնելու համար պատրաստում են այնպիսի լուծույթ և սրակումը կատարում այնպես, վոր թունավոր նյութի կաթիլները մանր և հալասարաչափ կերպով ծածկեն բույսի մակերեսը և, վոր գլխավորն և, չծորեն բույսի մակերեսի վրայով: Դրա համար թունավոր լուծույթին դարձնում են կոչող և պահունակ:

Ջրի վարակի վարդուսը և ընտրությունը: Չուրը հանդիսա-  
նայով թունավոր լուծույթների հիմնական կոմպոնենտը պայքարի  
չործում խաղում և առաջավոր դեր: Մի կողմ թողնելով այն  
հանդամանքը, վոր շատ հաճախ ջրի բայակայությունը պայքար-  
րի վայրում անհնար և դարձնում սրակման զործադրումը, ան-  
հրաժեշտ և խոսել ջրի վարակի մասին, մի խնդիր, վոր շատ հա-  
ճախ թերազնահատվում և քիմիական պայքարի ժամանակ, այն  
ինչ Չուրը զվալի շափով պայմանավորում և պայքարի եֆֆեկ-  
տիվությունը:

Չուրը կարող և ազդել ոչտազործվող թ.Ն.-ի քիմիական  
բաղադրության վրա, փոփոխելով նրա թունավոր հատկություն-  
ները, որ. նկատված և, վոր կոչա ջրերը սապոնացման յենթար-  
կելով պիրետրինները զվալի շափով դցում են պիրետրիումի  
պրեպարատների թունունակությունը, ընդհակառակը նիկոտին  
և անարադին սուլֆատների համար կոչա ջրերի ոչտազործումը  
շատ ցանկալի յե, վորովհետև նրանք նպաստում են ավելի թու-  
նունակ հիմնային նիկոտինի առաջանալուն:

Չուրը կարող և ուժեղացնել նաև թունավոր լուծույթները  
այրող հատկությունները:

Չուրը փոխելով թունավոր լուծույթների քիմիական բաղա-  
դրությունը, կարող և պատճառ դառնալ նաև թունավոր լու-  
ծույթի Ֆիզիկոքիմիական միճակի փոփոխության, աչսպես, ո-  
րինակ, նկատված և, վոր նատրիումի և կալիումի սապոնները  
կոչա ջրերում բաց անելիս առաջ և զալիս փոխանակման ուսու-  
ցիա, վորի հետևանքով առաջացած կալցիումի սապոնը կոագու-  
լյացիայի յե յենթարկվում և փաթիլակերպ նստվածք առաջացը-  
նում, վորը սրակման ժամանակ փակելով սրակիչի ծայրապա-  
նակների անցքերը խանգարում և սրակման նորմալ աշխատանք-  
ներին:

Կոչա ջրերը բացասաբար են անդրադառնում նաև հանքային  
յուզերի եմուլսիաների վրա, նպաստելով նրանց կոագուլյացիա-  
յին:

Ջրի հիմնական տիպերը: Բնության մեջ յեղած ջրերը ըն-  
դունված և դասակարգել ըստ իրենց կոչտության աստիճանի-  
կոչա և փափուկ ջրերի: Ջրի կոչտությունը մեծ մասամբ պայ-  
մանավորված և նրա մեջ կոլոիդալ և լուծված միճակում գտնված  
Ca-ի և Mg-ի աղերի քանակով, վորոնք ջրի մեջ գտնվում են  
վորպես բիկարբոնատներ և սուլֆատներ:

Սուսպենզիաներ: Ինչպես հայտնի յե թունավոր վոչ բոլոր նյութերն են լուծվում ջրի մեջ և վորոչ դեպքում անհրաժեշտ ե լինում նրանց ոգտագործել սուսպենզիոն վիճակում:

Լավորակ կայուն սուսպենզիաներ ստանալու համար պետք ե, վոր Թ.Ն.—ի մասնիկները լինեն հնարավորին չափ մանր և ունենան ջրի տեսակարար կշռին մոտ տեսակարար կշիռ: Սուսպենզիոն վիճակում ոգտագործվող Թ.Ն.—ի մեծ մասը ընդունակ չեն կայուն սուսպենզիաներ առաջացնելու և անհրաժեշտ ե լինում կողմնակի միջոցառումներ ձեռք առնել սուսպենզիաներին կայունություն տալու համար: Այդ ձեռնարկումներից ե ջրի տեսակարար կշռի ավելացումը: Հայտնի յե, վոր քանի քիչ ե ջրի և Թ.Ն.—ի տեսակարար կշիռներէ տարբերությունը, այնքան ավելի կայուն սուսպենզիա կստացվի և ընդհակառակը. հետևապես, յեթե հնարավոր լինի բարձրացնել ջրի տեսակարար կշիռը, ապա մենք դրանով նպաստած կլինենք սուսպենզիայի կայունացմանը:

Սուսպենզիաներին կայունություն տալու համար թունավոր լուծույթներին ավելացնում են—կայցիում կազեինատ, կրակաթ, սոսինձ, ժելատին և այլն:

Եմուլսիաներ: Քանի, վոր հեղուկ թ. նյութերից շատերը հեշտությամբ չեն խառնվում ջրի հետ, անհրաժեշտ ե լինում դիմել եմուլսիա պատրաստելու դանազան միջոցառումների:

Յեթե խառնենք հանքային յուղերից վորեւե մեկը ջրի հետ, ապա կտեսնենք վոր նրանք շատ արագ կերպով իրարից կանջատվեն՝ առաջացնելով յերկու տարբեր շերտ. այս հետևանք ե այն բանի, վոր նրանք խիստ կերպով տարբերվում են իրարից իրենց խտությամբ և փոխադարձորեն անլուծելի յեն: Սակայն նրանց իրար հետ ուժեղ կերպով խառնելով կարելի յե ստանալ մեխանիկական խառնուրդ, վորի դեպքում հեղուկներից մեկը մանր կաթիլներով տարածված կլինի մյուսի մեջ: Հեղուկը, վորը դանվում ե կաթիլների ձևով՝ դիսպերսիոն վիճակում հանդիսանում ե «դիսպերսիոն Փաղա» իսկ հեղուկը, վորի մեջ տարածված են այդ կաթիլները, առաջացնում են մշտական Փաղա կամ «դիսպերսիոն միջավայր»:

Այս տիպի խառնուրդները շատ անկայուն են և հեշտությամբ բաժանվում են յերկու շերտի: Կայունացման բացակայությունը բացատրվում ե յերկու Փաղերի սահմանում յեղած միջֆազային բարձր յարվածությամբ: Յեթե վորեւե կերպ պակաս

սեցնել այդ միջֆազային լարվածութիւնը, ապա խառնուրդը կոտանա ավելի մեծ կայունութիւն և կառավարչի եմուլսիա:

Միջֆազային լարվածութիւնը պակասեցնելուն հասնում են դիսպերսիոն միջավայրին համապատասխան նյութեր ավելացնելով, վորոնք եմուլգատորներ անուն են կրում:

Եմուլգատորի մոլեկուլները շրջապատելով դիսպերսիայի յենթարկված հեղուկի կաթիլները բարակ թաղանթով, խանգարում են նրանց իրար միանալուն: Վորպես եմուլգատորներ կարող են աշխարհի նյութեր ուղտագործվել, վորոնք ընդունակ են մակերեսային կոնցենտրացում առաջացնելու:

Մակերեսային կոնցենտրացում և կոչվում նյութերի այն ընդունակութիւնը, յերբ հեղուկի մեջ անհամաարաչափ տարածվելով, նրա մասնիկները դիսպերսիոն ֆազայի մակերեսի վրա առաջացնում են ավելի բարձր կոնցենտրացիա, քան հեղուկի մնացած մասում:

Յերբ մենք ավելացնում ենք եմուլգատոր, նա ձգտում է կենտրոնանալու (հավաքվելու) խոռոչների մակերեսի և մակերեսային այն շերտում, վորտեղ յուզի սֆերիկ մասնիկները շփվում են ջրի հետ, այդպիսով առաջացնելով յուզի կաթիլները շուրջը բարակ թաղանթ (մեկ մոլեկուլի հաստութեամբ) նրանց ստանձնացնում են իրարից և խանգարում կոոզուլյացիային:

Եմուլգատորներին կարելի յե բաժանել յերկու խմբի.

Ա. լուծվող և կլիսալուծվող եմուլգատորներ—որինակ սապոն, ժելատին, հիմքեր, սապոնին, գումիարաբիկ ալբումինատ, կադեյին, յուղադրկած կաթ և այլն:

Բ. չլուծվող եմուլգատորներ— խիստ մանրացված, որինակ կոլոիդալ ծծումբը, պոլիսուլֆիդը, տալիի փոշին, կոլոիդալ կապերը և այլն:

Բույսերի պաշտպանութեան պրակտիկայում ամենից շատ ուղտագործվող եմուլգատորը սասպոնն է, վորն ըստ Գրեյֆֆի, եմուլգացման ժամանակ հետեվյալ փոփոխութեաններն և կրում:

1. Սապոնի մի մասը տաղբարուծվում է ճարպաթթուների և հիմքի, վորոնցից ճարպաթթուն լուծվում և յուզի կողմից, իսկ հիմքերը ջրի, (սապոնի քայքայումը եմուլգացման ժամանակ ցանկալի չէ և գրանից խուսափելու համար ուղտագործում են հիմքի ավելցուկ պարունակող սապոններ): 2. Սապոնի մյուս մասը յուզի կաթիլների շուրջը թաղանթ է ստածացնում, վերջինիս հաստութեանը հասնում է մեկ մոլեկուլի, անկախ գոր-

ծաղրվող սաստիկ կոնցենարացիայից: Հաշված է, վոր ամեն մի գրամ սաստիկ կարող է 500—1000 քառակուսի մետր թաղանկ ստաջացնել, այնպես, վոր հատկապես եմուլգացիայի համար պահանջվող սաստիկ քանակը շատ քիչ է: 3. Սաղոնի մնացած մասը մնում է ջրի մեջ լուծված վիճակում և վոչ մի մասնակցութուն չի ունենում եմուլգացիայի պրոցեսում: Սաստիկ այս քանակը նպաստում է թունավոր լուծույթի թրջողականության լավացմանը, այնքան, վորքան վերջինը դրո՞ւմ է ջրի մակերեսային լարվածութունը:

### ՀԵՂՈՒԿ ՊՐԵՊԱՐԱՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՆԿԵՍ ՅԵԿՈՂ ՄԻ ՔԱՆԻ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թուչաղակալութուն: Պինդ մարմնի թրջվելը հեղուկի կողմից, ինչպես այդ տեղի յե ունենում սրսկման աշխատանքների ժամանակ, կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, յերբ պինդ մարմնի և հեղուկի մասնիկների մեջ յեղած կցողունակութունը (сцепление), — սղեղիան ավելի մեծ կլինի քան հեղուկի մասնիկների մեջ յեղած միջմասնիկային կցողունակութունը — կողեղիան: Այդպիսի դեպքում հեղուկը չի առաջացնում կաթիլներ, այլ թրջում է տերեվի մակերեսը:

Այդպիսով, թունավոր լուծույթի թրջողականութունը կախված կլինի հեղուկի մակերեսային լարվածութունից, պինդ մարմնի մակերեսային լարվածութունից և այն լարվածութունից, վորը կարող է գոյութուն ունենալ հեղուկի և բույսի մակերեսների շփման սահմանում: Տվյալ դեպքում մեզ բոլորից շատ հետաքրքրում է հեղուկի մակերեսային լարվածութունը, վորովհետև սա յե բոլորից շատ առատանման յենթակա և հեշտությամբ կարելի յե փոփոխել մեր ցանկացած ուղղությամբ: Այդպիսով կարելի յե ասել, վոր թունավոր լուծույթների թրջողականութունը կախված է առաջին հերթին նրա մակերեսային լարվածութունից, վորը և պայմանավորում է թունավոր լուծույթի թրջման աստիճանը: Վորքան քիչ է թունավոր լուծույթի մակերեսային լարվածութունը, այնքան մեծ է նրա թրջողականութունը:

Թունավոր լուծույթների թրջողականութունը շատ հաճախ կախված է լինում նաև սրսկվող բույսի և վնասատու որգա-

նիզմի վիճակից . այսպես որինակ, մօմի ծածկույթ ունեցող օր-  
յեկանները (կաղամբ, բրդապատ լլիճ և այլն) վատ են թրջվում :  
Այսպիսի դեպքում թունալոր լուծույթի մոմային շերտը լուծող  
նյութերի ալելացումը նույնպես զգալիորեն կարող է լավացնել  
լուծույթի թրջողունակութունը :

Ուտրզլին և Բեկլը դանում են, վոր թունալոր լուծույթներ-  
ի թրջողունակութունը զգալիորեն լավանում է նաև այն դեպ-  
քում, յերբ նրանց ալելացնում են ուժեղ չափով արտահայտ-  
ված մակերեսային մածուցիկութուն ունեցող նյութեր, որինակ  
սապոնին, ժելատին և այլն, վորոնց մոտ մասնիկների կոնցենտ-  
րացումը մակերեսում ալելի մեծ է, քան լուծույթի մյուս մա-  
սերում : Ուտրզլին և Բեկլը այս յերևույթը բացատրում են նրա-  
նով, վոր մակերեսում առաջացող թաղանթը խանգարում է հե-  
ղուկի առանձին կաթիլների բաժանվելուն, վորի հետեվանքով  
լուծույթը համատարած կերպով ծածկում է բույսի մակերեսը :  
Թունալոր լուծույթների մածուցիկութունը ալելի անհրաժեշտ  
է դառնում նրանց կալչողունակութունը լավացնելու դեպքում :

Այդպիսով, թունալոր լուծույթների թրջողունակութունը  
լավացնելու համար պետք է ոգտագործել կամ այնպիսի նյու-  
թեր, վորոնք զցում են թունալոր լուծույթների մակերեսային  
լարվածութունը (սապոն, կաղեխատ կալչիում և այլն), կամ  
այնպիսի նյութեր, վորոնք ընդունակ են լուծելու մոմային շեր-  
տը (ացետոն, սպիրտ) և կամ նյութեր, վորոնք ընդունակ լի-  
նելով մակերեսային կոնցենտրացման առաջացնում են թունալոր  
լուծույթի մածուցիկութունն այդպիսի նյութերից են՝ սապո-  
նինը ժելատինը, կլեյը և այլն :

Թվարկված նյութերից վորևե մեկի ընտրութունը կախված  
է կոնկրետ այն պայմաններից վորոնց մեջ դործադրվելու յեն  
տվյալ նյութերը և վոր զլխավորն է, այն հանգամանքից, թե  
թրջողունակությանը նպաստող նյութը ինչ քիմիական փոխազ-  
դեցության մեջ կարող է մտնել թունալոր լուծույթի հիմնական  
նյութի հետ :

Կալչողունակութուն և պահունակութուն : Թունալոր լու-  
ծույթների կալչողունակութունը և պահունակութունը շատ հա-  
ճախ հանդես են գալիս թրջողունակության հետ մեկ տեղ և  
ֆակտորներից շատերը, վորոնք նպաստում են թրջողունակու-  
թյանը, նպաստում են նույնպես և թունալոր լուծույթներին կրպ-  
չողունակությանը . այսպես որինակ, թունալոր լուծույթների

մածուցիկությունը նպաստում է և թրջողունակությանը և կըպ-  
չողունակությանը: Կալչելու և սլահելու տեսակետից կարելիոր է  
նաև այն հանգամանքը, թե թունավոր լուծույթը չորանալուց  
հետո թ. Ն. մասնիկները ինչպես կկալչեն բույսի մակերեսին:  
Այս հանգամանքը մեծ չափով կախված է իր՝ թունավոր նյութի  
քիմիական բաղադրությունից. որինակ, նկատված է, վոր կալ-  
ցիումի պոլիսուլֆիդը կամ բորոքյան հեղուկը չորանալուց հետո  
ավելի լավ են կալչում բույսի տերևներին, դժվար են լվաց-  
վում անձրեվներե կողմից քան քլորական բարիումը: Այս հան-  
գամանքը բացատրվում է նրանով, վոր առաջինների մեջ Ca-  
ի ներկայությունը նրանց տալիս է ցեմենտացող հատկություն և  
ուժեղ կերպով կպցնում է բույսերին, իսկ ընդհակառակը քլո-  
րական բարիումը լինելով ջրում լավ լուծելի հեշտությամբ  
լվացվում է անձրեվներե կողմից:

Թունավոր լուծույթների կալչելուն և սլահելուն նպաստելու  
համար թունավոր լուծույթին ավելացնում են զանազան կալչուն  
նյութեր, ինչպես որինակ—ալյուրի շաղախ, չաքարատականք  
ժելատին, կլեյ, կրակաթ և այլն: Այս դեպքում նույնպես խառ-  
նուրդների ընտրության ժամանակ պետք է ուշադրություն  
դարձնել, վորպեսզի վերջիններս բացասաբար չանդրադառնան  
թունավոր լուծույթների թունունակության վրա:

## ՍՐՍԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՇՎԻ ԱՌՆՎՈՂ ԱՐՏԱՔԻՆ ՖԱԿՏՈՐՆԵՐ

Սրսկման աշխատանքների ժամանակ արտաքին (մետերո-  
լոգիական) պայմանները մեծապես ազդում են միջոցառման հի-  
ֆֆեկտիվության վրա. դրանցից կարելիորն է քամու ներկայու-  
թյունը: Ուժեղ քամիների դեպքում սրսկման աշխատանքները  
հնարավոր չի լինում կատարել, վորովհետև սրսկվող լուծույ-  
թից ստացվող չիթը անհավասարաչափ է տարածվում բույսերի  
վրա: Սրսկման աշխատանքների հիֆֆեկտիվության վրա մեծա-  
պես ազդում է նաև արևը: Նկատված է, վոր սրսկումից հետո,  
յեթե նախքան կաթիլներե չորանալը ուժեղ արեի է անում,  
ապա հաճախ առաջանում են այրվածքներ, այս յերեվույթը  
բացատրվում է նրանով, վոր ջրի սֆերիկ կաթիլները, վորոնք  
գտնվում են բույսերի վրա վոսոլնյակի դեր են կատարում, վո-  
րոնք կենտրոնացնելով արեիլի, ճառագայթները՝ պատճառ են

զանունս՝ տերեւներն վրա այրվածքների առաջացմանը (հասկապես զալար բույսերի վրա)։ Այդ իսկ պատճառով պետք է աշխատել սրսկումները կատարել այն հաշվով, վորպեսզի մինչև արեւի ուժեղանալը կաթիլները չորացած լինեն։

Այնուհետև կարեւոր է նաև հաշի առնել անձրեւների առկայութեան խնդիրը, յեթե նախատեսնւմ է, վոր պետք է անձրեւ լինի, լավ է սպասել և սրսկումը կատարել անձրեւից հետո։ Թունաւոր լուծույթը յեթե մինչև անձրեւ դալը վատ է չորացել սպա նա հեշտութեամբ լվացվում է վերջինիս կողմից և անհրաժեշտ է լինում սրսկումը կրկնել։

### ՍՐՍԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՈԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Սրսկման համար ոգտագործվում են այնպիսի մեքենաներ, վորոնք հնարավորութուն են տալիս թունաւոր լուծույթը մանր կաթիլներով տարածել բույսերի վրա։ Սրսկիչ մեքենաները կարող են լինել ձեռքի կամ մեջքի, ձիաքարչ, ավտո կամ տրակտորային։ Այս մեքենաներից վորեւէ մեկի ոգտագործումը կախված է սրսկիող որջեկտների առանձնահատկութունից, այգի, դաշտ, դաշտի կամ այդու վարակվածութեան աստիճանից, մնասատուի տեսակից և այլն։ Յեթե դաշտը կամ այգին վարակված է փոքր ոջախներով և անհավասարաչափ, այս դեպքում ավելի նպատակահարմար են մեջքի սրսկիչների ոգտագործումը։ Ընդհակառակը մեծ տարածութունների համատարած սրսկման դեպքում անհրաժեշտ է լինում հզոր սրսկիչների ոգտագործումը, վորոնք հնարավորութուն են տալիս բարձր վորակով (հնարավոր է լինում բարձր ծառերի կատարները սրսկել, թափանցել հեղուկը վոստյանի տակ և այլն) սրսկում կատարել։ Հզոր մեքենաները սովորած լինելով լուծույթը մշտական խառնելու հարմարանքով տալիս են թունաւոր նյութի ավելի հավասարաչափ բաշխում քան մեջքի սրսկիչների դեպքում։

### ՍՐՍԿՄԱՆ ՅԵՎ ՓՈՇՈՏՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐՈՒՄԸ

Փ Ո Շ Ո Տ Ո Ւ Մ

Ս Ր Ս Կ Ո Ւ Մ

1. Շատ քանակութեամբ թ. ն. և դործածվում։

2. Չի կախված ջրի սուկայութունից։

1. Քիչ քանակութեամբ թ. ն. և դործածվում (3—5 անգամ)։

2. Կախված է ջրի սուկայութունից։

- |   |   |
|---|---|
| 3. Շատ զգալուն և բամբակների հանդեպ:   | 3. Քամիներից ավելի բեռ և վախենում:  |
| 4. Հեշտությամբ ըլացվում և անձրևիներից:  | 4. Ավելի դժվարությամբ և ըլացվում անձրևներից:  |
| 5. 3—5 անգամ ավելի բեռ աշխորեր և պահանջում նույն միավոր տարածությունը մշակելու համար: | 5. Շատ աշխորեր և պահանջում:   |
| 6. Ավելի ապահով և այրվածքներ առաջացնելու տեսակետից:                                   | 6. Ավելի վտանգավոր և բույսերի մնացածքներ առաջացնելու տեսակետով, հատկապես յեթև սրբուհումը համընկնում և ծաղկման շրջանի հետ: |

## Ֆ Ո Ւ Մ Ի Գ Ա Ց Ի Ա

Փումիզացիա յե կոչվում թունավոր նյութերի դործադրման այն ձևից, յերբ թունավոր նյութը դործադրման մոմենտին վեր և անձրևում— դաղային, դոլորչի կամ այբրողով վիճակի: Փումիզացիայի համար սդտադործվող թ. Ն. սովորական ջերմաստիճանում կարող է դոնվել և՛ դաղ, և՛ հեղուկ, և՛ պինդ վիճակում: Գործադրման պայմաններում դաղակերպ թ. Ն. պահպանում են իրենց վիճակը, հեղուկները վեր են անձրևում դոլորչու կամ մշուշանման վիճակի, իսկ պինդ թ. Ն.—ը ընդհանրապես դործադրվում է ծուխ վիճակում: Այդպիսով, Փումիզացիան հանդիսանում է թունավոր նյութերի դործադրման վորոշ ձևի և սկզբունքորեն յուրաքանչյուր թ. Ն. կարող է լինել Փումիզանդ: Բայց դործնականորեն վոչ բոլոր թ. Ն.—են նպատակահարմար վորպես Փումիզանման սդտադործելու համար:

Վորպեսզի ողի մեջ այս կամ այն վիճակում դոնվող թ. Ն.—ը ընդունակ լինի համապատասխան թունավոր ազդեցություն հանդես բերելու, պետք է վոր նա ընդունակ լինի առաջացնելու պահանջվող կոնցենտրացիան:

թ. Ն. է կոնցենտրացիան կարող է արտահայտվել՝

1. Տոկոսներով, ըստ ծավալի, այսպես որինակ 0,001% քլորպիկրին:

2. Մասերով, ըստ ծավալի, որինակ 1:1.000.000:

3. Կշռային միավորներով մեկ միավորը ծավալին, որինակ 5 մգր/մ<sup>3</sup> կամ 10 մգր/լիտր և այլն:

4. Վերջապես ծավալային միավորներով ծավալին համապատասխան որինակ 10 մմ<sup>3</sup>/մ<sup>3</sup> և այլն:

Պրակտիկ աշխատանքների ժամանակ հաճախ անհրաժեշտ է լինում մեկ ձևով արտահայտված կոնցենտրացիան փոխարինել մեկ ուրիշ ձևի: Առաջին ձևի փոխանցումը յերկրորդ ձևին առանձին դժվարություն չի ներկայացնում, այսպս, որինակ, 0,0001% քլորպիկրինը ծավալով արտահայտված կնշանակեր 1 ծավալ քլորպիկրինը 100.000 ծավալ ողի մեջ:

Յերկրորդ ձևի փոխանցումը յերրորդին հենվում են Ավո-դադրո-յի որևնքի վրա, վորի համաձայն յուրաքանչյուր նյութի մեկ գրամմոլեկուլը դադ կամ գոլորչի վիճակում 0°-ում և 760 մմ ճնշման դեքպում բռնում է 22,4 լիտր ծավալ: Բերենք մի որինակ, տրված է 100:1.000.000 ցիանջրածնական թթուն արտահայտել մգր/մ<sup>3</sup>-ով: Մեկ միավոր ցիանջրածնական թթուն 1.000.000 միավոր ծավալի մեջ համապատասխանում է որինակի համար 1 սմ<sup>3</sup> ցիանջրածնական թթուն 1 մ<sup>3</sup> ողի մեջ, հետևապես խնդիրը կայանում է նրանում, վոր վորոչել 10 սմ<sup>3</sup> ցիանջրածնական թթվի կչիոր: Յիանջրածնական թթվի գրամմոլեկուլը կշռում է 27 գր. և բռնում է 22,4 լիտր ծավալ 0°-ում 760 մմ ճնշման դեպքում: Հետևապես մեկ լիտր ցիանջրածնական թթուն կշռում է  $\frac{27}{22,4}$  գր, իսկ 1 սմ. =  $\frac{27}{22,400}$  կամ  $\frac{27.000}{22.400}$  մգր, իսկ 10 սմ. =  $\frac{270.000}{22.400}$  = 12,05 մգր. մ<sup>3</sup>

Բերված մեթոդը ճիշտ կլինի միայն վորոչ Փիզիկական պայմանների համար 0°-ում և 760 մմ ճնշման դեպքում, բայց ուղղումը, վորը անհրաժեշտ կլինի մտցնել տատանվող ջերմատիճանի և ճնշման համար բախականին աննշան և և պրակտիկ աշխատանքների ժամանակ հաշվի չի առնվում:

Թ.Ն. ողտադրման ժամանակ առաջին գործնական խնդիրը, վորը հանդես է դալիս դա այն է, թե տվյալ Թ.Ն- ինչ կոնցենտրացիա յե ընդունակ առաջացնելու ողի մեջ: Պարզ է, վոր Թ.Ն. չի կարող ստեղծել անվերջ մեծ կոնցենտրացիա: Կոնցենտրացիան սահմանափակվում է տվյալ ծավալի, տվյալ Թ.Ն.-ի գոլորչիների հազեցման աստիճանով: Թ.Ն.-ի համար դոյություն ունի տվյալ Փիզիկական պայմանների համար մաքսիմալ հնարավոր կոնցենտրացիան: Կոնցենտրացիայի մեծությունը բնորոշվում է ցնդող-ուևակուլթյան հասկացողությամբ: Յնդողունակություն ասելով հասկացվում է Թ.Ն.-ի կշտային այն քանակը, վորը Փիզիկական տվյալ պայմաններում կարող է գտնվել վորոչ ծավալի հազեցած

դարձրելներն մեջ: Ընդհանրապես ցնդողունակությունը արտահայտում են մգր մ<sup>3</sup>-ին: Այսպես որինակ, յեթե ասում են, վոր քլորպլիկրինի ցնդողունակությունը 20<sup>0</sup>-ում և 760 մմ ճնշման դեպքում հավասար է 148.000 մգր 1մ<sup>3</sup>-ին, ապա այդ նշանակում է, վոր քլորպլիկրինը տվյալ Ֆիզիկական պայմաններում ավելի բարձր կոնցենտրացիա ստեղծել չի կարող, վորովհետև 184.000 մգր 20<sup>0</sup>-ում լրիվ կերպով հազեցնում է 1 մ<sup>3</sup> ողբ: Այստեղից պարզ է ցնդողունակության հաշվի ստնելու կարևորությունը Ֆուսիլգանտների ընտրության ժամանակ: Ֆուսիլգացիայի համար ոգտագործվող Թ.Ն.-ի ցնդողունակությունը պետք է լինի այնպիսին, վոր կարողանա ստեղծել համապատասխան կոնցենտրացիա՝ լետալ (մահացու) Ֆուսիլգացիայի յենթարկվող որչեկտի համար:

Վորքան տվյալ Թ.Ն.-ի ցնդողունակությունը մեծ լինի տվյալ որչեկտի համար լետալ հանդիսացող կոնցենտրացիայից, այնքան ավելի մեծ շանսեր կլինեն պայքարից լավ արդյունք ստանալու:

Թ.Ն.-ի ցնդողունակությունը կայուն մեծութուն է միայն վորոչ ջերմաստիճանի համար: Ջերմաստիճանի բարձրացման հետ միասին բարձրանում է նաև ցնդողունակությունը և ընդհակառակը, ուրիշ խոսքով ասած, ցնդողունակությունը ուղիղ հարաբերական է ջերմաստիճանին:

Քլորպլիկրինի ցնդողունակության փոփոխությունը կախված ջերմաստիճանի փոփոխությունից կարելի չէ տեսնել հետևյալ աղյուսակից:

Քլորպլիկրինի ցնդողունակությունը տարբեր ջերմաստիճաններում

t <sup>0</sup>	0 <sup>0</sup>	10 <sup>0</sup>	15 <sup>0</sup>	20 <sup>0</sup>	30 <sup>0</sup>	50 <sup>0</sup>
մգր/մ <sup>3</sup>	57.500	104.000	136.000	184.000	295.000	748.000

Թ.Ն.-ի ցնդողունակությունն տվյալ ջերմաստիճանում ուղիղ հարաբերական է նաև իրա դոլորչիների առաձգականությանը տվյալ ջերմաստիճանում, իմանալով Թ.Ն.-ի դոլորչիների առաձգականությունը կարելի չէ վորոչել նրա ցնդողունակությունը:

Նշանակենք

Թ.Ն. մոլեկուլյար կշիռը զրամներով արտահայտված M

Թ.Ն. հազեցած դոլորչիների առաձգականությունը t<sup>0</sup> և մմ ճնշման տակ P

Գրամմոլեկուլի ծավալը t<sup>0</sup>-ում լիտրներով... Vt.....

M-ը գոլորշակերպ վիճակում է՝ում Vt լիար ծավալով Ավո-  
 պագրոյ-ի հայտնի որենքի համաձայն կունենա 760 մմ գոլորշի-  
 ների առաձգականություն:

Հիմա յեթե մենք հարցադնենք, թե ինչ քանակությամբ թ. ն.  
 (գրամներով) գոլորշակերպ վիճակում նույն Vt լիար ծավալում  
 և նույն ջերմաստիճանում կունենա գոլորշու առանձգականությա-  
 նը, ապա վորոշելով հետևյալ հարաբերությունը.

$$X : M = P : 760 \text{ կտտանանք}$$

$X = \frac{M_p}{760}$  -ը Vt լիար ծավալում, իսկ մեկ լիարում  $\frac{M_p}{760}$  -ը, և  
 տեվապես ստացված մեծությունը արտահայտված լիար գրամ-  
 ներով կընորոշի թ. ն. ցնդողունակությունը է՝ում, իսկ վո-  
 ռովհետև  $+ 40^\circ$ -ից մինչև  $40^\circ$  Vt փոփոխվում է միայն 19,1  
 մինչև 25,6 այդ իսկ պատճառով պրակտիկ հաշվումների ժա-  
 մանակ կարելի յե բերված ֆորմուլի մեջ Vt-ի փոխարեն միշտ  
 ցույց տալ  $V_0 = 22,4$  լիար:

Մի քանի տարբեր ֆումիդանտների գոլորշիների առանցքա-  
 կանության և ցնդողունակության համեմատական մեծություննե-  
 րը կարելի յե տեսնել հետևյալ աղյուսակից՝

թ. ն. անունը	Յեռման կե- տը 760 մմ	Գոլորշիների առացքականու- թյունը մմ-ով 20°C-ում	Ցնդողունակու- թյունը հաշված մգր- մ՝ող
1. Ցիանջրածնական թթու	26,5	603,0	1.000.000
2. Բորդիկրին	112,0	18,3	184.000
3. Նաֆտալին	217,7	0,054	390
4. Պարադիբորբենզոլ	-	5,23—49,1 <sup>0</sup> -ում	-

Ինչպես յերևում է բերված աղյուսակից ֆումիդանտների մեջ  
 կան նյութեր, վորոնք ունեն գոլորշիների շատ բարձր առաձգա-  
 կանություն, ցնդողունակություն և ընդհակառակը, կան նյութեր  
 գոլորշիների շատ ցածր առաձգականությամբ և ցնդողունակու-  
 թյամբ: Թ. ն. -ի այս հատկությունը հաշվի յեն առնում ֆումի-  
 դացիա կատարելու ժամանակ, այսպես որինակ հողի դեղինակ-  
 ցիայի ժամանակ ոգտագործում են ցածր ցնդողունակություն ու-  
 նեցող թ. նյութեր, ինչպես որինակ, պարադիբորբենզոլ. ընդա-  
 կառակը վակում-ֆումիդացիայի ժամանակ, յերբ կա բացարձակ

հերմետիկութուն և անհրաժեշտ է կարճ ժամանակամիջոցում բարձր կոնցենտրացիա ստանալ, ուղտադորձում էն այնպիսի Թ-նյութեր, վորոնք ունեն բարձր ցնդողունակութուն, որինակ ցիանջրածնական ԹԹուն:

Թ. Ն. ՅԵՌՄԱՆ ԿԵՏԸ. Ինչպես հայտնի յե հեղուկի յեռման կետը հանդիսանում է այն ջերմաստիճանը, վորի ժամանակ հեղուկի գոլորշիների առաձգականութունը հավասարվում է մթնոլորտային ճնշմանը: Այստեղից պարզ է, վոր Թ.Ն. յեռման կետը պետք է վոր հանդիսանա գոլորշիների առաձգականության մոտավոր չափանիշը, վորովհետև վորքան մեծ է Թ.Ն. գոլորշիների առաձգականութունը, այնքանով նա պետք է քիչ տաքացվի, վորպեսզի նրա գոլորշիների առաձգականութունը մեծանալով հասնի մթնոլորտային ճնշման: Այդպիսով Թ. Ն. գոլորշիների առաձգականութունը հակադարձ համեմատական է յեռման կետին: Նույն հարաբերութունը գոյութուն ունի նաև յեռման կետի և ցնդողունակության միջև:

## Թ. Ն. ԳՈԼՈՐՇԱՑՄԱՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Թ. Ն. գոլորշացումը միշտ տեղի յե ունենում վորոշ ժամանակաընթացքում:

Գոլորշիացման հետևանքով առաջացած Թ.Ն. կոնցենտրացիան հետևյալն է յերկու մեծության:

1. Թ.Ն. դադային վիճակի անցնելու արագութուն (գոլորշացման արագութունը):

2. Թ.Ն. տարածվելու արագութուն, վորը կախված է գլխավորապես ուղի հոսանքներից:

Գոլորշացման արագութունն ասելով հասկացվում է ժամանակի տեվողութունը, վորը անհրաժեշտ է մեկ կշռային միավոր Թ.Ն. (որինակ մեկ գրամ) մեկ միավոր մակերեսից (որինակ մեկ սմ<sup>2</sup>) գոլորշացնելու համար:

Թ. Ն. գոլորշացման արագութունը կախված է՝

1. Գոլորշիների առաձգականութունից կամ ցնդողունակութունից.

2. Արտաքին ճնշումից.

3. Գոլորշացող Թ.Ն. ջերմաստիճանից.

4. Գոլորշացող մակերեսի ձևից ու բնույթից.

5. Արտաքին միջավայրի վիճակից—չարժուն կամ հանդիստ:

Յեթե Թ.Ն. գոլորչացումը տեղի յե ունենում փակ տարածու-  
թյան մեջ, հետևապես նրա հազեցման աստիճանի հետ միասին  
կապակասի գոլորչացման արագությունը: Գոլորչիների առաձգա-  
կանությունը հեղուկի վրա կհակադդի մոլեկուլների ձգամանը  
պեղվելու հեղուկի մակերեսից և յերբ գոլորչին կհազեցնի տարա  
ծությունը առաձգականությունը կլինի այնպիսին, վոր հետագա  
գոլորչացումը կդադարի:

Թ. Ն. գոլորչացման արագության վրա շատ մեծ ազդեցու-  
թյուն է ունենում ողի հոսանքների ներկայությունը: Բայց պետք  
է ասել, վոր ազատ վիճակում տեղի ունեցող գոլորչացումը պայ-  
մանավորող որենքները շատ վատ են ուսումնասիրված և վերջին  
հաշվով վորպեսզի ասել, թե այլալ թ.Ն. գոլորչացման արագու-  
թյունը բավական է արդյո՞ք լեռալ կոնցենտրացիա ստեղծելու  
համար, կարելի յե միայն համապատասխան փորձեր կատարելուց  
հետո:

Գազերին վերաբերող հիմնական որենքների իմանալը բույսե-  
րի պաշտպանության պրակտիկայում աշխատողների համար բա-  
ցարձակ անհրաժեշտություն է, վորպեսզի հնարավոր լինի ընդո-  
նել Փումիլդացիայի պրոցեսի ընթացքը այս կամ այն պայմաննե-  
րում:

Փումիլդանտների դնահատականի համար կարևոր նշանակու-  
թյուն ունի նաև Թ.Ն. ընդհանուր ռեակցիոնականությունը: Այս  
տեղմինի տակ հասկացվում է Թ.Ն. կայունությունը ջրի, ողի  
խոնավության հանդեպ, ինչպես նաև ջերմակայունությունը:

Այս հատկությունների մասին մանրամասնորեն կխոսենք ա-  
ռանձին Թ.Ն. մասին ասելիս: Այնուհետև Փումիլդանտների հա-  
մար կարևոր հանգամանք է նաև նրանց ազսորբցիայի յենթարկ-  
վելու հանգամանքը: Թ.Ն. բարձրաստիճան ազսորբցիայի յեն-  
թարկելը ցանկալի յերևույթ չէ, վորովհետև այն կխանդարի  
թունավոր նյութի տարածմանը Փումիլդացիայի յենթարկված  
նյութի շերտերի մեջ, որինակ ցորենի, հողի և այլն:

Թ. Ն. բարձր ազսորբերականությունը ստիպում է ավելացնել  
վերջվելիք նյութի ծախսման նորման, այսպես որինակ սոսկիկնե-  
րի դեմ պայքարելիս նրանց բներում, թունավորելու համար ոգ-  
տաազսործվում է մոտ հարյուր անգամ ավելի քլորպիկրին (նույն  
ծավալի դեպքում) քան լարորատոր ապակյա ամաններում  
թունավորելիս, վորովհետև քլորպիկրինը ուժեղ չափով ազ-  
սորբցիայի յե յենթարկվում հողի կողմից:

Ֆուլիգանտի աղտորվելը վատ է անդրադառնում նաև Փու-  
միլիգացիոյ մթերքների վորակի վրա: Այս կապակցութեամբ արժե-  
կանց ասնել թ. Ն. պերսիստենտականութեան վրա:

Յերբ անհրաժեշտ է լինում վորոշել, վոչ թե այն կոնցեն-  
տրացիան, վորը ընդունակ է սակզծել այս կամ այն թ. Ն. ողի  
մեջ, այլ ժամանակի տևողութեանը, վորի ընթացքում թ. Ն.  
կարող է հանդես բերել իրա աղղեցութեանը (ազատ վիճակում),  
այդ դեպքում ավելի հարմար է սղովել վոչ թե թ. Ն. գոլորչաց-  
ման արագութեան մեծութեանից (V), այլ նրա հակադարձ մե-  
ծութեանից, վորը և կոչվում է պիրսիստենտականութեան (S):

$$S = \frac{1}{v}$$

Պերսիստենտականութեան ասելով հասկացվում է ժամանակի  
տևողութեանը, վորի ընթացքում թ. Ն. դանվելով այս կամ այն  
տեղում, ընդունակ է սահսպանելու իրա թունավոր աղղեցութեա-  
նը (Ֆիլիկական վիճակը):

Թ. Ն. համեմատական պերսիստենտականութեան աղյուսակ  
կազմելու համար լեյտները ընդունեց վորպես համեմատական  
միավոր ջրի պերսիստենտականութեանը 15° C-ի (չոր սղում),  
այսինքն նույն ջերմաստիճանում ջրի գոլորչացման արագութեան  
հակառակ մեծութեանը: Նա համապատասխան փորձերի հիման  
վրա կազմեց տարբեր թունավոր նյութերի պերսիստենտականու-  
թեան համեմատական աղյուսակ:

Այս հարցը սարգարանելու համար բերենք մի քանի որինակ-  
ներ: Ըստ լեյտների աղյուսակի խլրիտը 15 C-ում ունի պերսիս-  
տենտականութեան 103, դա նշանակում է, վոր խլրիտը հողի  
մակերեսից գոլորչանում է 103 անգամ ավելի դանդաղ ջրի հետ  
համեմատած, քլորպիկրինի պերսիստենտականութեանը նույն  
15°-ի դեպքում հավասար է 0,3, հետևապես քլորպիկրինը մոտ  
յերեք անգամ ավելի արագ է գոլորչանում ջրի հետ համեմա-  
տած: Հետևապես խլրիտի պերսիստենտականութեանը 310 ան-  
գամ ավելի յե քլորպիկրինից:

Պերսիստենտականութեանը թ. Ն. կարևոր հատկութեաններից  
մեկն է և այն անշուշտ անհրաժեշտ է հաշվի ասնել Փուլիգացիոն  
աշխատանքների ժամանակ, վորովհետև ախտահանված որչեկա-  
ների դեղադաշխաչի արագութեանը վերջին հաշվով պայմանավոր-  
վում է թ. Ն. պերսիստենտականութեամբ:

Այն թ. Ն. վորոնք իրենց պերսիստենտականութեամբ նման

կլինեն խաբարին անշուշտ անեպար կլինեն բույսերի պաշտպանութ-  
յան պրակտիկայում ողտադործելու՝ ծածկատների Փումիդա-  
ցիայի համար, իսկ ընդհանրապես բաց տարածությունների Փու-  
միդացիայի համար գուցե և ալգպիսի Թ.Ն. ալելի պիտանի  
կլինի:

Թ. Ն. հայտնաբերվելու քյունը նույնպես կարևոր  
հանգամանք է հատկապես աշխատանքի անվտանգության կազմա-  
կերպման տեսակետից, քանի հեշտ է Թ.Ն. հայտնաբերվում մի-  
ջամայրում աչքքան ավելի լավ է: Թ.Ն. ներկայությունը հայտ-  
նաբերվում է հոտով, արտավարերությամբ և այլն, բայց ավելի  
լավ է, յերբ հնարավոր է նրանց հայտնաբերել համապատասխան  
քիմիական ինդիկատորները ոգնությամբ: Այս հանգամանքը հնա-  
րավոր է դարձնում զգալիորտ պատահարների կանխումը:

### ՖՈՒՄԻԳԱՅՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ:

Փումիդացիան բույսերի պաշտպանության պրակտիկա-  
յում գործադրվում է շատ լայն շափերով և շատ վնասատուների  
համար հանդիսանում է պայքարի միակ միջոցը:

Փումիդացիան բոլորից շատ ողտադործվում է ծածկատնե-  
րում, բայց վերջերս այն ողտադործվում է նաև բաց տարածու-  
թյունների Փումիդացման համար՝ հողի գեղինեկցիա, կանաչ  
բույսերի փոշոտում և այլն:

Փումիդացիայի յենթարկվող ծածկատները պետք է լինեն  
բավարար շափով հերմետիկ, վորպեսզի հնարավոր լինի ստեղծել  
լետալ կոնցենտրացիա և սպանել շենքի մեջ դանվող վնասատու  
որդանիգմներին: Վատ փակվող շենքերի Փումիդացիան վտանգա-  
վոր է նույնպես չըջապատի համար: Շենքին ալելի հերմետիկու-  
թյուն տալու համար՝ նախ քան Փումիդացիան փակվում են նրա  
բոլոր անցքերը: Նայած ինչ Փումիդանտ և ողտադործվելու, հա-  
մապատասխան դրան կատարվում է վորոշ նախապատրաստական  
աշխատանք: Այսպես որինակ, յեթե Թ.Ն. գոլորշիները հեշտ  
բոնկվող են (որ. ծծմբածխածինը), ձեռք են առնում հակահղե-  
հային միջոցառումներ: Յեթե շենքում շատ ցուրտ է, նախորդ  
այն տաքացվում է: Յեթե շենքում այնպիսի իրեր կան, վորոնց  
վրա տվյալ Թ.Ն. կարող է ազդել, ապա դրանք դուրս են տա-  
նում: Յեղած իրերը՝ պարկերը, արկղները և այլն դասավորում  
են այնպես, վոր Փումիդանտի գոլորշիները հեշտ կերպով թա-  
փանցեն շենքի բոլոր անկյունները: Թ.Ն. բնությին համապատաս-  
խան ձեռք են առնում միջոցներ, վորոնք թույլ կտան գոլորշի-

ներին հավասար չափով տարածվելու. այսպես որինակ, յեթե  
Թ.Ն. գոլորշիները ծանր են ողից, այդպիսի դեպքում լավ է Թ.  
Ն. տեղավորել Փումիլգացիայի յենթարկվող նյութի վերևում:

Շենքը թունավորելուց հետո փակում են բոլոր դռներն ու  
պատուհանները և նրանց անցքերը մածիկում:

Անվտանգության համար լավ է շենքի շուրջը ստեղծել 20—40  
մետր աչքերիված դռնա և պահակ կանգնեցնել, ինչպես նաև փակե-  
ցնել նախադղուչական հայտարարություններ:

Ձերմոցների փումիլգացիան:—Սա սուսանձնապես չի տարբեր-  
վում պահեստների Փումիլգացիայից, այստեղ կարևորը միայն  
այն է՝ ջոկել այնպիսի Թ.Ն. և մշակել այնպիսի կոնցենտրացիա  
և եկազոդիցիա, վորը վոչնչացնելով վնասատու որդանիլմներին  
չվնասի բույսերին: Այս նպատակի համար ոգտագործում են գր-  
խավորապես ցիանի փոշի սրեպարատներ KCN, «ցիկլոն», ցիտո-  
պլավ և այլն:

Անվախուռում կամերաների փումիլգացիան: Այս նպատակի հա-  
մար ոգտագործվում են բազմաթիվ ձևերի ու մեծությունների  
կամերաներ: Նրանց բոլորի բնորոշ հատկանիշն այն է, վոր նրանք  
հերմետիկ կերպով փակվում են, հաճախ ունեն կահավորանք՝ Թ.  
Ն. գոլորշիացումը արագացնելու համար: Այսպիսի կամերանե-  
քում ամենից շատ ոգտագործվում են HCN, CCl<sub>3</sub>, NO<sub>2</sub>, CS<sub>2</sub> և  
OCl<sub>2</sub>-ի կամ CO<sub>2</sub>-ի խառնուրդը և այլն:

Վախում-փումիլգացիան: Եյությունն այն է, վոր վարակված  
իրերի միջից, վորոնք տեղավորվում են հատուկ վակուում-կա-  
մերաների մեջ, դուրս է հանվում ողը հատուկ ողահան մեքե-  
նաների ողնությամբ, վորի հետևանքով կամերայում ստեղծվում  
է անող (համեմատականորեն) տարածություն: Դրանից հետո  
մտցվում է ողի հոսանք, վորը Փումիլգանտի հետ միասին ա-  
րագ կերպով թափանցում է Փումիլգացվող իրերի խորը շերտերի  
մեջ:

Թ.Ն. շատ արագ թափանցումը հնարավորություն է տալիս  
Փումիլգացիան կատարել շատ կարճ ժամանակամիջոցում (1—2  
ժամ), այնպիսի խիտ որջեկտների վերարերմամբ, ինչպիսին են  
բամբակի հակերը, ծանրոցները և այլն:

Վակում-կամերաներում ոգտագործվող թույներից ամենից  
գործածականը ցիանջրածնական թթուն է:

Վրանների տակ կատարվող փումիլգացիան: Գործադրվում է  
թանգարժեք կուլտուրաների Փումիլգացիայի համար, որինակ  
նարինջի, կխորնի ծառերը ինչպես նաև հացահատիկների: Ըստ

եյության՝ Փռումիզացիայի այս ձեւը չի տարբերվում ծածկատների Փռումիզացիայից, տարբերութիւնը միայն այն է, վոր ծածկված տարածութիւնը ստեղծվում է համապատասխան-զազամնիթավանցիկ գործվածքների ողնութիւյամբ, վորով ծածկվում են Փռումիզացիոց ծառերը կամ հացահատիկի կույտերը: Ծառերի Փռումիզացիայի համար ուղտադործում են ցիանի պրեպարատները: Փռումիզացիան կատարում են այնպիսի ժամանակ, յերբ արեւը և քամի չկա: Արեւի ներկայութիւնը նպաստում է տերեւներին վրա վնասվածքներ առաջանալուն, իսկ քամին՝ դաշի քամհարմանը: Այդպիսի ժամանակ են հաղնիսանում գիշերները:

Այս մեթոդը մեծ տարածում ունի ԱՄՆ-ում և մասամբ և Իսպանիայում և Իտալիայում: Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում նույնպէս լայն շարիով կիրառվում է ցիտրուային կուլտուրաների համար:

Հաճախ համապատասխան շենքի բացակայութիւնը կամ հացահատիկի ուժեղ շարիով վարակված լինելու պատճառով այս մեթոդը ուղտադործում են հացահատիկների Փռումիզացման համար: Այս դեպքում խնամքով շարված պարկերը ծածկում են բրեղենտով և նրա տակ մտցնում Թ. Ն.:

Հողի փռումիզացիան: Փռումիզացիայի այս մեթոդը, չնայած վոր բավականին հին է, բայց մինչև հիմա դեռ վատ է մշակված: Եյությունն այն է, վոր հեղուկ կամ փոշի Փռումիզանոր մտցվում է հողի մեջ, վորտեղ նրա գոլորշիները տարածվելով սպանում են վնասատուներին: Թ. Ն. հողի մեջ մտցնում են հատուկ գործիքների ողնութիւյամբ (ինժեկտորներ), կամ ուղակի հեղուկ կամ փոշի Թ. Ն.-ը ցնելով հողի մեջ վորոշ խորութիւյամբ պատրաստած փոսերի մեջ: Փոսերի խորութիւնը, ինչպէս նաև փոսերի տարածութիւնն ու Թ. Ն. ծախսման նորման տարբեր է տարբեր Թ. Ն., հողերի ու վնասատու որդանիքների համար: Հողի Փռումիզացիայի համար Թ. Ն. բնութային հաշիվի յեն անում նրա գոլորշացման արագութիւնը, (վորը պետք է թիչ լինի) հողի մեջ հեշտ տարածելութիւնը, բույսի համար անվտանգութիւնը և հողի մեջ յերկար ժամանակ առանց քայքայելու մնալու հանդամանքը և այլն:

Թ. Ն. հողի միջից գոլորշիանալուն ցնդելուն խանդարելու համար ուղտադործում են հողի ծածկոցներ՝ Մուլչա, հատթուղթ, ծղնտու և այլն:

Թ. Ն. ծախսման նորման մեկ հեկտարի համար հալասար  
և 200—800 կգը : Ծախսման նորմայի մեծութունը հանդիսանում  
և այս ձեռնարկութան բացասական կողմը, վորը գլխի չափով  
ահամանափակում է նրա լայն ուղտադործմանը :

Բաց տարածարյունների փումիգացիան : Փումիգացիայի  
այս ձեպն ամենից նորն է և քիչ ուսումնասիրված, վորպես որ-  
նակ կարելի չե բերել ծխախոտի ծխով ալկիների փումիգացիան  
(ծխախոտի մնացորդները այրելու միջոցով), ցիանի փոշի պրե-  
պարատների ուղտադործումը խաղողի վնասատուների դեմ պայքա-  
րելիս և այլն : Այս ձեռնարկման ժամանակ ամենակարևորն է,  
աջնպիսի Թ. Ն. ընտրել, վորը գործընթացման արագութունը  
հնարավորութուն տա ավելի վնասատվի համար բաց ուղտ  
լեռալ կոնցենտրացիա ստեղծել :

Փոշի փումիգանտները չաղ տալու համար ուղտադործում են  
սովորական փոշոտիչներ : Փոշոտումը կատարում են հով ժամա-  
նակ :

Սուսլիկների բների փումիգացիան : Այս ձեպը սուսլիկների  
դեմ մղվող պայքարի ձեպերից ամենից շատ տարածվածն է :  
Եյությունն այն է, վոր փումիգանտը տարբեր ձեպերով մտցվում  
և սուսլիկի բունը, բնի մեջ առաջացած թունավոր գործընթացները  
սպանում են սուսլիկներին : Ներկայումս շատ տարածված է այս  
նպատակի համար հեղուկ Թ. Ն., դործադրումը, վորի դեպքում  
հեղուկը ձեռնցվում է վորեւ հեշտ գործընթացնող նյութը, այդպիսի  
նյութ և ծառայում վատորակ բամբակը, վորով փաթաթում են  
փայտի ծայրը, թաթախում այն շշում գտնված քլորպիկրինի  
մեջ և անոս դնում սուսլիկի բունը և ծածկում այն : Վերջին  
տարիներում կատարած փորձերը ույց են ավել, վոր նույն նը-  
պատակի համար կարելի չե ուղտադործել նաև փայտի թեփը և  
ավաղը : Վերջիններս ավելի հարմար են, վորովհետև հնարավոր-  
ութուն են տալիս աշխատանքների մեքենայացման և թունա-  
վոր նյութի ճիշտ կերպով գույավորման յեթարկելուն :

Հեղուկ պրեպարատն անմիջապես բունը լցնելն աննպատակ է,  
վորովհետև այս դեպքում թունի ավելի մեծ կորուստ է լի-  
նում : Լավ արդյունք է տալիս այս նպատակի համար նաև ցիանի  
փոշի պրեպարատների ուղտադործումը :

Նախքան բների փումիգացիան՝ հողով ծածկում են դաշտում  
յեղած բները և հեռեվյալ որը ստուգում : Այն բները, վորոնք  
հեռեվյալ որը բացված կլինեն, ցույց կտան նրանց բնակելիու-

թիւներ և հենց այդ բներն ել թունաւորում են: Թունաւորումը կտաարվում և այն ժամանակ յերբ սուպրիկները դանդում են բնում: Թունաւորելուց հետո բները վախում են և յեթե նրանք նորից բացվեն, ապա այդպիսի բները նորից են թունաւորում:

Այերոզոլեր: Վերջերս Փումիլպայիայի գործում՝ ոստիկան քիմիայի վարդացման հետ կապված հատուկ ուշադրութեան և սկսում արժանանալ թ. Ն. գործադրումը այերոզոլ վիճակում:

Բույսերի պաշտպանութեան գործում այս ուղղութեամբ շատ քիչ բան և արված, այստեղ մենք կարող ենք հիշատակել միայն ծծմբի սպառարծումը ոտտուկներատորների սղնութեամբ: Մը-լսախտաի սպառարծումը ծխացնելու միջոցով և մի քանի սերիչ առանձին փորձեր՝ թունաւոր մշուշներ ստանալու ուղղութեամբ:

Այերոզոլեր են կոչվում այնպիսի գաղտկարտիզալ սխտեմներ, փորտեղ սղը հանդիսանում և դիտակերտին միջապայր, իսկ նրա մեջ փորտեղ դիտակերտին Փաղա կարող են լինել պինդ նութերը, այս դեպքում մենք կունենանք Մուխ և հեղուկ նյութեր մշուշ: Այերոզոլերի հիշված բաժանումը ըստ նրանց ազրեկատային վիճակի ամենից շատ և համապատասխանում մեր պահանջներին, բայց զբաղանութեան մեջ հանդիպում ենք նաև սերիչ բաժանման՝ ծուխ են կոչում այնպիսի այերոզոլային սխտեմը, փորտեղ մասնիկները մեծութեանը չափում և  $10^{-5}$   $10^{-7}$  սմ, իսկ մշուշներ են կոչվում  $10^{-5}$   $10^{-3}$  սմ. մեծութեան մասնիկներ ունեցող այերոզոլային սխտեմները:

Գաղակերպ վիճակում սպառարծմտղ թ. Ն. մասին խտելիս մենք ասացինք, փոր այս կամ այն թ. Ն. սպառարծումը գաղակերպ վիճակում հիմնականում սահմանափակվում և նրա ցնդողունակութեամբ:

Մումիլպայիայի նպատակով սպառարծմտղ թ. Ն. թիվը շատացնելու բնական պահանջը ձգտում և առաջացնում գանել միջոցներ սղի մեջ ավելի շատ թ. Ն. մտցնելու, քան այդ հնարափորութեան և տալիս տվյալ նյութի ցնդողունակութեանը: Հենց այդ բանը հնարաւոր և դատնում այերոզոլերի գործադրման դեպքում:

Այերոզոլերի դեպքում ցնդողունակութեանը կարցնում և իր ինքնուրույն նշանակութեանը և թ. Ն. կոնցետրացիայի մեծութեանը արդեն սրբամանաւորում և բոլորովին սերիչ սրենքներով:

Պետք և ասել, փոր բույսերի պաշտպանութեան սրակտիկա-

յում այրողութի կիրառման հնարավորութիւնը պայմանաւորող հանգամանքները շատ ավելի բարդ են և ավելի քիչ ուսումնասիրված :

Կարելի չե ասել, միայն այն, վոր նրանք վորպես կոլոնիա սիտեմներ յենթարկվում են կոլոնիալ վիճակներին վերաբերող որինաչափութիւններին, բայց վորոչ սպեյթիկ առանձնահատկութիւններով: Ներկայումս անբողոքի դործադրումը ավելի ուսել դարձնելու համար հետազոտական աշխատանքները դնում են յերեք հիմնական ուղղութիւնք:

1. Գտնել մեթոդ և պայման այս կամ այն թունաւոր նյութը աչերողութիւն վիճակի վերածելու համար (ստեղծել համապատասխան սրակիչ ու փոշոտիչ մեքենաներ):

2. Կարողանալ ստեղծել Թ. Ն. ախլիսի կոնցենտրացիա և մասնիկների զիտակերտականութիւնն ստտիճան, վորը լիտալ կլինի այս կամ այն վնասատուի համար:

3. Պահպանել այդ կոնցենտրացիան և զիտակերտականութիւնը հնարավորին չափ յերկար ժամանակ:

Պետք և սպասել, վոր մոտ ժամանակներս աչերողութիւն կգտնեն լայն կիրառութիւն բույսերի պաշտպանութիւն դործում. դրան վորպես որինակ կարող են ծառայել պրիետրումի և ոտտենոնի պրեսպարատների ոպտադործումը, վորոնք հիմա արդեն լայն չափերով ոպտադործվում են անային պարագիտների դեմ պայքարելու համար աչերողութիւն վիճակում, ինչպես նաև այն հանջող փորձերը, վորոնք կատարվում են մեկ մոտ ԽՍՀՄ-ում մշտն ստաջացնող համապատասխան սրակիչներ կառուցելու ուղղութիւնք:

### ԳՐԱՎԶԱՆՅՈՒԹԵՐՈՎ ՄՂՎՈՂ ՊՍՅՔԱՐԸ

Թ. Ն. դո բժադրումը դրավչանյութերով ոպտադործվում և կըրծող միջատների, մկների և այլ տիպի կրծողների դեմ: Գրավչանյութերով մղվով պայքարի նյութիւնը վայանում և նրանում վոր այս կամ այն թունաւոր նյութը տրվում և վորեւ ուրիչ իներս նյութի հետ միասին, վորտեղ իներս նյութը հանդիսանում և վնասատուի համար դրավելու միջոց: Իներս նյութը կարող և լինել պինդ նյութ և հանդիսանալ վորպես կեր, հեղուկ՝ ծարավը հաղեցնելու համար, կամ վորեւ այլ նյութ, վորն իր հոտափետութիւնք կառաջացնի խեմոտակսիս:

Նյդպիսով, մենք ստանում ենք թունաւորված դրավչանյութեր, վորոնք բաղկացած են թունաւոր նյութից և դրավչանյութի:

թից: Թունավորված գրավչանյութերում վորպես թույն ոգտա-  
գործվում են աղիքային թույններ, վորոնք ուտվելով գրավչա-  
նյութի հետ միասին մնասատուի կողմից՝ առաջացնում են թու-  
նավորում: Այդ նպատակով ոգտադործվում են արսենի, Փոսֆի,  
քիչ քանակութամբ բարիումի միացություններ, Փոսֆորը,  
ստրիխնինը և այլն:

Վորպես գրավչանյութեր ոգտադործվում են բազմաթիվ տե-  
սակի նյութեր այլուր, հատիկ, միս, ճարպ, դազար, ճակնդեղ  
և այլն: Գրավչանյութի, ինչպես և թունավոր նյութի, ընտրու-  
թյունը կատարվում է յեղնելով մնասատուի տեսակից, հասա-  
կից, ինչպես նաև ձեռքի տակ յեղած թունավոր նյութերից և  
գրավչանյութերից:

Թույնի, ինչպես նաև գրավչանյութի ընտրությունը հիմնա-  
կանում վորոշում է թունավորված գրավչանյութերով մղվող  
պայքարի հաջողությունը: Գրավչանյութը վատ ընտրելու դեպ-  
քում՝ թունավորված գրավչանյութը կարող է վանել (խրոնեց-  
նել) մնասատուին և չուտվել, վորի հետևանքով պայքարը  
ջանկացած եֆֆեկտը չի տա:

Այս տեսակետից կարևոր է նաև թ. Ն. կոնցենտրացիայի  
ձիշտ ընտրումը, վորը պետք է լինի աչնալիսին, վոր տեղի չտրվի  
վանման, ուտվի և հանդիսանա լետալ՝ տվյալ մնասատուի հա-  
մար: Թ. Ն. շտորը և հատկապես արսենի միացություններն  
ունեն մնասատուների համար անդուրեկան համ, այդ անդուրե-  
կանությունը ավերանում է գրավչանյութի մեջ թ. Ն. ավերաց-  
նելիս: Թ. Ն. անդուրեկանությունը քողարկելու համար հա-  
ճախ թունավորված գրավչանյութերին խառնում են զանազան  
համեմունքներ՝ ճարպ, շաքար, ամիլացետատ, վանիլ և այլն:

Թունավորված գրավչանյութը, ըստ իրեն գործադրման նը-  
պատակի կարող է լինել— կտորներով խմորանման, ցրվող և  
հեղուկ: Մեկ մոտ թունավորված գրավչանյութերը մեծ չափե-  
րով ոգտադործում են նաև մորեխների դեմ պայքարելու հա-  
մար, վորի դեպքում պատրաստում են ցրվող (ալադանման)  
գրավչանյութեր, ոգտադործելով այդ նպատակի համար քուս-  
պը, փայտի և ալյուրի թեփը, ինչպես նաև ձիւղ գոմաղըրը ու  
բրնձի մղելը:

Սկննրի դեմ— գործադրում են դլխավորապես այլուրից  
կամ հացի կտորներից պատրաստած գրավչանյութեր, ինչպես  
նաև զանազան հատիկներ:

Թրքուրմերի դեմ (սովիաներ) մեծ մասամբ սպտապործում են քուսպի ալյուրը, վորով պատրաստված թունավորված գրայ-  
չանյութերը չաղ են աալիս վարակված դաշում, հաճախ թե-  
թեմ վերստով ծածկելով հողով (փոցխում են) : Յեթե դաշտում  
ծիլեր կան, ապա պետք է դրուշ լինել ալյուրվածքներէց :

Իշախտառջի դեմ— սպտապործում են ջարդած յեղիպա-  
ցորենի հատիկները, վորոնք թրջվում են համապատասխան թու-  
նավոր լուծույթի մեջ :

Պետք է սակ, վոր թունավոր գրայչանյութերի համար  
դերադասելի յեն այն Թ. Ն., վորոնք ջրում հեշտ լուծելի յեն  
վորովհետև այս պեպքում հնարավոր է լինում նրան հալասա-  
բաշտի տարածելու գրայչանյութի ամբողջ մասայի մեջ :

Մեծ սարածությունների վրա թունավորված գրայչանյու-  
թերով պայքար կազմակերպելիս՝ աշխատանքը մեքենայացնում  
են— այդ նպատակի համար սպտապործելով գրայչանյութերի  
ավտոցրիչներ և սզանավեր, ինչպես հոտային մորեխների գեմ  
պայքարելիս :

## Ա Խ Տ Ա Շ Ա Ն Ո Ւ Մ

Կոչվում է Թ. Ն. գործադրման այն ձևիլը յերբ նպա-  
տակ է գրվում վարակադերծ անելու ցանքսի համար  
նախատեսնված սերմացուն, վոչնչացնելով նրանց վրա գնտված  
զանազան սնկային հիվանդությունների սազմերը :

Մեկ մտտ ախտահանումը գործադրում են ամենից շատ սեր-  
մացու հացահատիկները մրիկից վարակադերծելու համար :  
Վերջերս բովականին մեծ հաջողությամբ ախտահանման են  
յենթարկվում նաև բանջարանոցային կուլտուրաների սերմացու-  
ները զանազան ֆուզարիումների գեմ, ինչպես նաև ծխախոտի  
սերմերը և կարտոֆիլի պալարները :

Տարբերում են ախտահանման յերեք հիմնական ձևեր :

1. Չոր ախտահանում, վորի ժամանակ թունավոր փոշիով  
փոշտում են ախտահանվող սերմացուն և լավ խառնում, վոր-  
պեսպի թունավոր փոշու մասնիկները հավասարաչափ ծածկեն  
ախտահանվող սերմերի մակերեսը :

Չոր ձևով ախտահանում են՝ ցորենը, — քարամրիկի գեմ  
և տարեկանը— քարամրիկի ու ցողունային մրիկի գեմ :

Գարին ու վարսակը չոր ձևով չի կարելի ախտահանել, վո-  
րովհետև չոր ախտահանիչները չեն փոչնչացնում հատիկների  
թեփուկների տակ գտնվող մրիկի սազմերը :

Չոր ախտահանման համար դործ են անում ԱԲ, պրոտարս (ՊԴ) և սնդիկ որդանական պրեպարատները: Չոր ախտահանումը համեմատած մյուս ձևերի հետ ունի այն առավելությունը, վոր ավելի հեշտ է մեքենայացման յենթարկվում և հնարավոր է ցանկերուց շատ առաջ սերմացուն ախտահանման յենթարկել ու պահել: Չոր ախտահանման համար սպտապործում են «Ուրոթայ», «Սդեալ» սխտեմի ձևերով աշխատող ախտահանիչ մեքենաները, ինչպես նաև հզոր ԱԲՎ ցարքավորումը:

Չոր ախտահանման ժամանակ թունավոր փոշու մասնիկները, կղզեբով սերմերին և նրա վրա դանվող սնկի սպորներին, հողի մեջ խոնավության ներկայութեամբ ազդում են սնկի սպորների վրա և փոխնչացնում վերջիններին: Չոր ախտահանման առավելութուններինց է նաև այն, վոր թունավոր փոշին՝ մնալով սերմի վրա՝ ազդում է նաև այն սպորների վրա, վորոնք կարող են նրան կղզել հողի մեջ:

2. Թաց ախտահանում.— Ելությունն այն է, վոր համապատասխան կերպով պատրաստած թունավոր լուծույթի մեջ ընկղմում են ախտահանող սերմացուն և պահում վորոշ ժամանակ: Ախտահանիչ նյութի աղղեցությունն այդ դեպքում պայմանավորվում է մի կողմից՝ Թ. Ն. կոնցենտրացիայով և մյուս կողմից նրա ազդման տեվողութեամբ, այսինքն՝ այն ժամանակամիջոցով, վորի ընթացքում սերմացուն դանվում է թունավոր լուծույթի մեջ (եկսպոզիցիա): Յեթե ախտահանման ժամանակ չեն պահպանվում կոնցենտրացիան և եկսպոզիցիան, այդ դեպքում սնկի սպորները կարող են անվնաս մնալ, և ընդհակառակը, յեթե կոնցենտրացիան և եկսպոզիցիան նորմալից ավելի չե վերցվում, ապա այդ դեպքում ախտահանումը կարող է բացասաբար ազդել սերմերի ծլունակութեան վրա: Թաց ախտահանման ժամանակ հնարավոր է լինում հավաքել և հեռացնել թունավոր լուծույթի մակերեսին դուրս յեկած մրիկի պարկերը:

Թաց ախտահանումը կատարում են կա՛մ համապատասխան մեքենաներով կա՛մ տակառների մեջ քթոցով սերմացուն նրա մեջ ընկղմելով, կա՛մ կույտերով ցնցուղների միջոցով այն սրսկելով:

Այս ձևով թաց ախտահանումը կատարելուց հետո՝ սերմացուն անպայման տամկացման են յենթարկում յերկու ժամ տեվողութեամբ, վորովհետև հենց այդ ժամանակ է, վոր Փորմալինի գործընթանը վոչնչացնում են մրիկի սպորներին:

Տամկացումից հետո սերմացուն չորացնում են: Թաց ախտահանումը կատարում են ցանքսից 2—3 ուր առաջ: Թաց ախտահանման համար ոգրադործում են Փորմալինը՝ հացահատիկները համար և սուլեման ու լյապիսը բանջարանոցային կուլտուրաների և ծխախոտի սերմերի համար:

3. Կիսաչոր ախտահանում.— Կիրառում են վարսակի քարամբիկի ու փոշեմբիկի և դարու քարամբիկի դեմ: Յորենը և տարեկանը կիսաչոր ձեյով ախտահանել չի կարելի, փորովհետև այս ձեյով ախտահանելու դեպքում ուժեղ կերպով իջնում է սերմացուի ծլունակությունը:

Կիսաչոր ախտահանումը սկզբունքորեն չի տարբերվում թաց ախտահանումից, տարբերությունը միայն թ. ն. դործածման տեխնիկայի մեջ է, այսպես որինակ յեթե թաց ախտահանման ժամանակ Փորմալինը (40%-ից) բաց են անում 1:300 ջրով, այս կիսաչորի դեպքում բաց են անում 1:80 հարաբերությամբ, բայց վերջինի դեպքում թունավոր լուծույթը ավելի քիչ են ծախում: Տամկացումը կատարում են 4 ժամ անվողությամբ: Կիսաչոր ախտահանումը կատարում են Ա.Բ.—2, Պոսլովի մեքենաներով, ինչպես նաև կուլտերով, փորի դեպքում հացահատիկը թափում են մոտ 30 սմ բարձրություն ունեցող կուլտերով և սրսկիչ մեքենայով (ավտոմատ կամ վերմորեր) և բարակ չիթով սրսկում և թխակով խառնում:

Մեկ կգը 40% Փորմալինով կարելի չե ախտահանել 27 ցենտներ փարսակ կամ 54 ցենտներ դարի:

### ՆԵՐՔԻՆ ՏԵՐԱՊԻԱ

Բիմիական պայքարի այս ձևին սկզբունքորեն տարբերվում է վերելի նկարագրված բոլոր մյուս ձեյերից: Այս ձեյի ելույթյունն այն է, փոր թ. ն. աշխատում են մացնել բույսի իրեն մեջ, աշխատելով դրանով իսկ փոչընչացնել կամ հեռացնել բույսի վրա դռնվող վնասատու որդանիքներին: Պայքարի այս ձեյը բնորոշվում է բժշկությունից, փորեղ համապատասխան բուժիչ նյութեր սրսկելով մարդու որդանիքի մեջ՝ նրան դիմացկուն են դարձնում այս կամ այն հիվանդության հանդեպ:

Այս մեթոդը հիմնավորվում է հետևյալ դատողություններով:

Բազմաթիվ միասատու միջատներ և համկապես սնկային հիվանդություններ ու ծծող միջատներ հարմարված են վոչ շատ տեսակի բույսերի, իսկ հաճախ միայն մի տեսակ բույսի:

Հետևապէս, յեթէ հաջողվի փոխել տվյալ բույսի ներքին խի-  
միզմը, ապա պետք է սպասել, վոր կիփովի նաև այն դործոնը,  
վորը հանդիսանում է տվյալ պարադիտի համար տվյալ բույսի  
հետ կապվելու պատճառը: Այսպէս որինակ նկատված է, վոր  
համապատասխան պարարտանյութերի ոգտադործմամբ հնարա-  
վոր է լինում ստանալ վորոշ բույսերի համար ժամանակավոր  
լիմֆունիտեա: Արմատների կողմից ծծվող վորոշ նյութեր այն-  
քան են փոխում բույսի բջջահյութի բաղադրութունը, վոր  
վնասատուի համար ստեղծվում է սնվելու և ապրելու համար  
անբարենպաստ պայմաններ: Հենց այդ ժամանակավոր լիմֆունի-  
տեան ստեղծելու համար աշխատում են մտցնել բույսերի մեջ  
զանազան Թ.Ն.: Այդ նպատակին հասնելու համար դործադրում  
են տարբեր ձևերը՝

1. Հեղուկների արարքցիա: Ա) արմատների վրա վնաս-  
վածքներ առաջացնելու միջոցով, բ) ցողունի վնասվածքների  
միջոցով, գ) կտրված տերևների միջոցով:

2. Բույսերի բջջահյութի մեջ լուծվող պինդ նյութի մու-  
ծումը:

3. Հողի ծծեցումը համապատասխան նյութերով, վորտեղից  
նրանք կլանվում են բույսի չվնասված արմատների կողմից:

4. Վարոշ նյութերի արարքցիան առողջ բույսերի կողմից:

Ինչպէս ցույց են տվել փորձերը, այս բոլոր ձևերի ժամա-  
նակ կարևորն այն է, վոր բույսին ոտար նյութերը կլանվեն  
բույսի կողմից և հավասարաչափ տարածվեն նրա մեջ և միա-  
ժամանակ անլուտանդ լինեն վերջինի համար: Այդ նպատակի հա-  
մար փորձարկվել են ցիանի միացութունները, յերկաթի աղերը,  
սնդիկի և արսենի միացութունները, զանազան բուսական ալկո-  
լիզներ և այլն:

Ամենից լավ արդյունքներ ստացվել են չոր բծալորության  
դեմ մարզանցի սուլֆատի ոգտադործումից: Վերջինս վրձինով  
քսվում է հիվանդ բույսի տերևներին: Լավ արդյունք է տալիս  
նաև յերկաթ սուլֆատի և յերկաթի լիմֆունաթթվային աղի ոգ-  
տադործումը քլորոզ հիվանդության դեմ, վորի դեպքում Թ.Ն.  
մացվում է բույսի մեջ արմատի կամ ցողունի միջոցով: Այս  
մեթոդը վերջերս մեծ չափով ոգտադործում են ցիտրուսային  
կուլտուրաների քլորոզ հիվանդության դեմ: Այս դեպքում մեծ  
ծառերի բների վրա սպիրալաձև դասավորված անցքեր են բաց-  
վում և նրանց մեջ լցնում յերկաթի լիմֆունաթթվային աղը և

անցքերը փակում: Մնացած բոլոր փորձերը ավել են բացասական կամ վիճելի արդյունքներ: Պետք է յենթադրել, վոր քիմիական սպաքարի այս ձևը բույսերի Ֆիզիոլոգիայի հետազոտարդացման հիման վրա կգտնի իր ավելի լայն կիրառությունը:

## Ի Ն Ս Ե Կ Տ Ի Ս Ի Դ Ն Ե Ր

Ինսեկտիսիդներ են կոչվում այն թունավոր նյութերը, վորոնք ոգտապործվում են վնասատու միջատներին թունավորելու վախճացնելու համար: Իրենց հանդես բերած Ֆիզիոլոգիական ազդեցության տեսակետից՝ ինսեկտիսիդները կարող են լինել՝ աղիքային, կոնտակտ կամ արտաքին ազդման և Փումիզանտներ,

Նայած թունավոր նյութի կիրառման նպատակին, ինսեկտիսիդները կարող են գործադրվել փոշոտման, սրսկման, Փումիզացիայի կամ թունավոր գրավչանյութերի միջոցով:

Աղիքային ինսեկտիցներ.

Աղիքային են կոչվում այն տեսակի ինսեկտիսիդները, վորոնք գործ են անվում կրծող միջատների դեմ և կերի հետ միատին ուսովելով նրանց կողմից, ընկնում են ստամոքսը ու ներծծվելով ստամոքսի պատերի միջոցով անցնում հեմոլիմֆի մեջ և առաջ բերում թունավորում:

Առանձին դեպքերում աղիքային ինսեկտիսիդները կարող են ոգտապործվել նաև ծծուղ ու լիզոլ միջատների դեմ (որինակ ճանճերի):

Ինսեկտիսիդը կերի հետ կերակրափողից անցնում է քուջի և մկանային ստամոքսի մեջ, թքի զեղձերի սեկրետոր հյութերի և կերի մեջ դանիած դանազան նյութերի ազդեցությամբ յենթարկվում և վորոչ փոփոխության, տեղիք տալով նոր քիմիական բաղադրությունների առաջացման: Այսպես որինակ, յեթե կերի մեջ կան վորոչ քանակի դարաղանջութեր, ապա նրանց ազդեցության տակ ալկոլոլիդները դառնում են պակաս լուծելի և շեն ծծվում աղիքի պատերի կողմից: Ծանր մետաղների (արձիճ և ալյն) աղերը սպիտակուցների ներկայությամբ տալիս են վատ լուծելի պրումինատներ:

Այնուհետև թունավոր նյութը կերի հետ անցնելով միջին աղիք՝ յենթարկվում է նոր փոփոխությունների: Միջին աղիքում են տեղի ունենում մարսողության բոլոր հիմնական պրոցեսները: Միջին աղիքի եպիթելային հյութավածքների սեկրետոր

բջիջների արտադրած հյութերի ազդեցութեամբ թունավոր նյութերը միջին աղիքում յենթարկվում են հիմնական վերամշակման, վերածվում են լուծելի վիճակի և մնացած սննդանյութերի հետ միասին ներծծվում հեմոլիմֆի մեջ: Այդպիսով, կարելի չէ ասել, Վոր աղիքային թույնների թունավորման հիմնական պրոցեսը կատարվում է միջին աղիքում: Ասածներիցս կարելի չէ յեզրակացնել, Վոր լավ լուծելի աղիքային ինսեկտիսիդները, հանդես կրեւեն ավելի բարձր թունունակութուն:

Այնուհետեւ, արժե նշել, Վոր միջատների տարբեր տեսակները տարբեր մերայ են վերաբերվում գեպի նույն տեսակի ինսեկտիսիդի ազդեցութեանը: Այս յերեվույթի բացատրութունը պետք է վնասել տարբեր միջատների ստամոքսահյութերի ռալիցիաների (PH), ինչպես նաեւ մարսողութեան պրոցեսների ընթացքի տարբերութունների մեջ: Այն տեսակ միջատները, Վորոնց մարսողութունը կատարվում է շատ արագ և Վորոնց մոտ մարսման յենթակա նյութերը (ինսեկտիսիդի հետ միասին) յերկար շէն մնում ստամոքսի մեջ և կամ ստամոքսի սեկրետոր գործունէսյութունն աչնքան թույլ և, Վոր շի հասցնում ինսեկտիսիդին լուծելի վիճակի վերածելու, այդպիսի միջատները անհուշտ տվյալ ինսեկտիսիդի հանդես ավելի դիմացկուն կլինեն:

Այս յերեվույթի հաճախ և նկատվում բույսերի պաշտպանութեան պրակտիկայում, այսպես որինակ, մորելիս դեմ պայքարելու համար, ինսեկտիսիդները գործադրման սովորական գոգանները դառնում են անընդունելի, Վորովհետեւ մորելիների մոտ մարսողութեան ամբողջ պրոցեսը սննդանյութերը ընդունման մոմենտից մինչև դուրս դալը տեվում է ընդամենը մի քանի տասնյակ բոպի:

Աղիքային ինսեկտիսիդները սննդանյութերի հետ անցնելով հեմոլիմֆի մեջ տարվում են որդանիզմի տարբեր մասերը և հանդես բերում իրենց հատուկ ազդեցութունը:

Միաժամանակ աղիքի պատերի եպիթելալին բջիջները նույնպես յենթարկվում են թունավոր ազդեցութեան և մեծ մասամբ մեռնում են (նեկրոզ):

Այդպիսով, աղիքային թույնների ազդեցութունը կարող է հանդես գալ յերկու կերպ— ընդհանուր կամ սեղորբալի, Վորը արտահայտվում է առանձին որդանների կամ որդանների սի-

ասմաների ֆունկցիոնալ խանգարումով և նեկրոզ կամ տեղական, ինչպես որինակ աղիքի սլատերի հյուսվածքների քայքայումը:

Հաճախ ինսեկտիսիզի առաջացրած ուժեղ տեղական աղբյուրներն առաջ ե բերում որգանիզմի կողմից ուժեղ հակաազդեցություն, վորի հետեվանքով թունափոր նյութի զգալի մասը դուրս ե մղվում որգանիզմից փորհարիքի և փխտումի միջոցով Այդպիսի յերեւոյթ նկատում ե այն դեպքերում, յերբ միջատին տրվում ե շափից դուրս շատ թունափոր նյութ և նամանականդ, յեթե ավյալ ինսեկտիսիզն ել ունի ուժեղ արտահայտված ուտիչ հատկութուն (որինակ արսենի միացությունները): Ընդհակառակը յեթե միջատի կողմից կերված թունափոր նյութի դողան նորմալից քիչ ե որգանիզմը կարողանում ե վերամշակել նրան, քայքայված կոիթեկային բջիջները փոխարենն առաջանում են նորերը և թունափոր նյութի աղբյուրությունը անվտանգ և դառնում որգանիզմի համար: Այս դեպքում որգանիզմի կողմից վերամշակված թունը կամ դուրս ե բերվում որգանիզմի միջից արտաթորություների միջոցով, կամ կումուլյացիայի յե յենթարկվում (կուտակվում ե) որգանիզմի առանձին մասերում, հասկապես ճարպային մարմիններում: Նկատված ե նույնիակ այնպիսի դեպքեր, յերբ հիվանդ միջատները ընդունելով թունափոր նյութի փոքր դոզա առողջանում են շնորհիվ այն հանդամանքի, վեր թունափոր նյութի քիչ քանակը ստերիլիզացիայի յե յենթարկում որգանիզմը և փոխանակ թունափորերու բուժիչ ե հանդիսանում:

Այս բոլոր ասածներից սլարզ ե դառնում տարբեր միջատների մարտողությանն ուսումնասիրության և սրա հետ կապված ազդեցային թունափոր նյութերի դողաների— կոնցենտրացիաների ու ծանխման նորմաների ճիշտ ընտրության անհրաժեշտությունը քիմիական սլաքարի ժամանակ:

Աղիքային թունները հաճախ ուտվելով քիչ քանակությամբ և անվնաս մնալով միջատի ավյալ ստաղիկայի համար, իրենց ազդեցությունը հանդես են բերում միջատի զարգացման հետագա ստաղիկաների վրա: Այսպես որինակ հայտնի յեն դեպքեր, յերբ տաքագույզ մետաքսագործի թրթուրները ընդունելով նատրիումի ֆտորոսիլիկատի սուրբետալ դողաներ, շարունակում են ապրել, հարսենկափորվել են, դուրս են յեկել թիթեռները, բայց վերջներին ածած ձվերից մինչև 75,0% փչացել են, թունափորված թրթուրներից ստացված թիթեռների ձվերի 7,7% փչացման դեպքում:

## ԱՂԻՔԱՅԻՆ ԻՆՍԵԿՏԻՍԻԴՆԵՐԻ ՇԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Աղիքային խտեղտիսիդների մեծ մասը արսենի միացություններ են: Արսենի միացությունների լայն դորձածությունը պայմանավորվում է միջատների հանդեպ նրանց ունեցած բարձր թունունակությամբ, եփանությամբ և հեշտ ձևաքերվելիությամբ:

Վերջերս դորձածության մեջ են մտնում նաև ֆատրի պրեպարատները: Վերջիններս ալելի պակաս թունունակ են միջատների համար, բայց համեմատած արսենի միացությունների

հետ ալելի քիչ վտանգավոր տաքարչուն կենդանիների համար: Այնուհետև աղիքային թույներից բախականին մեծ տարածում ունի մեղ մոտ նաև քլորակալն բարիումը:

### ԱՐՍԵՆԻ ՊՐԵՊԱՐԱՏՆԵՐԸ

Արսենի պրեպարատները հիմնականում կարելի չէ բաժանել յերկու խմբի— արսենատներ (հնգարժեք արսենի պրեպարատներ) և արսենիտներ (յեռարժեք արսենի պրեպարատներ):

ՄՊԻՏԱԿ ՄԿՆԴԵՂ.— Սպիրտակ մկնդեղը— $As_2O_3$  ստացվում է արսենի հանքերից, վորոնք բնության մեջ դանդում են վորպես աուրիպիմենա  $As_2S_3$ , ռեալգար  $As_2S_2$ , արսենի կոլչեզան  $FeS_2 \cdot FeAs_2$  և այլն: ԽՄՀՄ—ում արսենի հարուստ հանքերը դանդում են Ուրալում, Հեռավոր արևելքում, Միջին Ասիայում, Անդրկովկասում և այլ վայրերում: Վերջը թված հանքերը հատուկ վտարանների մեջ այրելիս արսենը թորվում է, միանում ողի թթվածնի հետ և առյիս սպիրտակ մկնդեղ  $As_2O_3$ : Սպիրտակ մկնդեղը մաքուր վիճակում սպիրտակ դույնի մանր փոշի յե, 3,7 տեսակարար կշռով:

Արտադրվում է յերեք տեսակի: 1. Տեխնիկական 97%  $As_2O_3$ -ի պարունակությամբ, 2. Ռաֆինադ 99,5%  $As_2O_3$ -ի պարունակությամբ, 3. Ապակեման (ամորֆ) 99,9%  $As_2O_3$ -ի պարունակությամբ: Սպիրտակ մկնդեղը փաթեթվում է 25,50 և 100 կգր. սառույթյան յերկաթյա տակաոնների մեջ:

Լուծելիությունը ջրի մեջ համեմատաբար բախական բարձր է, այսպես որինակ, սառը ջրի մեջ լուծվում է 1—1,5%, տաք ջրի մեջ մինչև 10%, ըստ փորում սառեցնելիս 6%-ը նստում է, իսկ 4%-ը մնում է լուծույթում:

Սպիրտակ մկնդեղը ուժեղ չափով այրում է բույսերին, վորի



3. Ջրում լուծելի  $As_2O_5$  և  $As_2O_3$  վոչ ավելի 0,6%-ից

4. Ազատ  $CaO$  վոչ ավելի 2 տոկոսից

5. Խոնավություն վոչ ավելի 1 տոկոսից

6. Ծամալային կշիռը 0,6 կգր. (լիտր) :

Մանրվածքը— 200 մեկ (6400 անցք մեկ քառակուսի սմ. վրա) մաղի միջով պետք է անցնի պրեպարատի 95 տոկոսը իսկ մնացած 5 տոկոսը պետք է անցնի 150 մեկ մաղի միջով :

Հաճախ ջրում լուծելի արսենի տոկոսը կալցիումի արսենատի մեջ անցնում է 0,5%-ից, վորի հետևանքով կալցիումի արսենատը ալրվածքներ է առաջացնում :

**ՔԻՄԻԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ :** Ընդհանրապես հայտնի չեն կալցիումի արսենատի յերեք տեսակներ՝  $Ca_3(AsO_4)_2$ ,  $CaHAsO_4$  և  $CaH_4(AsO_4)_2$  :

Գործարանային յեղանակով պատրաստած կալցիումի արսենատի քիմիական բաղադրությունը ղեռ մինչև հիմա լրիվ ճիշտությամբ պարզված չէ : Յեղած տվյալների համաձայն՝ պրեպարատի հիմնական մասսան կազմում է ջրում վատ լուծելի (0,31% 25°C-ի դեպքում)  $CaHAsO_4$  : Ավելի քիչ քանակությամբ դանվում է, ջրում ավելի վատ լուծելի (0,013% 25°C)  $Ca_3(AsO_4)_2 \cdot 2H_2O$  և ջրում անլուծելի կալցիումի այլ աղեր : Բացի այս, պրեպարատի մեջ կարող են լինել համեմատաբար ջրում լավ լուծելի  $As_2O_3$  և  $Ca(OH)_2$  : Կալցիումի արսենատը յերկար ժամանակ պահելիս և կամ փոշոտելիս ու սրտկելիս տերեւների վրա, ողի  $CO_2$ -ի ազդեցության տակ փոփոխվում է՝ չեղոք  $Ca_3(AsO_4)_2 \cdot 2H_2O$  դառնում է  $CaHAsO_4$ — թթու աղ, իսկ հիմքային աղերը վեր են ածվում չեղոքի : Յերկու դեպքում էլ փոփոխությունները պատճառ են դառնում ջրում լուծելի արսենատթթվի առաջացման, վորը և տեղիք է տալիս բույսերի՝ ալրվածքների : Ալրվածքները կանխելու համար հաճախ ավելացնում են կիր, վորը չեղոքացնում է առաջացած ազատ արսենատթթուն և միաժամանակ թթու և չեղոք արսենատները դարձնում է հիմքային, բայց պետք է ստել, վոր կիրը շատ քիչ դեպքերում են ավելացնում : Ընդհանրապես կալցիումի արսենատը բույսերի մեծ մասի վրա ալրվածքներ չի առաջացնում, դոնե վերջին տարիներում Հայաստանի պայմաններում կալցիումի արսենատի մասսայական ոգտագործման դեպքերում ալրվածքներ չեն նկատվել (ճակնդեղի, խաղողի, առվույտի և բամբակի վրա), բայց պետք է նշել, վոր դրականության մեջ յեղած տվյալների համաձայն

կալցիումի արսենատը հաճախ այրվածքներ և առաջացնում, որինակ Միջին Ասիայում յեղել են դեպքեր, յերբ կալցիումի արսենատի դործածության հետեվանքով այրվել են դեղձի և ծիրանի ծառերը:

Գրախնության մեջ հիշվում են նույնիակ դեպքեր, յերբ 0,09% ազոտ արսենատիթու պարունակող լավորակ պրեկարտը առաջ և բերել այրվածքներ:

Այս հանգամանքը նկատի ունենալով՝ անհրաժեշտ և փորոշ դոզալություն հանդես բերել կալցիումի արսենատի դործածության ժամանակ:

Գործածությունը: կալցիումի արսենատը, ունենալով լավ մանրվածք և բավական լավ կալչողականություն, մեծ հաջողությամբ ոգտադործվում և փոշոտման համար: Նրա փոշոտելիությունը լավացնելու ինչպես նաև փոշու ընդհանուր ծախար մեծացնելու համար հաճախ նրա հետ խառնում են ապակ, կալիճ, մոխիր և այլն, փորպես լուծույթ ոգտադործելիս՝ նրանից պատրաստում են սուսպենզիաներ:

Արսենատ կալցիումը ոգտադործում են տեխնիկական կուլտուրաների, թիթեոնածղիկ բույսերի, խաղողի վաղի, ճակնդեղի, բանջարանոցային և այլ կուլտուրաների վնասատուների դեմ պայքարելու համար: Մեղ մոտ Հայաստանում կալցիումի արսենատը բավականին մեծ հաջողությամբ վերջին տարիներում դործադրվում և կարագրինայի դեմ պայքարելու համար ճակնդեղի, բամբակի, կարտոֆիլի և այլ բանջարանոցային կուլտուրաների վրա:

Լավ արդյունքներ են ստացված խաղողի փոզկույրակերի դեմ դործադրելիս: Լայն փորձեր են կատարվում այն՝ առվույտի յերկարակնճիթի դեմ ոգտադործելու ուղղությամբ:

Կալցիումի արսենատի ծախսման նորման մեկ հեկտար դաշտային կուլտուրաների համար փորպես փոշի ոգտադործելիս տատանվում և 8—15 կգր., իսկ խաղողի և պողատու ալգինների համար 15—20 կգր: Վորպես լուծույթ ոգտադործելիս՝ նրանից պատրաստում են 0,3—0,5 տոկոսանի սուսպենզիա, նայած այն հանգամանքին, թե ինչ վնասատվու դեմ և ոգտադործվելու թունավոր լուծույթը: Թունավոր լուծույթին կալչողունակություն տալու համար խորհուրդ և արվում նրան ավելացնել պատուկա, դոշար և այլ կալչող նյութեր:

Կալցիումի արսենատը կարելի յի ոգտադործել բորգոյան հե-

դուկի, ծծմբի, անարադին և նիկոտին սուլֆատների հետ համա-  
տեղ: Ստալոնի հետ նրան չի կարելի ուղտադործել, վորովհետև  
այս դեպքում առաջանում է կալցիումի ստալոն, վորը տալիս է  
փաթիլանման նստվածք և փակելով սրակիչների ծայրայանակե-  
լը՝ խանգարում սրակման ալյատամքիներին:

**ԿԱԼՅԻՈՒՄԻ ԱՐՍԵՆԻՏ (Մկնդեղաթթվային կալցիում):** Կալ-  
ցիումի արսենիտը իրենից ներկայացնում է մետաարսենիտաթթ-  
վի կալցիումի աղ: Նա նույնպես, ինչպես և կալցիումի արսե-  
նատը, ունի մեծ տարածում բույսերի պաշտպանութան դո-  
ծում:

Պատրաստվում է դործարանային կիտաչուր յեղանակով, սպի-  
տակ մկնդեղի և կրի փոխադրման միջոցով:

Գործարանային յեղանակով պատրաստած կալցիումի արսե-  
նիտը (ՈՍՏ 5883) — իրենից ներկայացնում է արսենիտաթթվի մի-  
քանի սպերի խտնուրդ, վորոնցից  $\text{Ca}(\text{HAsO}_3)_2$  և  $\text{CaHAsO}_3$   
չբում դրայիորեն լուծվում են և կարող են բույսերի վրա աչք-  
վածքներ առաջացնել, իսկ  $\text{Ca}_3\text{As}_2\text{O}_6$  չեղրք աղը ավելի քիչ լու-  
ծելի չէ և անվտանգ բույսերի համար:

**ՈՍՏ-ի համաձայն կալցիումի արսենիտը պետք է պարունակի**

$\text{As}_2\text{O}_3$  . . . . . 70—72%

$\text{As}_2\text{O}_5$  վոչ ավելի . . . . . 2%-ից

Ազատ  $\text{CaO}$  վոչ ավելի 1%-ից

Մոնաֆոսֆյունը վոչ ավելի 1%-ից:

Սպիտակ գույնի փոշի չէ, հաճախ կեղտոտ սպիտակադույն:  
Մանրվածքը՝ պրեպարատի 95%-ը պետք է անցնի 200 մեշ մաղի  
միջով: Մեկ լիտր կալցիումի արսենիտը կշռում է 900—1000 գր:  
Փաթեթավորվում է 25 և 50 լիտրանոց ֆաներկայից պատրաս-  
տած տակաոնների մեջ, վորոնց ներսի կողմից դրվում է հատուկ  
ջրանիթափանցիկ թուղթ:

Գործադրումը: Նկատի ունենալով այն հանդամանքը, վոր  
կալցիումի արսենիտը ալքլվածքներ առաջացնելու մեծ ընդունա-  
կություն ունի՝ նրան սրակման կամ փոշոտման համար չեն ող-  
տադործում, կամ յեթև ողտադործում են, սպա ավելի զիմաց-  
կուն տերեփներ ունեցող բույսեր փոշոտելու կամ սրակելու հա-  
մար, ինչպես սրինակ անտառների փոշոտման համար: Նա հան-  
դիսանում է հիմնական ինսեկտիսիդը մորեխների և մարգագետ-  
նաթիթեկի թրթուրների դեմ մոլախտների վրա պայքար կազմա-  
կերպելիս:

Սալփոսնակների ուղնությամբ փոշոտելիս ծախսման նորման անտառների համար վերցնում են 10 կգ. մեկ հեկտարին, իսկ մորեխների և մարգագեանաթիթեռի թրթուրների համար—4 կգ. :

Կալցիումի արսենատի հետ համեմատած կալցիումի արսենիտը յերկու անգամ ավելի թունունակ է, վարովհետև արսենիտովոր նրա մեջ մոտ յերկու անգամ ավելի յե, և լացի ալյւ արսենիտաթթվային աղերը, վորպես լավ լուծելի, ավելի թունունակ են քան արսենաթթվական աղերը :

Կալցիումի արսենիտի փոշոտելիությանը լավացնելու, ինչպես նաև ընդհանուր մասսան ավելացնելու նպատակով (վորպես զի հնարավոր լինի 3—4 կգր. փոշին մեկ հեկտարի վրա հավատարաչափ բաշխել)՝ նրա հետ խառնում են կիր, մոխիր, կալիւմ, գիտտոմիա և այլ նյութեր, 3—6 անգամ կալցիումի արսենիտից ավելի :

Մրսկելու համար կալցիումի արսենիտը համարյա բոլորովին չեն ոգտադործում, վարովհետև շատ ուժեղ ալրվածքներ և առաջացնում :

Գործադրվում է նաև թունավորված դրամչանյութեր պատրաստելու համար : Մորեխների դեմ պալքարելիս վերցնում են 100 կգր. դրամչանյութին 2,5 կգր. կալցիումի արսենիտ :

**ՆԱՏՐԻՈՒՄԻ ԱՐՍԵՆԱՏ՝** (Մկնդեղաքթվական նատրիում) :

Նայած պատրաստման յեղանակին՝ նատրիումի արսենատը կարող է լինել վորպես 1.  $\text{NaH}_2\text{AsO}_4$  2.  $\text{Na}_2\text{HASO}_4$  3.  $\text{Na}_3\text{AsO}_4$  : Քիմիական բաղադրության փոփոխության հետ միասին փոփոխվում է նաև նրա մեջ յեղած  $\text{As}_2\text{O}_5$ -ի % -ը : Քիմիորեն մաքուր  $\text{Na}_2\text{HASO}_4$  պարունակում է 61,7%  $\text{As}_2\text{O}_5$  : Արտաքին տեսքով սպիտակ կամ թեթեզ գորշ դույնի իտչոր հատիկավոր փոշի յե : Նատրիումի-արսենատը համեմատած նատրիումի արսենիտի հետ մոտ յերկու անգամ ավելի պակաս թունունակ է, չնայած այն հանդամանքին, վոր արսենի պարունակությունը նրա մեջ համարյա նույնն է : Այլ իսկ պատճառով նատրիումի արսենատը տեքիայումս բույսերի պաշտպանության պրակտիկայում համարյա չի ոգտադործվում, այն վորոշ չափով ոգտադործում են կալցիումի արսենատ ստանալու համար (նատրիումի արսենատին ավելացնում են կրակաթ) և քիչ քանակությամբ ոգտադործվում է թունավորված դրամչանյութերում :

**ՆԱՏՐԻՈՒՄԻ ԱՐՍԵՆԻՏ**— (Մկնդեղաքթվային նատրիում) :

Արսեն պարունակող ինսեկտիցներից նատրիումի արսենիտը ամենից շատ տարածվածներիցն է և հատկապես դրամչա-

նյութեր պատրաստելու համար հանդիսանում է առաջնակարգ ինտեկտիսիզմներից մեկը :

Պատրաստվում է զործարանային յեղանակով  $As_2O_3$ -ից և  $Na_2CO_3$ -ից : Նաորիումի արսենոսն իրենից չկերկայացնում է արսենիտաթթվի նաորիումի աղը և արտահայտվում է  $Na_2HAsO_3$  քիմիական Ֆորմուլայով, վորի մեջ  $As_2O_3$  կազմում է 58,22 տոկոս, բայց հաճախ պատահում են նաորիումի արսենիտի նրմուհներ, վորոնց մեջ  $As_2O_3$ -ի տոկոսը տատանվում է 42,86-ից մինչև 85,15, այս հանդամները բացաորվում է նրանով, վոր արսենիտաթթուն կարող է զոյություն ունենալ վորպես մետապորոս — և պիրոարսենիտաթթու, իսկ վորովհետև վերջին յերկուսը յերկհիմքային են, հետևապես հնարավոր է նաորիումի արսենիտի մի շարք պրեկարատների զոյությունը, վորոնք իրարից կտարբերվեն նոս  $As_2O_3$ -ի պարունակությամբ : Կախված այն հանդամներից թե թթվի մեջ ջրածնի քանի տամն և վոր յարբինված մետաղով, կարելի յե պատկերացնել հետևյալ աղերը  $Na_3AsO_3$  — 51—55 տոկոս  $As_2O_3$ -ի,  $Na_2HAsO_3$  — 66,8 տոկոս  $As_2O_3$ -ի պարունակությամբ և այլն :

ՈՍՏ-ի համաձայն (5885/133) նաորիումի արսենիտը արսենիտաթթվային նաորիումի տարրեր աղերի խառնուրդ է : Պատրաստվում է յերկու տեսակ մանր աղացվածքով՝ 200 մեշ մաղի միջով անցնում է պրեկարատի 95 տոկոսը (վորոտաման համար) և յաշոր աղացվածքով՝ յուձայթներ պատրաստելու համար :  $As_2O_3$ -ի տոկոսը նրանց մեջ պետք է լինի 79—82, ջրում անլուծելի մնացորդ մեկ տոկոսից ավելի չպետք է լինի :

Վերջերս նաորիումի արսենիտը արտաղրվում է զլիտալորպես պատտա վիճակում 52,5  $As_2O_3$ -ի պարունակությամբ, վորը շորանուրոց հետո պնդանում է և զառնում քաբի նման պինդ սե կամ մոխրագույն կտորներով պրեկարատ : Նախքան զործածելն անհրաժեշտ է ստուգել նրա մեջ յեղած  $As_2O_3$  տոկոսը, վորովհետև քանի բարձր է նրա տոկոսը, այնքան ավելի թունոնակ է այն :

Բուր տեսակի նաորիումի արսենիտները ջրում հեշտ և լավ լուծելի յեն և ուժեղ չաթով աղղում են բույսերի վրա, այդ հատկությունը հնարավորություն է տալիս ողտաղործել նրան վորպես հերբիսիդ մոլախոտ բույսեր վորնչացնելու համար : Նաորիումի արսենիտի ողտաղործումը կուլտուրական բույսեր արակելու կամ վորտակելու համար, նույնիսկ այն զեպքերում,

յերբ նրան ոգտադործում են շեղաքայնող նյութերի հետ (հետը խտնում են կիր) միշտ տեղիք և տալիս ուժեղ այլաձևերի առաջացմանը, վորի պատճառով նրան չեն ոգտադործում կուլտուրական բույսեր սրմեկու համար: Հիմնականում նատրիումի արսենիտը ոգտադործվում է թունափորված գրափշանյութեր պատրաստելու և վալրի բուսականութան փոշոտման համար, որինակ, մորեխների դեմ պալքարելու նպատակով յեղեղնուտները փոշոտելիս:

Նատրիումի արսենիտի ջրում լավ լուծելիությունը հնարավոր է դարձնում թունափոր նյութը հալասարաչափ տարածելու գրափշանյութի մեջ, իսկ վերջին հանդամանքը շատ կարևոր է՝ լավալրակ թունափորված գրափշանյութ պատրաստելու տեսակետից:

Մորեխների առաջին յերկու հասակների դեմ պալքարելու համար թունափորված գրափշանյութ պատրաստելիս վերցնում են 100 կգր գրափշանյութին 1,5—2,5 կգր նատրիումի արսենիտ: Թեվալոր մորեխների դեմ պալքարելիս վերցնում են 100 կգր գրափշանյութին 3—5 կգր:

Արսենիտի լուծույթը գրափշանյութի համար պատրաստվում է 5—7 տոկոսանի, ալլ կախված է այն հանդամանքից, թե ինչ տեսակի գրափշանյութ է ոգտադործվելու: Վորքան քիչ խոնավություն կրանող է գրափշանյութը (որինակ քուտղի ալյուրը, այլուրի թեփը և այն)՝ համեմատած փայտի թեփի և ձիու գոմաղբի հետ, այնքան ավելի քիչ քանակի ջուր է հարկավոր, վորպեսպի թունափորված գրափշանյութն ստացվի ցանկացած խոնավության աստիճանի և լավ սորուն լինի: Ընդհանրապես նկատված է, վոր 100 կգր շոր գրափշանյութին ծախսվում է 40 լիտր ջուր: Իմանալով ալլ և պտորաստվելիք թունափորված գրափշանյութի բնդհանուր քանակը, կարելի յե ճիշտ կերպով հաշվել վերցվելիք ջրի և թունափոր նյութի քանակը և համապատասխանորեն ընտրել թունափոր լուծույթի կոնցենտրացիան: Նկատի ունենալով այն հանդամանքը, վոր գրափշանյութերը միշտ նույն խոնավությունը չեն ուտենում, և նրանց խոնավությունը նորմալ ստորիճանի հասցնելու համար կարհանջվի ջրի տարբեր քանակ, լավ է յե յեթե նախքան մեծ քանակի թունափորված գրափշանյութ պատրաստելը՝ պատրաստվի քիչ քանակի փորձնական, պահանջվող ջրի ճիշտ չափը վորոշելու համար: Այս անհրաժեշտ է թունափոր նյութի և գրափշանյութի ճիշտ հարաբերությունը պահպանելու տեսակետից: Նատրիումի արսենիտը մեծ հաջողու-

Թյամբ ուղտագործվում է նաև ծղրիղների, դաշտաչին ճուղիների, փշախառնիչի և այլ մնաստու միջատների դեմ թունավորված գրավչանյութերով պայքար կազմակերպելիս: Գրավչանյութի բնորոշյունը միշտ հարմարեցնում են մնաստովի հակումների: Նատրիումի արսենիաը ուղտագործվում է նաև կանաչ թունավոր գրավչանյութեր պատրաստելու համար, աշնանացանի թրթուրի, մարգարեանաթիթեռի թրթուրների, սովկա դամմայի թրթուրների դեմ պայքարելիս:

Այս դեպքում պատրաստվում է 0,8 տոկոսանոց նատրիումի արսենիաի լուծույթ: Լուծույթի հետ խառնում են այլուր կամ շաքարաաղանք 100 լիտր լուծույթին 1 կգր հաշվով: Այդ ձևով պատրաստված լուծույթի մեջ թափախում են նոր քաղված կանաչ բույսեր և դասավորում նրանց վորսող ստունների մեջ կամ ուղղակի պաշտպանվող դաշտերի շուրջը:

Մկների դեմ ուղտագործելիս՝ թունավորված գրավչանյութը պատրաստում են հացով, նրա փոքր՝ ընկույղի չափ կտրոնները 1—2 բույս տեխողությամբ թափախելով 3—5 տոկոսանոց հասարիումի արսենիաի լուծույթի մեջ: Բացի հացից, նույն նպատարիումի արսենիաի լուծույթի մեջ: Բացի հացից, նույն նպատարիումի համար կարելի չե ուղտագործել նաև հատիկը, վորը 1—2 ժամ կեռացվում է արսենիաի լուծույթում կամ սառը վիճակում պահվում մեկ օր:

Փոչոտման նպատակներով որդտագործելիս՝ մեկ հեկտարին վերցնում են 4—5 կգր նատրիումի արսենիա, նրա հետ խառնելով գանազան կողմնակի խառնուրդներ, մեկ մաս թունավոր նյութին 5—6 մասի հաշվով:

Մրսկումների դեպքում, փայլի բուսականություն արսելիս, պատրաստում են 0,2—0,6 տոկոսանոց լուծույթներ:

ՓԱՐԻԶՅԱՆ (Շվեյցիֆուրտյան) ԿԱՆԱԶ. Արսեն պարունակող ինտեկտիսիղների մեջ իր գործադրության տեսակետով փարիզյան կանաչը բոլորից հինն է: Փարիզյան կանաչն առաջին անգամ ուղտագործվել է 1867 թվին կարտոֆիլի կոլորադոյի բղղի դեմ պայքարելու համար: Մինչև այդ փարիզյան կանաչը հայտնի չեք վորպես կանաչ ներկ թիթեղյա տանիքներ ներկելու համար: Չնայած իր գործադրման հուսթյանը՝ շատ ասպարիզներում փարիզյան կանաչը մինչև օրս դեռ մնում է անփոխարինելի ինտեկտիսի: Այս հանգամանքը բացատրվում է մի կողմից՝ նրա ունեցած բարձր թունունակությամբ միջատների հանդեպ և մյուս կողմից՝ համեմատականորեն քիչ այրվածքներ առաջացնելու հանգամանքով:

Յերկու այնպիսի տակոսֆորներն ներկայութեանը մի պրեպարատի մեջ ինչպիսիներն են արսենը և պղինձը, դարձնում են նրան բարձր թունուհակ:

Քիմիական բաղադրութեան անսակեալից փարիզյան կանաչը հանդիսանում և քաղցրաթթվային և մկնդեղաթթվային պղինձի կրկնակի աղը—  $\text{Cu}(\text{CH}_3\text{CO}_2) \cdot 3\text{Cu}(\text{AsO}_2)_2$ :

Պատրաստում են գործարանային յեղանակով հետևյալ կերպ՝ սկզբում  $\text{As}_2\text{O}_3$ -ի վրա ազդելով սոդայով ( $\text{Na}_2\text{O}_3$ ) ստանում են նատրիումի մետասարսենիտ՝  $\text{NaAsO}_2$ : Ստացված նատրիումի մետասարսենիտի լուծույթը լցնում են  $\text{CuSO}_4 \cdot 5\text{H}_2\text{O}$ -ի լուծույթի վրա, ստացվում և պղինձի մետասարսենիտ  $\text{Cu}(\text{AsO}_2)_2$  և ամթաթթվային պղինձ՝  $\text{CuCO}_3$ : Վերջիններին վրա քաղցրաթթու ամբլացնելիս ամթաթթվային պղինձը միանում և քաղցրաթթվի հետ և այդպիսով ստացվում և փարիզյան կանաչը—  $3\text{Cu}(\text{AsO}_2)_2 \cdot \text{Cu}(\text{Cu}_3\text{COO})_2$ :

ՈՍՏ-ի համաձայն (5882—130) փարիզյան կանաչը պետք է ունենա հետևյալ բաղադրութեանը՝

$\text{As}_2\text{O}_3$ փոչ պակաս . . . . .	53 տոկոսից
$\text{CuO}$ . . . . .	28,5—30,5 տոկոս
$(\text{CH}_3\text{CO})_2\text{O}$ . . . . .	8—9 տոկոս
Զրում լուծելի $\text{As}_2\text{O}_3$ փոչ ավելի . . . . .	3 տոկոսից
Խոնավութեանը փոչ ավելի . . . . .	1,2 տոկոսից

Մանրվածքը՝ 200 մեջ մաղի միջով պետք է անցնի պրեպարատի 95 տոկոսից փոչ պակասը:

Արտաքին անբով փարիզյան կանաչը վառ կանաչ դույնի մանր փոշի յե: Փաթեթավորվում և Փաներկայից պատրաստած 50 և 25 լիտրանոց տակաոների մեջ, վորոնց ներսի կողմից դրվում և ջրանիթափանցիկ թուղթ:

Փարիզյան կանաչի կեղտոտութեան աստիճանը հեշտութեամբ կարելի չե փորոշել հետևյալ կերպ. 1 գր. փարիզյան կանաչը լուծում են 35 սմ՝ 25% ամթակի ջրային լուծույթի մեջ: Լուծույթը ստանում և վառ-ինտենսիվ-կապույտ դույն: Ամիակում չլուծվող մնացորդը ցույց կտա նրա մեջ յեղած խառնուրդների տոկոսը, փորը ՈՍՏ-ի համաձայն 0,6 տոկոսից ավելի չպետք է լինի:

Ինչպես ցույց են տվել յերկար տարիների ընթացքում կատարած դիտողութեանները, փարիզյան կանաչը բազականին կայուն պրեպարատ և և նա յերկար տարիներ կարող է մնալ ա-



քանակի ջրի մեջ, նա չի թրջվի և կնստի տակը) : Յերբ յերկունս էլ պատրաստ են, նրանց լցնում են ջրի տակառի մեջ, փորակոլ լցված և լինում պահանջվող ջրի քանակը և լավ խառնում են : Նախքան սրակիչ մեքենայի մեջ փարիզյան կանաչի յուծույթի լցնելը՝ ամեն անգամ այն պետք է տակառի մեջ լավ խառնել : Փարիզյան կանաչը կարելի յե ոգտադործել բորոշյան հեղուկի նիկոտին սուլֆատի, անսրապին սուլֆատի հետ համատեղ : Այս դեպքում նրանց մեջ փորելե յուրջ քիմիական փոխազդեցություն (բացասական իմաստով) տեղի չի ունենում և նրանք բոլորը պահպանում են իրենց թունուճակությունը, իսկ նրանց համատեղ սզտադործումը մի քանի անգամ կրճատում է սրսկումների համար պահանջվող աշխուրերը :

Մեզ մոտ Հայաստանում վերջին յերկու տարիներս մեծ հաջողությամբ գործադրվում է համատեղ բուժում— խնձորենուցեցի, լլիճների և սնկային հիֆանդությունների դեմ : Այս տեսակ բուժումը զգալիորեն բարձրացնում է պայքարի եֆֆեկտիվությունը խնձորենու և պոդացեցի դեմ, փորովհետև այս դեպքում նրա մրա ազդում է նիկոտին սուլֆատը (փորպես կոնտասկա ինտեկտիսիզ) և փարիզյան կանաչը (փորպես ալիքային) : Այնուհետև հարկավոր է շեշտել, փոր բորոշյան հեղուկի և փարիզյան կանաչի համատեղ գործածումից ավելանում է յուծույթի մածուցիկությունը և նրա մեջ մասնիկներն անհամեմատ ավելի դանդաղ են նստում :

Փարիզյան կանաչն առանձին ոգտադործելիս՝ նրան ալելացնում են չաքտրատականք, ալյուր, 0,4 և 1—1,5 կգր. 100 լիտր յուծույթին :

Փարիզյան կանաչի պատրաստելու համար անհրաժեշտ նյութերի (պլինեճ, արսեն, քաղախաթթու) դեֆիցիտային լինելը և նրա թանկությունը հնարավորություն չեն տալիս նրան ալելի լայն շափերով ոգտադործելու հատկապես փոշոտման նպատակներով, յերբ անհրաժեշտ է լինում ծախսել մոտ 10 անգամ ալելի թունավոր նյութ : Ներկայումս աշխատում են փոխարինել նրան ալելի եփան և մատչելի ինտեկտիսիզներով, բայց փորոշ տեղերում մինչև որ նա դեռ մնում է անփոխարինելի, այսպես որինակ, մալերիայի մոծակի թրթուրների դեմ, ճահիճներում պայքար կազմակերպելիս, փորի դեպքում ճահիճները փոշոտվում են փարիզյան կանաչով մեկ հեկտարին 0,4 կգր. հաշվով : Թունավոր

նույն թի ընդհանուր ծավալը ավելացնելու նպատակով նրա հետ խառնում են դանազան խոզրիդիենտներ (գլխավորապես սեղուժ-բրին) : Փոշոտումը կատարում են սավառնակներով : Փարիզյան կանաչը մնում է անփոխարինելի նաև թեյի սլանտացիաները փոշոտելու համար— յերբ փտանդ կա բույսերի ալրոսածքներ ստանալու :

Վորոշ դեպքերում, յերբ ձեռքի տակ չկան ուրիշ ավելի ե-  
ծան սլանտացիաներ (որ նատրիումի արտենիտ), փարիզյան  
կանաչն ոգտագործվում է թունավորված գրավչանյութեր պատ-  
րաստելու համար, այս դեպքում 100 կգր. չոր գրավչանյութին  
խառնում են 2,5—3 կգր. փարիզյան կանաչ : Փարիզյան կանաչով  
պատրաստված թունավորված գրավչանյութերը հաջողությամբ  
սլանտագործվում է մեկ մոտ Հայաստանում սովորյալ գեմ, փորի  
դեպքում փերցնում են 100 կգր. քուսպի ալյուրին 4—5 կգր.  
փարիզյան կանաչ :

**ՓԱՐԻԶՅԱՆ ԿԱՆԱՉԻ ՊԱՍՏԱՆ.** Վերջին յերկու տարիս ըն-  
թացքում բավականին տարածում է գտել մեկ մոտ փարիզյան կա-  
նաչի պատույթի գործադրումը : Փարիզյան կանաչի պատույթի իր բո-  
լոր քիմիական հատկութուններով նման է փարիզյան կանաչին,  
տարբերությունը միայն այն է, փոր պատույթի իր մեջ պարունա-  
կում է բավական մեծ տոկոս խոնավութուն, փորը հաճախ հաս-  
նում է մինչև 50-ի : Պատույթի նույն փարիզյան կանաչն է և  
ստացվում է նույն գործարանային յեզանակով, միայն այն տար-  
բերությամբ, փոր չի չորացված և աղացված : Յեթև այն չորաց-  
նենք և սղանք, կստացվի սովորական փարիզյան կանաչ : Պատույթի  
ոգտագործում են նույն նպատակները համար և նույն կերպ,  
ինչ փոր փարիզյան կանաչը, միայն պատույթի դեպքում նրանից  
վերցնում են ավելի շատ, քան փարիզյան կանաչի փոշին : Պատ-  
ույթի կոնցենտրացիան ավելացնում են այնքան տոկոսով, փոր-  
քան խոնավութուն կա նրա մեջ, այսպես որինակ, յեթև պատ-  
ույթի պարունակում է 50% խոնավութուն, ապա այդ նշանակում  
է, փոր մեկ գրամ փարիզյան կանաչի պատույթի մեջ կա ընդամենը  
0,5 գրամ փարիզյան կանաչ, հետևապես՝ պետք է վերցնել յերկու  
գրամ պատույթ, փորպեսզի այն փոխարինի 1 գրամ փարիզյան կա-  
նաչին : Վորովհետև փարիզյան կանաչի պատույթի խոնավու-  
թյունը միաջամի չի լինում և բացի այդ, բաց ամաններում պահ-  
ելիս՝ նա կորցնում է իր խոնավության զգալի մասը, անհրաժեշտ  
է փորպեսզի ամեն անգամ, նախքան գործածելը, ստուգվի նրա

մեջ յեղած խոնավության տոկոսը և համապատասխանորեն ճշտ-  
վի վերցվելիք թույնի քանակը:

Բացի նկարագրած պատասխից, գոյություն ունի նաև փա-  
րիղյան կանաչի հատուկ պատա, փորը պատրաստվում է փարիղ-  
յան կանաչի փաշին ղիլեցերենի հետ խառնելուց: Գլխեցերենը խառ-  
նում են, փորպեպի թունափոր լուծույթներ պատրաստելիս  
փարիղյան կանաչը շփուշիանա, իսկ վերջին հանդամանքը կարեւոր  
է աշխատանքի անխոնդության տեսակետից:

### ՄՈՍԿՈՎՅԱՆ ՅԵՎ, ՇՉԵԼԿՈՎՅԱՆ ԿՎՆԱԶՆԵՐ.

1937 թվից սկսած Մոսկովայի մոտ գտնվող փարիղյան կա-  
նաչ արտադրող գործարանը յուրացրեց յերկու նոր խորհրդային  
ինսեկտիսիդներին արտադրությունը: Մոսկովյան կանաչը ասու-  
րերվում է փարիղյան կանաչից նրանով, փոր նրան պատրաս-  
տելու ժամանակ քացախաթթվի փոխարեն ուտադործում են  
մրջնաթթու, իսկ Շչելկովյան կանաչը աչքի յե ընկնում իր ա-  
վելի դիսպերսականությամբ:

Ինչպես Մոսկովյան, նույնպես և Շչելկովյան կանաչների  
մեջ  $As_2O_3$  տոկոսն ավելի իջեցված է՝ 35—38 տոկոս: Ինչպես  
ցույց են տվել կատարված լաջն արտադրական փորձարկումները,  
այս պրեկարատներից վերջինն իրեն թունաւնակությամբ չիղիջում  
փարիղյան կանաչին և կարող է ուտադործվել նույն կերպ և  
նույն նպատակները համար, ինչ փոր փարիղյան կանաչը:

### Ջ Ի Պ Ս Ի Ն.—

Ջիպսինը հանդիսանում է Ամերիկյան հիմնական ինսեկտիսիդ-  
ներից մեկը: Ջիպսին անունը նա ստացել է շնորհիվ այն բանի,  
փոր առաջին անգամ ուտադործվել է տարադույզ մետաքսադոր-  
ծի դեմ, փորին ամերիկացիները Cypsi Moth անունն են տալիս:

Մի ժամանակ Ջիպսինը մեծ չափերով ուտադործվում էր նաև  
մեղ մոտ. այն ներմուծվում էր Ամերիկայից, բայց նրա ուտա-  
դործումը դադարեցվեց նկատի ունենալով ավելի փոսնդավո-  
րությունը մարդկանց համար, համեմատած արսենի մյուս պրե-  
պարատների հետ, այն պատրաստելու և դործադրելու ժամանակ:  
1934 թվից սկսած նորից խնդիր դրվեց Ջիպսինի արտադրության  
կազմակերպման մասին մեղ մոտ բազմամետաղ հանքերի ուտա-  
դործման բազայի հիման վրա:

Բիմիական բաղադրութեամբ ջիպսինը իրենից ներկայացնում է արսենաթթվական կապարի թթու կամ չեղոք աղ՝  $PbHAsO_4$ ,  $Pb_3(AsO_4)_2$ : Այս աղերից յերկուսն էլ ջրում անլուծելի չեն, բայց շնորհիվ այն հանդամաքի, վոր նրա մասնիկներն ունեն ջրին հավասար տեսակարար վելի, նրանք յերկուսն էլ տալիս են միանդամայն կալուն ջրային սուսպենդիաներ:

Ջիպսինի (թթու) ամերիկյան տեսակները պարունակում են փոսափոսպես 31—33 տոկոս  $As_2O_5$ : Ջրում լուծելի արսենի փոսփոր 0,5-ից ավելի չի թուլլաորվում: Բացի փոշի ջիպսինից, դոյութեան ունի նաև ջիպսինի պատա, վորի մեջ ջրի տոկոսը պետք է լինի փոշ ավելի 50-ից, իսկ  $As_2O_5$  փոշ պակաս 15-ից: Ճիշտ պատրաստված ջիպսինի պրեպարատները չեն մնասում բույսերին և կարող են ոգտադործվել և՛ սրակման, և՛ փոշոսման համար: Լինելով քիմիորեն բավական կայուն պրեպարատ՝ կահարող է սպտադործվել շատ տեսակի ինսեկտոֆունդիսիդների հետ բող և սպտադործվել շատ տեսակի ինսեկտոֆունդիսիդների հետ համատեղ: Վորպես լուծույթ, ջիպսինն ոգտադործվում է 0,1—0,15 տոկոսանի կոնցենտրացիայով: Ջիպսինի ոգտադործումն անհրաժեշտ է հատկապես նուրբ պտղատու ծառերը սրակելու համար:

Վերջերս համապատասխան դիտա-հետադրուական կադմակերպութեանների կողմից աշխատանքներ են տարվում արսեն պարունակող նոր պրեպարատներ ստեղծելու ուղղութեամբ: Խնդիր է դրվում տալ այնպիսի պրեպարատներ, վորոնք պարունակելով ավելի քիչ արսեն՝ իրենց թունունակութեամբ չեն դիջի հին՝ ապակելի քիչ արսեն՝ իրենց թունունակութեամբ չեն դիջի հին՝ ապակելի քիչ արսեն՝ պրեպարատներին: Այս նպատակելի շատ արսեն պարունակող պրեպարատներին: Այս նպատակելի հասնելու համար աշխատում են ստեղծել թունավոր նյութի մասնիկների այնպիսի կառուցվածք, վորի դեպքում պակասեցնելով արսենի բնզհանուր տոկոսը, նույնը թողնվի կամ ավելացվի նրա մասնիկների թունատու մակերեսը: Հայտնի չե, վոր ներկայումս գործադրվող պրեպարատների արսենի մոտ 30 տոկոսը դուրս է գալիս միջատի ստամոքսից, չկլանվելով որդանիզմի կողմից: Հետևապես, յեթե հնարավոր դարձվի արսենի լրիվ կլանումն որդանիզմի կողմից, ապա դրանով 30 տոկոսով կբարձրացվի պրեպարատի թունունակութեանը: Այս խնդրի գործնական վորոշումը զարգանում է այն ուղղութեամբ, վոր աշխատում են ակտիվ արսենը նստեցնել պատիվ վորեև նյութի արտաքին պատերին: Այդպիսով, թունավոր նյութի կորիզը, վորը դուրս կբերվի միջատի ստամոքսից, կլինի անպետք: Այս մեթոդով

պատրաստված 35—40 տոկոսանոց կալցիումի արսենիտը (նորմալը համարվում է 70—72 տոկոս  $As_2O_3$ ) մորենիների դեմ առկա է նույն արդյունքը՝ ծախսման նորման միայն 25—40 տոկոսով ավելացնելիս :

## ԱՐՍԵՆԻ ՊՐԵՊԱՐԱՏՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱՏՆԵՐԻ ՎՐԱ

Չնայած այն հանդամանքին, վսր արսենի պրեպարատները վազուց և ինչ ողտազործվում են վնասատու միջատների դեմ պաշարելու համար, բայց մինչև որս դեռ չկա արսենի ազդման մեխանիզմը բացատրող դիտակներեն հիմնադրված տեսակետ :

Մի բան միայն պարզ է, վսր քանի շատ է արսենի տոկոսը պրեպարատի մեջ, այնքան այն ավելի թունոնակ է, բացառությամբ այն դեպքերի, յերբ արսենի տոկոսի իջեցումը զուգակցում է նյութի յուծելիության ավելացման կամ այնպիսի պայմանների սանկման հետ, վորոնց դեպքերում թույնը ավելի լավ է յուրացվում սրգանիզմի կողմից : Վորքան լավ յուծելի յե միացությունը, այնքան նա ավելի թունոնակ է : Մասամբ այս հանդամանքով և բացատրվում այն, վոր նատրիումի արսենիտը ավելի թունոնակ է քան կալցիումի արսենիտը : Յեթև դոյություն ունենային արսենի բացարձակորեն անլուծելի միացություններ ապա նրանք բոլորովին զուրկ կլինեյին թունավորելու ընդունակությունից :

Վորքան շատ է դիտոցվում արսենի միացությունը, այնքան նա ավելի քիչ թունոնակ կլինի, և այս հասկանալի յե, վորովհետև քիչ թաղանթի միջով անցնում են վո՛չ թե իոնները, այլ մոլեկուլները :

Թվարկած մոմենտները, ինչպես և շատ ուրիշները, վորոնց դժվար է հայտնաբերել տոկսիկոլոգիական հետազոտություններին ժամանակ, միասին վերցրած պայմանադրում են արսենի պրեպարատների հարաբերական թունոնակության պատկերը :

Արսենիտը կամ արսենատը ուսովելով միջատի կողմից մեծ դոզաներով, առաջ է քերում սաամոքսի իանդարում՝ փոքրուծ և փախում :

Սաամոքսի մեջարսենն առաջ է բերում ալիքի պատերի նեկրոզ : Այնուհետև ներծծվելով հեմոլիմֆի մեջ տարածվում է մարմ

նում: Արսենը ազդում է ներվաչին համակարգության վրա առաջացնելով շարժումների դիսկորդինացիա և շեշտության ու սրտի աշխատանքի խանգարում:

Բարձր դոզաների դեպքում նեկրոզ կարող է շտապանալ, վորովհետև թունավոր ազդեցությունը ներվաչին համակարգության վրա չնոս ուժեղ և արագ է տեղի ունենում, վորի հետևանքով դեռ նեկրոզ չառաջացած միջատները շուտ մեռնում են:

Արսենի պրեպարատների ազդեցությունը միջատների վրա (մահացությունը) հանդես է գալիս 3—5 օր հետո: Թունավորված միջատները դառնում են թմրած, դանդաղաշարժ, դադարում են սնվելուց և վերջի վերջո մեռնում են: Հաճախ թունավորված միջատներն ապրում են 10—15 օր և նոր մեռնում, իսկ վորոշ դեպքերում թունավորված թրթուրները հարսնեկավորվում են, դեպքերում թունավորված թրթուրն չի դուրս գալիս: Արսենի պրեպարատների ազդման բուն մեխանիզմը մինչև օրս դեռ լրիվ պարզված չէ: Այս խնդրի շուրջը դոյություն ունեն մի շարք տեսակետներ: Մի շարք հեղինակների կարծիքով իսկական թունավոր է հանդիսանում արսենաթթուն, վորը լինելով վժջ լրիվ կերպով ոքսիդացած՝ որգանիզմի մեջ սկսիդանում է և իսնդարում ներբջջիչային օեակցիաների նորմալ բնթացքին: Նույն հեղինակների կարծիքով արսենի միղեղախան միացությունները թունավոր չեն և հանդես են բերում թունունակություն այն շարիով, վորչափով նրանք բջջի մեջ կամաց—կամաց վեր են ածվում վժջ լրիվ կերպով ոքսիդացած արսենի միղեղաչին ձևին:

Մի շարք ուրիշ հեղինակների կարծիքով՝ արսենի թունունակությունը պայմանավորվում է բջջի մեջ տեղի ունեցող փոխադարձ օեակցիաներով, յերբ արսենիտը դառնում է արսենատ և արսենաթթուն՝  $As_3O_5$   $\longleftrightarrow$   $As_2O_3$ , վորի ժամանակ առաջացած ակտիվ թթվածնի «հոսանքը» խանգարում է ներբջջային նորմալ ֆունկցիաներին:

### ԱՐՍԵՆԻ ՊՐԵՊԱՐԱՏՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՅՍԵՐԻ ՎՐԱ

Անվիճելի պեռք է համարել, վոր արսենի պրեպարատների ազդման քննք առաջացնելու գլխավոր պատճառը նրանց մեջ գտնվող կամ առաջացող արսենաթթուն է: Բույսերի աչրվածքների առաջ գալուն նախառող ֆակտորներն ըստ իրենց նշանակության առախճանի, կարող են դատավորվել հետեյալ կերպ՝

1. Պրեպարատի մեջ յեղած ջրում լուծելի արսենի քանակը, նախքան լուծույթի պատրաստելը:

2. Ջրում լուծելի արսենի քանակը, վորը կառաջանա լուծույթը պատրաստելուց հետո շնորհիվ տեղի ունեցող անակցիաների—պրեպարատի և ինգրիդիենտների և կամ ուրի միջև:

3. Բույսերի զիմացկունութեան աստիճանը:

4. Մետեորոլոգիական Փակտորները:

5. Պրեպարատի կոնցենտրացիան (քանի բարձր և աջն, աջնքան չափ և այլու):

Ջրում լուծելի արսենի ներկայութեանը պրեպարատների մեջ, ներկայիս պարմարանային տեխնիկայի պայմաններում, անխուսափելի չէ և ՌՍՏ-ով նախատեսվում է վորոշ տակոս աչս կամ աչս պրեպարատի համար—Պ, 5-ից մինչև 3 տակոս:

Տարբերում է արսենի առաջացրած աչսվածքների յերկու տեսակ:

1. Սուր աչսվածքներ, յերբ տերենների վրա աչսվածքները հանգես են պալիս սրակումից կամ փոշատումից մեկ կամ յերկու սր հետո—տերենները սեանում են, չորանում և թափվում:

2. Պրոնիկիական թունախորում, յերբ սրակումից 15—20 սր հետո միայն տերեններն սկսում են կորցնել իրենց դույնը, թառամում են և թափվում: Յերկու դեպքում էլ աչսվածքների պատճառը հանդիսանում է աչս, վոր ջրում լուծելի արսենի սր ծծվում է տերևի ներքևի յերեսի բարակ կուտիկուլուրայի կողմից և ունենալով վորիլ (չարժուն) հատկութեան անցնում է բույսի մեջ պատճառ դառնալով աչսվածքների:

Ի նկատի ունենալով աչս հանդամները, վոր պրեպարատի թունուհակութեանը նպաստող համարյա բոլոր Փակտորները նպաստում են նաև նրա աչսվածքներ առաջացնելուն, հաճախ թույլ են տալիս թունաւնակութեան պակասեցմանը աչսվածքները կանխելու համար—որինտի ավելացնում են կիր:

Մետեորոլոգիական Փակտորներից կարեւոր նշանակութեան ունեն ջերմատիճանը և խոնավութեանը, վորոնց բարձր լինելու դեպքում ավելանում է թթու աղերի և հետեպես ջրում լուծելի արսենի աղեկանալու հնարավորութեանը: Այս տեսակետից յերկնելով՝ պեաք և զգուշանալ շոգ ժամանակ սրում կատարելիս:

Տարբեր բույսեր տարբեր կերպ են վերարերվում արսենի միեւնույն պրեպարատին, այսպես որինտի, նկատված է, վոր

քանջարանոցային կուլտուրաներից վարունդը, սեխը, պամիդորն  
ավելիի դրայուն են արսենի պրեպարատների հանդեպ, քան կա-  
պամբբ: Պտղատու ծառերից՝ դեղձը և ծիրանն ավելի յեն զգա-  
յուն, քան տանձը, խնձորը և այլն:

Ինչպես յերևում է, բույսերի դիմացկունության տարբեր  
աստիճանը պետք է բացատրել նրաց կուտիկուլայի հաստու-  
թյամբ, մոմի շերտի ներկայությամբ և այլն: Վորքան բարակ է  
կուտիկուլան, այնքան ավելի հեշտությամբ արսենը կարող է  
թափանցել բջիջի ներսը և պատճառ դառնալ այրվածքների: Այս  
հանդամանքը հատկապես նկատվում է յերիտասարդ բույսերը  
սրակելիս, փորոնց համար ընդհանրապես ոգտադործվում են տ-  
վելի թույլ կոնցենտրացիաներ:

Մոմային շերտը խանգարում է արսենի թափանցմանը բջիջի  
ներսը: Տերևների վրա դանված մագմղուկները կարող են յեր-  
կու կերպ ազդել. փոշոտման կամ սրսկման ժամանակ թույնի  
մասնիկները՝ պահվելով մագմղուկների կողմից՝ անմիջականու-  
բեն չեն ընկնում կուտիկուլայի վրա և այրվածքները ստացվում  
են թույլ, բայց փորոշ դեպքերում, յերբ թունավոր յուժույթի  
թրջոցականությունը մեծ է, թույնը հասնում է մինչև կուտիկու-  
լային և չորանալուց հետո ստացվում է յերկար ժամանակ չհե-  
ռացող թունավոր նյութի շերտ, փորի պատճառով տերեւի վրա  
այրվածքներ ստանալու ավելի բարենպաստ պայման է ստեղծ-  
վում:

Յեղբրտիակելով պետք է ասել, փոր արսենի պրեպարատները  
բույսերի նկատմամբ ունեն բարձր թունունակություն— իսկ այս  
հանդամանքը պետք է միշտ հաշվի առնել ողերատիվ աշխատանք-  
ների ժամանակ և աշխատել այն մինիմումի հասցնել՝ համապա-  
տասխան ինզրիդիկենտներ ավելացնելով (կիր), կոնցենտրացիան  
պակասեցնելով, սրսկման կամ փոշոտման համար ավելի բարե-  
նրդաստ մետեորոլոգիական պայմաններ ընտրելով և այլն:

ԱՐՍԵՆԻ ՊՐԵՊԱՐԱՏՆԵՐԻ ԹՈՒՆՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԳ-  
ԿԱՆՑ ՅԵՎ ՈԳՏԱԿԱՐ ԿԵՆՌԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Արսենի բոլոր պրեպարատները ուժեղ թույն են հանդիսա-  
նում նաև մարդկանց ու տնային կենդանիների համար. այդ իսկ  
պատճառով նրանց հետ դործ ունենալիս՝ պետք է հանդես բերել  
ծայրասեղ զգուշություն: Թե փորքան թունավոր է արսենը կեն-  
դանիների համար, կարելի չէ տեսնել թեկուզ այն բանից, փոր

15—30 գր. փոշի  $As_2O_3$ -ը բավական է խոշոր յեղջուրավոր անասունին սատկեցնելու համար: Արսենի լուծույթներն ավելի թունավոր են, այսպես որինակ 3,5 գր. լուծված  $As_2O_3$  մահացու յե ձիու համար:

Արսենիտները 1,5—2 անգամ ավելի թունունակ են, քան համապատասխան արսենատները: Բույսերի պաշտպանութան պրակտիկայում արսենի պրեպարատներից թունավորում պատահում է, յերբ անասուններն ուտում են թունավորված դրամանյութը, խմում են պատրաստի թունավոր լուծույթը, կամ թե նրանում են սրակած կամ փոշտոված բույսերը:

Անասունների կերակրումն արսենով սրակված խոտով նույնպես մեծ վտանգ է ներկայացնում՝ անասուններին թունավորելու տեսակետով: Այդ խոկ պատճառով անասուններին սրածեցները կամ խոտով կերակրելը սրակումից առնվազն տասնուհինգ որից չուտ արգելվում է:

Մարդու համար 0,01 գր. արսենը համարվում է վտանգավոր, իսկ 0,06 գր. մահացու յե:

Բացի պատահական կերպով թունավորվելուց մարդկանց թունավորումը կարող է տեղի ունենալ նաև սրակված պտուղները ուտելուց կամ թե փոշի արսենը ներշնչելուց:

Հաճախ, յերբ անհրաժեշտ է լինում սրակել պտուղները բերքահավաքից մոտ ժամանակ, այդպիսի դեպքերում պտուղները քաղելուց հետո լվանում են 0,25—2 տոկոսանոց աղաթթվով, պտուղները 0,5—1 բոսկե տեխոլուցիամբ բնկրմվելով նրա մեջ և ապա մաքրաջրելով:

Գոյություն ունեցող միջազգային առևտրական սրենքների համաձայն, վաճառվող պտուղները պետք է պարունակեն արսենի վոք-ավելի 1 կգր. պտղին 1,429 մգրամից:

Արսենով թունավորվելու առաջին նշանները մարդկանց մոտ արտահայտվում է պուլսի թուլացմամբ, ստամոքսի ճնշումով և ցավերով, ծարավով և այլն: Ուժեղ թունավորվելու դեպքում այդ նշանները ավելի ցայտուն են արտահայտվում, խանգարվում է շնչնությունը, ստաջանում է թուլություն, փոխում, ջղաձուլություններ և յեթե չի կազմակերպվում շտապ ողնություն, թունավորումը կարող է մահվան պատճառ դառնալ:

### ՅՏՈՐԻ ՊՐԵՊԱՐԱՏՆԵՐ

Արսենի պրեպարատների քիչ լինելը և թանկությունը, նրանց բնդունակությունը ուժեղ չարիով աչրելու բույսերին և բարձր

Թունունակությունը մարդկանց ու ընտանի կենդանիների նկատմամբ, վերջին տարիների ընթացքում բնական պաշանջ են առաջացնել դանել նոր, արսենին փոխարինող ինսեկտիցիդներ:

Այդ տեսակետից հատուկ ուշադրություն արժանի լին ֆտորի միացութայինները: Ֆտորի միացութայիններն առաջին անգամ առաջարկվել են վորպես ինսեկտիցիդներ ոչտապործելու համար 20-րդ դարի սկզբներին և ներկայումս նրանք արդեն բավականին մեծ տարածում ունեն:

Ֆտորի պրեպարատները ոչտապործումը մեկ մոտ,  $\text{HF}$  և  $\text{H}_2\text{SiF}_6$ -ում, սկսվել է 1931 թվից: Ֆտորի պրեպարատների արտադրության զարգացմանը  $\text{HF}$  և  $\text{H}_2\text{SiF}_6$ -ում մեծապես նպաստում է սրստորե լայնացող սուպերֆոսֆատի արտադրութայինը, վորի ժամանակ վորպես թափթփուկ մեծ բանակությամբ ստացվում է  $\text{HF}$  և  $\text{H}_2\text{SiF}_6$ :

Ֆտորի պրեպարատներն, ունենալով բավականին մեծ թունունակութուն միջատների նկատմամբ, համեմատած արսենի պրեպարատների հետ՝ ավելի պակաս վտանգավոր են համարվում մարդկանց ու տնային կենդանիների համար:

### ՖՏՈՐԱԿԱՆ ՆԱՏՐՈՒՄ $\text{NaF}$ :

Ստացվում է գործարանային յեղանակով— ֆտորաջրածնային թթվով սուլայի վրա աղբելուց: Արտաքին տեսքով ֆտորահան նատրումը սպիտակ գույնի մանր աղայված փոշի լի: Ջրում բավականին լավ լուծելի լի—  $18^\circ\text{C}$  դեպքում նրա հալեցած ջրային լուծույթը պարունակում է 4,3 տոկոս  $\text{NaF}$ : Ջերմաստիճանի բարձրացման հետ նրա լուծելիությունը բարձրանում է քիչ չափով:

Ֆտորական նատրումի լուծույթները բավական կայուն են: Նրանց լուծույթներին արգելվում է կիր կամ կալիւն ավալեցնելը: Ինչպես ջուրը են ավելի կատարված փորձերը  $\text{Ca}$  ներկայութայինը ֆտորական նատրումի լուծույթում զգալի չափով դրոմ է վերջինիս թունունակութայինը: Ընդհակառակը՝  $\text{NaOH}$ ,  $\text{K}_2\text{CO}_3$ ,  $\text{Na}_2\text{CO}_3$  կամ տալիի ավելացումը, ուժեղացնում է նրա թունավոր հատկութայինները:

Ֆտորական նատրումը ոչտապործվում է համարյա այն բոլոր փնասատու սրգանիզմների դեմ, ինչ վոր արսենի միացութայինները, ինչպես սրսկելու ու փոշոտելու, այնպես էլ թունավորված զրավչանյութեր պատրաստելու համար: Վորպես լուծույթ ոչ-

ասպրճելիս՝ այն դորձադրում են 0,3—1,0 տակոտանի կոնցեն-  
տրացիաներով :

0,5—1 տակոտանի ֆտորական նատրիումի լուծույթով պայ-  
քարում են շաքարի ճակնդեղի յերկարակնճիթի դեմ, 0,5—0,7%—ի  
կոնցենտրացիան սպտադորձում և մորեխի վերջին հասակներին  
և մարդապետնաթիթեռի թրթուրների դեմ :

0,3—0,5 տակոտանի լուծույթները սպտադորձում են մորեխի  
ստալին հասակներին դեմ : Վերեզ նշված կոնցենտրացիաներով  
ֆտորական նատրիումը լրիվ կերպով լուծվում և ջրում և այլ  
անսակեանց հարմար և սպտադորձման համար : Կաշտոունակու-  
թյուն տալու համար նրան ավելացնում են շաքարատականք,  
100 լիտրին 0,5—1 կգրամի հաշվով :

Ֆտորական նատրիումն սպտադորձում և նաև թունավոր-  
ված դրավչանյութեր պատրաստելու համար : Նրա ջրում լավ  
լուծելիությունը հնարավորություն և տալիս լավորակ դրավ-  
չանյութեր ստանալը : Թունավորված դրավչանյութեր պատրաս-  
տելիս վերցնում են 100 կգր չոր նյութին 2—3,5 կգր ֆտորական  
նատրիում : Ֆտորական նատրիումով պատրաստած դրավչանյու-  
թերն սպտադորձում են մորեխների և սովիանների թրթուրների,  
ինչպես նաև ախանջամուկների դեմ :

Մարդկանց և տնային կենդանիների համար ֆտորական  
նատրիումը բավական պակաս թունունակ է :

Ֆտորական նատրիումը կարելի չէ սպտադորձել նաև կանաչ  
դրավչանյութեր պատրաստելու համար : Մարդկանց և տնային  
կենդանիների համար ֆտորական նատրիումը բավական պակաս  
թունունակ է :

## ՆԱՏՐԻՈՒՄԻ ՖՏՈՐՈՍԻԼԻԿԱՏ $\text{Na}_2\text{SiF}_6$

Ստացվում է դորձարանային յեղանակով  $\text{H}_2\text{SiF}_6$ -ով  $\text{NaCl}$ -ի  
մյա ապղելուց :  $\text{H}_2\text{SiF}_6$  ստացվում է վորպես կողմնակի նյութ  
Ֆոսֆորիաներից սուպերֆոսֆատ պատրաստելիս : Սրտաքին ան-  
բով նատրիումի ֆտորոսիլիկատը սպիտակ, համախ բաց վար-  
դադույն փոշի չէ : Ջրում ավելի վատ է լուծվում, քան ֆտորա-  
կան նատրիումը,  $\text{C}$ -ի 5<sup>0</sup> դեղքում նրա հալեցած լուծույթը պա-  
րունակում է 0,65 տակոտ  $\text{Na}_2\text{SiF}_6$  : Տեսակարար կշիւր 2—3 տն-  
գամ բարձր է կայցիումի արանատից և այլ անսակեանց անհար-  
մար և փոշոտման համար :

Նրա պակաս լուծելիությունը նրան սնվումնեղ և դարձնում

բույսերի նկատմամբ, բայց նկատված է, վոր նուրբ<sup>2</sup> բույսերի վրա (որ. թիթեւնածաղիկ բույսերի) առաջ է բերում այրվածքներ: Այս հանդամանքը բացատրվում է նրանով, վոր նատրիումի ֆտորոսիլիկատը հիմքային միջավայրում (տերեփների վրա) կամաց-կամաց վեր է ածվում ֆտորական նատրիումի, վորը է առաջացնում է այրվածքներ:

Նատրիումի ֆտորոսիլիկատը գործադրվում է սրսկման, փոշոտման և թունավորված գրապչանյութեր պատրաստելու համար: Կոնցենտրացիաները նույնն են, ինչ վոր ֆտորական նատրիումի: Փոշոտման համար ոգտադործելիս՝ վերցնում են 2-2,5 անգամ ավելի ծախսման նորմա, քան կալցիումի արսենատի գեպքում, վորովհետև նատրիումի ֆտորոսիլիկատն ավելի մեծ տեսակարար կշիռ ունենայով՝ քիչ ծավալ է բռնում և նույն մակերեսը փոշոտելու համար ավելի շատ կշառային միավոր է ոգտադործվում, բացի այդ, մեծ տեսակարար կշիռը նպաստում է նրա վառ կաշելուն:

Իր թունանակությամբ միջատների նկատմամբ նատրիումի ֆտորոսիլիկատի գրամմոլեկուլը համարժեք է նատրիումի արսենիտին, իսկ մարդկանց նկատմամբ՝ վերջինս հեռ համեմատում 9 անգամ ավելի պակաս թունավոր է:

### ԲԱՐԻՈՒՄԻ ՖՏՈՐՈՍԻԼԻԿԱՏԸ $\text{BaSiF}_6$

Բարիումի ֆտորոսիլիկատը վորպես ինսեկտիցիտ առաջարկվել է վերջին տարիների ընթացքում, և ինչպես ցույց են տալիս արքադրական փորձերը, այն մեծ հաջողությամբ կարող է ոգտադործվել հատկապես պտղատու այգիների վնասատուների դեմ:

Ստանում են գործարանային յեղանակով, նույն ձևով, ինչ վոր նատրիումի ֆտորոսիլիկատը, միայն այն տարբերությամբ, վոր  $\text{H}_2\text{SiF}_6$ -ով սպղում են վաջ թե  $\text{NaCl}$ -ի, այլ  $\text{BaCl}_2$ -ի վրա: Բարիումի ֆտորոսիլիկատը սպիտակ փոշի չէ, ունի լավ կոշտ-գունակության և բարձր թունանակ և խնձարենու ու պողպակեյի, պլոջաթիթեռի, պտղատու ծառերի յերկրորդնձիթների և մի շարք այլ վնասատուների նկատմամբ: Ջրում անլուծելի չէ: Որտու-գործվում է վորպես սուսպենզիա: Ջրում անլուծելի լինելով, փոշոտման և սրսկման ժամանակ այրվածքներ չի առաջացնում: Պակաս թունանակ է նաև մարդկանց ու կենդանիների համար:

Ծնորհիվ վերև նշված գրական հատկությաններին, նաև այն հանդամանքի վոր նրա արտադրության կազմակերպման հա-

մար մեզ մոտ կան բոլոր հնարավորությունները, անչուչո բարիումի ֆտորսիլիկատը մոտ սպաղաչում ամենայնիստ աստիճանը կգտնի:

### ՖՏՈՐԻ ՊՐԵՊԱՐԱՏՆԵՐԻ ԱԶԻՅՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱՏՆԵՐԻ ՎՐԱ

Յեթե արսենի պրեպարատները համար բնորոշ էր ուժեղ արտահայտված աեղակամ սողեցությունը, վորի հետեվանքով որդանիզմի մեջ առաջացած ուժեղ հակաուակցիան պատճառ էր դառնում փորքուծի և փախցի, դուրս մղելով որդանիզմի միջին թունավոր նյութի զգալի տեղոր, ապա ֆտորի պրեպարատների համար բնորոշ է սպաղմա առաջացնելը, վորի ժամանակ դանդաղում է մարսողությունը և նյութների առաջաշարժը, իսկ այս հանգամանքը նպաստում է ստամոքսի մեջ մտած թունավոր նյութի ալիլի լրիվ կերպով աղիքների պատերի միջով ներծծվելուն: Փտորի պրեպարատների ընդհանուր թունավորման պրոցեսն ալիլի դանդաղ է ընթանում, քան արսենի պրեպարատներինը, այսպես որինակ, յեթե արսենի պրեպարատն ուտելիս՝ միջատները թունավորվում են 20-30 ժամվա ընթացքում, նույն քանակի ֆտորի պրեպարատներն ուտելիս թունավորումը աեղի յե ունենում մի քանի օրվա ընթացքում:

Փտորի սողեցությունն արտաքինից արտահայտվում է շարժունների դիսկորդինացիայով, թունավորված միջատները դառնում են թմբած, դանդաղաշարժ և դադարում են սնվելուց: Հաճախ սուրբևտալ-դոզաներ ընդունելուց թրթուրները հարսնեակավորվում են, բույց հարսնեակներից թիթեններ դուրս չեն գալիս, կամ յեթե գալիս են, ապա նրանց ամած ձվերից շատերը փչանում են (հետապոցեցություն):

### ՖՏՈՐԻ ՄԻՋՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԻՅՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՅՑՆԵՐԻ ՎՐԱ

Փտորի միացություններից, ինչպես մկնք արդեն տեսանք  $\text{NaF}$  աղում է ալիլի ուժեղ, քան  $\text{Na}_2\text{SiF}_6$ -ը իսկ  $\text{BaSiF}_6$ -ը բարձրովն չի աղում: Այս յերեվութից բացատրվում է նրանց լուծելիության տարբեր աստիճաններով (բարձրից լավ լուծվում է  $\text{NaF}$ -ը): Թունավության ներկայությունը բույսերի վրա վոչոտման ժամանակ նպաստում է ֆտորի պրեպարատների այրող հատ-

կաթյունների ուժեղացմանը, այդ խնկ պատճառով խորհուրդ չի տրվում անձրեվից հետո կամ ցողի ներկայութեամբ փոշոտել ռուսերը: Ֆտորական նատրիումի այլվածքները կանխելու համար խորհուրդ է տրվում նրա հետ խառնել (փորպես լուծույթ ոգտապործելիս) պրոտաշ կամ սոդա՝ Ֆտորական նատրիումին հավասար քանակով: Կրի ավելացումը ֆտորի պրեպարատների լուծույթներին, այլվածքները կանխելու նպատակով, արդեվում է: Կիրը մտնելով միջատի ստամոքսի մեջ՝ առաջ է բերում ստամոքսի պատերի կծկում, վորի հետեվանքով պակասում է ստամոքսի պատերի թափանցելիութունը և պատճառ դառնում թունավոր նյութի թունոտնակության անկմանը:

Տարբեր ռուսերի հանդես բերած հարաբերական դիմացկունությունը ֆտորի պրեպարատների նկատմամբ մոտավորապես նույնն է, ինչ վոր արսենի դեպքում:

Արտաքուստ ֆտորի պրեպարատների այլվածքներն արտահայտվում են սկզբում տերեխների գորշացմամբ, ապա նրանց առանձին մասերի և ամբողջի չորացմամբ և տերեվութակով:

Ֆտորի պրեպարատները լինելով թունավոր՝ մարդկանց և կենդանիների համար, նույնպես պահանջում են հատուկ գոուշություն: Նրանց ոգտապործման ժամանակ պետք է կիրառել այն բոլոր նախազուշական միջոցները, ինչ վոր արսենի պրեպարատների դեպքում:

### ԲԱՐԻՈՒՄԻ ԳԼՈՐԻԴ.— BaCl<sub>2</sub>

Մնացած աղիքային խոսեկախիդների մեջ առանձին ուշադրության արժանի չի քլորական բարիումը, վորի ոգտապործումը փորպես խոսեկախիդ արդեն 30 տարվա պատմություն ունի:

Բարիումի քլորիդը ստանում են գործարանային յեղանակով բարիումի հանքերից (BaSO<sub>4</sub>) շիկացնելով նրան ածխի հետ, վորի ժամանակ ստացվում է BaSO<sub>4</sub> + 4C = BaS + 4CO: Ստացված BaS-ը յեռացնում են աղաթթվի հետ և ստանում՝  
BaS + 2HCl = BaCl<sub>2</sub> + H<sub>2</sub>S:

Կրիստալանում է բարիումի քլորիդը 2 մոլեկուլ ջրի հետ: Արտաքին տեսքով սպիտակ գույնի բյուրեղներ են, հաճախ մաճր: ՈՍՏ-ի համաձայն (4894) բարիումի քլորիդը պետք է ունենա հեակյալ բաղադրութունը՝  
Բյուրեղական բարիում (BaCl<sub>2</sub> · 2H<sub>2</sub>O), վոշ պակաս 97,0 տոկոսից

Հիգրոսկոպիկ ջուր, վոչ ափելի . . . . . 2,5 տոկոսից  
 Ֆերուս, վոչ ափելի . . . . . 0,01 տոկոսից  
 Ջրում անլուծելի մնացորդը (չիկացրած), վոչ ափելի  
 0,2 տոկոսից

Թթվությունը HCl-ով հաշված, վոչ ափելի 0,2 տոկոսից:

Փաթեթվում և քլորական բարիումը փայտյա տակտոներին մեջ:

Լինելով հիգրոսկոպիկ, բաց վիճակում՝ և խոնավ պահեստում ներում պահելիս ընդունակ և խոնավություն կլանելու, վարի հետևանքով կորցնում և սպիտակ դույնը և գորշանում: Նախքան գործածելը անհրաժեշտ է վերջին նրա միջի խոնավության առկոթը, կոնցենտրացիաների մեջ համարատուխան ճշտում մոցնելու նպատակով:

Քլորական բարիումը նույնիսկ սառը ջրում շատ լավ լուծելի յե: Կոյուն միացություն և և նրա հետ խառնվող ինգրիդիենտների հետ, փորձը՝ ավելացվում նեն կաշտոնակությունը լավացնելու համար (գրինակ պատուկա), սեակցիայի մեջ չի մտնում:

Սապոնի հետ ոգտագործելիս՝ նա փոխազդեցություն մեջ է մտնում և տալիս է փաթիլանման նստվածք, փորը սրակման աշխատանքների ժամանակ փակելով՝ սրակիչ մեքենաների ծայրապանակները՝ խոնգարում և սրակման աշխատանքներին: Այդ իսկ պատճառով խորհուրդ չի արվում BaCl<sub>2</sub>-ը ոգտագործել սապոնի հետ միասին:

Քլորական բարիումը ոգտագործվում է բացառապես սրակման ձևով: Լինելով ջրում լավ լուծելի՝ նրանից հեշտությամբ կարելի յե թունավոր լուծույթներ պատրաստել:

Հիմնականում ոգտագործվում է չաքարի ճակնդեղի վնասատուների դեմ պայքարելու համար, հատկապես ճակնդեղի յերկայակնճիթի: Մեկ մոտ, Հայաստանում բովականին հաջողությամբ այն ոգտագործվում է կազմերի ցեցի դեմ:

Ծնորհիվ այն հանգամանքի, վոր քլորական բարիումը միջատների հանդեպ շատ ցածր թունունակություն ունի, նրա գործածական կոնցենտրացիաները շատ բարձր են:

1,5-3 տոկոսանի լուծույթը ոգտագործում են խնձորենու ցեցի, խաղողի փոկույրակերի, այլջաթիթեոի դեմ:

3-4 տոկոսանի լուծույթով կարելի յե պայքարել կազմերի թիթեոի թրթուրների, սովկա գամմայի և մարգարեանույթիթեոի

Թրթուրների ջահել հասակների դեմ: Մարդագեղձաթիթեոսի մեծահասակ Թրթուրների և չաքարի ձակնդեղի յերկարակնճիթի դեմ դորձադրում են քլորական բարիումի 5-6 տոկոսանի լուծույթները:

Լինելով ջրում լավ լուծելի՝ քլորական բարիումը սրսկումից հետո անձրեմներով հեշտությամբ լվացվում է տերեմների վրայից. նրան փորոչ պահունակություն տալու համար ալկալացնում են ալյուրի չաղաղ կամ չաքարատականք 0,6 և 0,5 կգը 100 լիտր հեղուկին:

### ԲԼՈՐԱԿԱՆ ԲԱՐԻՈՒՄԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱՏՆԵՐԻ ՎՐԱ.

Գործածական կոնցենտրացիաներից արդեն յերեվում է, զոք քլորական բարիումը համեմատած արսնի պրեպարատների հետ, 10-25 անգամ ալկալի պակաս թունունակ է: Գլորական բարիումի 10-25 անգամ մեխանիզմը բացատրվում է նրանով, զոր նա բարձր աղման մեխանիզմը բացատրվում է միջատի ստամոքսի մեջ կոնցենտրացիաներով սլոտադորձվելիս միջատի ստամոքսի մեջ ստեղծում է  $BaCl_2$ -ի խիտ լուծույթ, զորը և ստեղծելով բարձր սամոտիկ ճնշում, պատճառ է դառնում սրգանիզմի բջիջների մեջ յեղած ջրի ներծծմանը դեղի ստամոքսը, դրանով իսկ բջիջների մեջ ստաջացնելով նորմալ Ֆունկցիաների խանգարում: Այն դեպմեջ ստաջացնելով նորմալ հետ մեկ տեղ ստամոքս է քերում, յերբ քլորական բարիումի հետ մեկ տեղ ստամոքս մտնում մեծ քանակությամբ խոնավություն, ստամոքսում ստեղծված սամոտիկ ճնշումն ստացվում է ալկալի քիչ և վերեղ նշված յերեղեյթը կամ բորբոսիլին տեղի չի ունենում, կամ թե շատ Թույլ կերպով և արտաճալովում, և համապատասխան դրան՝ Թույլ կերպով և արտաճալովում նաև քլորական բարիումի թունունակությունը:

Այս խնդիրն անմիջական գործնական նշանակություն ունի, զորովհետև նկատված է զոր խոնավ ժամանակ քլորական բարիումը սլոտադորձելիս ստացվում է վատ կֆֆեկա: Ընդհակառակը, չոր յեղանակին քլորական բարիումը հանդես է բերում լավ կֆֆեկալովություն: Այդ իսկ պատճառով քլորական բարիումն սլոտադորձել խոնավ ժամանակ խորհուրդ չի տրվում:

Քլորական բարիումի՝ միջատի կողմից ուսովելուց հետո՝ թուշափոր աղեցությունը հանդես է գալիս ուսելուց անմիջապես: Սկզբում ստաջանում է փոխում և փորբոս ապա թունավորված

միջատները դառնում են դանդաղաչարժ, դադարում են սնվելուց և սատկում են թունալորվելուց 2-3 օր հետո:

Նրան բարձր կոնցենտրացիաներով ուղտապործելիս՝ հանդես է բերում նաև կոնտակտ ազդեցութուն:

Ազդեցութունը բույսերի վրա. Գլխավորապես բարելամի դորժածական կոնցենտրացիաները (3-6 տոկոսանի) միանգամայն սնվածանոց են համարյա բոլոր տեսակի բույսերի համար և այս տեսակետից, համեմատած արսենի և Փտորի միացությունների հետ, նա մեծ առավելութուն ունի:

### ԹՈՒՆՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴԿԱՆՅ ՅԵՎ ԿԵՆԴԱ- ՆԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Մարդկանց և կենդանիների նկատմամբ ջրորական բարելամի հանդես է բերում բավական ցածր թունունակութուն. այդ բանը կարելի չէ տեսնել թեկուզ և հետեվյալ օրվա շնչերից:

Ճաշարի համար նրա մահացու դոզան համարվում է 5-10 գրամ, արսենիտինը 0,1 գր., Փտորինը 0,2-0,37 գր.:

Ցածր թունունակութունը մարդկանց և կենդանիների համար նույնպես մեծ առավելութուն է ջրորական բարելամի համար:

### ԿՈՆՏԱԿՏ ԻՆՍԵԿՏԻՍԻԳՆԵՐ

Կոնտակտ ինսեկտիսիդներն ուղտապործվում են դիլյավորապես ծծող միջատների դեմ՝ լլիճների, տրիպանների, կոկցիտների և այլն: Կրճող միջատներից կոնտակտ ինսեկտիսիդները ուղտապործվում են ջահել թրթուրների դեմ, ինչպես նաև ստանձին դեպքերում միջատների ձվակույտներն և ամբարային մասսատուներին՝ վոջնչացնելու համար:

Կոնտակտ ինսեկտիսիդների ազդման մեխանիզմը տարբեր է տարբեր նյութերի մոտ: Այնպիսի թույներ, ինչպիսիներն են ուտիչ նատրիումը և կալիումը, միջատների վրա ազդում են քայքայելով նրանց խիտինը: Պիրետրինը թափանցելով մաշկի միջով որդանիքի մեջ, ազդում է ներվային համակարգության վրա, տեղիք տալով գանգլիաների քայքայմանը: Սապոնը հիմնականում ազդում է փակելով շնչատար անցքերը (տրախեյաները): Կոնտակտ ինսեկտիսիդները կարող են ուղտապործվել և՛ վորպես հեղուկ՝ սրսիման համար և՛ վորպես փոշի՝ փոշոտման համար:

Կոնտակտ ինսեկտիսիզների դործադրման ժամանակ առաջ-  
նակարգ նշանակութուն ունի միջատի և թունափոր նյութի միջեզ  
կոնտակտ ստեղծելու խնդիրը: Հատուկ ուշադրութուն և դարձ-  
վում այս յերկույթի նոժանդակելու խնդրի վրա: Հեղուկ վի-  
ճակում կոնտակտ ինսեկտիսիզներին ոգտադրուելիս՝ առաջնա-  
կարգ նշանակութուն և ստանում թունափոր լուծույթի թրջու-  
ղունակութունը, փոշիների համար կաշելու և պահվելու հատ-  
կութունը, ինչպես նաև պրեպարատի մանրվածքը, վորը հնարա-  
վորութուն կտա նախ՝ թունափոր նյութի մասնիկներին ավելի  
մեծ թունատու մակերես ստեղծելու և յերկրորդ՝ թափանցելու  
չնշատար ճանապարհներով որդանիզմի մեջ:

Կոնտակտ ինսեկտիսիզներին կարելի բաժանել յերեք հիմ-  
նական խմբերի— 1. Բուսական ծագումն ունեցող ինսեկտիսիզ-  
ներ, 2. Հանքային յուղեր և սաղսններ, 3. Այլ ինսեկտիսիզներ:

### ԲՈՒՍԱԿԱՆ ԾԱԳՈՒՄՆ ՈՒՆԵՑՈՂ ԻՆՍԵԿՏԻՍԻԴՆԵՐ

Կոնտակտ թունափոր նյութերից անուշտ առաջափոր տեղը  
պատկանում է բուսական թույներին: Նրանց առաջնութունը  
սպաստու միջասների նկատմամբ, 2. սննդանյությամբ բույ-  
սերի համար, 3. ավելի պակաս վտանգավորությամբ մարդկանց  
և տնային կենդանիների նկատմամբ, 4. հումույթի բաղաչի մեծ  
քանակով: Ինչպես հայտնի յե հանքային ծագումն ունեցող ինսեկ-  
տիսիզները (արսեն, ծծումբ, ֆոսփ և այլն) բնության մեջ  
զտնվում են վորոշ սահմանափակ քանակությամբ, իսկ բուսական  
թույները, վորոնք կարելի յե ստանալ անվերջ՝ ցանելու և մշա-  
կելու միջոցով, ստեղծում են հումույթի անսպառ պաշար, վորի  
սպառվելու դեպքում միշտ հնարավոր է աչն վերականգնել:

### Ն Ի Կ Ո Տ Ի Ն


Նիկոտինը ( $C_{10}H_{14}N_2$ ) հանդիսանում է առաջնակարգ ինսեկ-  
տիսիզ և ստացվում է ծխախոտից: Ծխախոտի տարբեր տեսակ-  
ները պարունակում են տարբեր քանակի նիկոտին: Ծխախոտի  
անվելի վատ տեսակը (մախորկա) պարունակում է նիկոտինի ա-  
ռաջնակարգ բարձր տոկոս: Նիկոտինի տոկոսը ծխախոտի տարբեր տե-  
սակներին մոտ տատանվում է 0,3—12: Ամենից շատ նիկոտին  
զտնվում է ծխախոտի տերեփների մեջ, ավելի քիչ կոթունների

և սպա ցողունի մեջ: Արժանների մեջ նիկոտինը բացակայում է:

Նիկոտինը Յեվրոպայում հայտնի չէ դարձել Ամերիկայի գլխավոր հետո, վերջին 1560 թ. Ջոն Նիկոտինը առաջին անգամ բերել է Փրանսիա: Առաջին անգամ վերջին ինսեկտիսիդ ոգտագործվել է 1846 թվին:

Նիկոտինի քիմիական հատկությունները շատ լավ ուսումնասիրված են: Նիկոտինը ալկալոիդ է, անգույն հեղուկ, յեռում է 247 աստիճանում: Պահպանվում է նիկոտինը մթնանում է դառնում է սեղ գույնի և ափսի մածուցիկ: Ջրում լավ լուծելի չէ և սնվ անդուրեկան հոտ:

Քիմիական Փորձույթ ունի հետևյալ կառուցվածքը՝



Հայտնի չեն/նիկոտինի մի բանի պրեպարատներ: Նիկոտինի ոգտագործման ամենապարզ և պրիմիտիվ ձևը ծխախոտի ստիտրական եկտրակտներն են, վերոնք պատրաստվում են ծխախոտի մնացորդներից կամ վատորակ ծխախոտից, ինսեկտիսիդի գործադրման վայրում: 10 լիտր ջրին վերցնում են 400 գր. ծխախոտ, խառնում նրանց միասին և թողնում 1—2 օր մնա, վերի լեթիսցրում ծխախոտի մեջ գտնված նիկոտինը լուծվում է ջրի մեջ: Մեկ յերկու օրից հետո ստացված լուծույթը քամում են, բաց անում նորից 10 լիտր ջրի մեջ և այդ վիճակում ոգտագործում սրակման նպատակների համար: Լուծույթի թունոնակությունը բարձրացնելու նպատակով խառնում են նրա հետ սապոն՝ 50 գր. 10 լիտր հեղուկին:

Սովորական եկտրակտներից ավելի կատարելագործված ձևը պետք է համարել գործարանային յեղանակով պատրաստած խառցրած կոնցենտրատները, վերոնք ստացվում են ծխախոտի սովորական եկտրակտները խառցնելու միջոցով ( գոլորշիացվում է ջուրը): Այդ յեղանակով պատրաստում են 3—8 տոկոս նիկոտին պարունակող կոնցենտրատներ: Ինչպես սովորական

և կատրակար, նա յնպես և կենցեւարաւաներն սղտազործվում են լլիճներէր, ցեցերի դեմ և այլն: Լուծուցիքները պատրաստում են աչն հաշվով, վոր նրանց կոնցեւարացիան լինի 0,05—0,1 տակոսանոց (մաքուր նիկոտինից հաշված):

**ՀԻՄՆԱՅԻՆ ՆԻԿՈՏԻՆՆԸ:** Նիկոտինի պրեկարատներէց ամենից կատարելագործվածը պետք և համարել նիկոտին հիմնայինը և նիկոտին սուլֆատը: Յերկուսն ևլ ստացվում են զործարանային յեղանակով բարձր տակոս նիկոտին պարունակող մախորկաներէց: Ծխախոտի միջից նիկոտինը կկատրակացիայի յեն յենթարկում բենզինի ողնութեամբ, վորը բացի նիկոտինից տերեմների միջից լուծում և նաև բազմաթիվ խիթանյութներ և մի շարք այլ նյութեր— լիմոնաթթու, ինձորաթթու և այլն:

Եկատրակացիայից հետո աղատվում են կոյմնակի խիթանյութերից, խտացնում են լուծուցիք (հեռացնում են ամբողջսովին բենզինը) և ստանում հիմնային նիկոտին: Յանկացած վին բենզինը) և ստանում հիմնային նիկոտին: Յանկացած վեպում վերջինիս վրա ծծմբական թթվով ազդելով ստանում են նիկոտին սուլֆատ:

Գոյություն ունեն յերկու տեսակ հիմնային նիկոտին և մեկ տեսակ նիկոտին սուլֆատ:


**ՈՍՏ**—ի համաձայն (4078) ստաջին տեսակի հիմնային նիկոտինը բաց գեղին գոյնի թափանցիկ հեղուկ է և պարունակում է 100 կշտային մասին 95—98 տակոս նիկոտին ( $C_{10}H_{14}N_2$ ): 15—20 C° դեպքում լրիվ կերպով լուծվում է ջրում: Կոյմնակի մեխանիկական խտանուրդներ չեն թույլատրվում: Տեսակարար կշիւր +15°-ում հալմասար և 1,000 մինչև 1,010:

Յերկրորդ տեսակի հիմնային նիկոտինը (ՈՍՏ—4079), նիկոտինի և ծխախոտի ինձանյութերի ջրային լուծուցիքն է, վորն էր մեջ պարունակում է 50 տակոս նիկոտին  $C_{10}H_{14}N_2$ : նա լինում է մուգ-կանաչադույն, տարրեր գունավորումներով:

15—20° ջրում լուծվում է լրիվ կերպով:

Տեսակարար կշիւր պետք է լինի 1-ից վոչ պակաս:

**ՆԻԿՈՏԻՆ-ՍՈՒԼՖԱՏ**, վորը ստացվում է հիմնային նիկոտինի վրա ծծմբական թթվով ազդելուց ունի հետեյալ բնութեան կառուցվածքը՝



**ՌՍՏ**-ի համաձայն (4080) նիկոտին սուլֆատը պետք է պարունակի 100 կշռային մասին 40 կշռային մաս:  $C_{10}H_{14}N_2$ : Գույնը բաց-սրունձից մինչև մուգ բալի գույնի յե լինում: Բարակ շերտով պետք է լինի թափանցիկ, կոդմակի մեխանիկական խառնուրդներ և խիժի նստվածք չի թույլատրվում:

15°C ջրի մեջ լուծվում է ցանկացած հարաբերությամբ: Տեսակարար կշիռը 15°-ում 1,12—1,18:

Հիմնային-նիկոտինները, ինչպես և նիկոտին-սուլֆատը փաթեթավորվում են 100, 250 և 400 կ. գրամանոց յերկաթյա տակաոնների մեջ, կամ թիթեղից պատրաստած 0,25, 0,5, 1, 2, 3, 5 և 10 կշր. սմանների մեջ:

Նիկոտինի թվարկված թույր պրեպարատները ոգտադրվում են լիճների, ջահել թրթուրների դեմ լուծույթ վիճակում: Լինելով ջրում լավ լուծելի՝ հեշտությամբ կարելի յե նրանից թունավոր լուծույթներ պատրաստել: Թունավոր լուծույթների կոնցենտրացիան վերցնում են 0,04—0,1 տոկոսանի մաքուր նիկոտինից հաշված: Հաճախ դրականության մեջ նիկոտինի կոնցենտրացիան տալիս են յեղնելով վո՛չ թե պրեպարատի մեջ յեղած նիկոտինի քանակից այլ իրենց— պրեպարատից, այսպես որինակ, սուտ են 0,1 տոկոսանի նիկոտին սուլֆատի լուծույթ, փորի տակ հասկանում են, փոր մեկ լիտր ջրին պետք է վերցնել մեկ դրամ նիկոտին սուլֆատի պրեպարատ, այն ինչ 0,1% լուծույթ ստանալու համար անհրաժեշտ է վերցնել մեկ լիտրին 2,5 դրամ նիկոտին սուլֆատ, փորովհետև ինչպես մեք ասացինք, նիկոտին սուլֆատի մեջ նիկոտինի տոկոսը 40 յե հափա-

սար, հետևապես, յեթե մենք պատրաստում ենք 0,04 տակոսանի նիկոտին սուլֆատի լուծույթ, ապա այդ դեպքում մենք պետք է վերցնենք մեկ լիտր ջրին 1 դրամ նիկոտին սուլֆատ: Հաշվումները այս ձևը անհրաժեշտ է, վորովհետև շատ հաճախ նիկոտինի պրեպարատները պատրաստվում են նիկոտինի տարբեր տակոսի պարունակությամբ և լուծույթներ պատրաստելու ժամանակ հաշվումների առաջին ձևով ողորկելիս կարող ենք թյուրեմացություն մեջ ընկնել:

Նիկոտինի բոլոր տեսակի պրեպարատները լուծույթ վիճակում ողտադործվում են սապոնի հետ միասին, վորք վո՛չ միայն հուստում է թունավոր լուծույթի թրջողականության ավելացնանք, այլ և՛ նա աղբերով նիկոտին սուլֆատի վրա՝ այն դարձնում է հիմնային-նիկոտին, իսկ վերջինս ավելի թունունակ է, քան նիկոտին-սուլֆատը: Սապոնի կոնցենտրացիան վերցնում են 0,3-0,5 տակոսանի: Նիկոտինը կարող է ողտադործվել նաև 0,3-0,5 տակոսանի: Նիկոտինը կարող է ողտադործվել նաև համատեղ բորբոքան հեղուկի և փարիկայան կանաչի հետ միասին:

Բացի սրակման նպատակները համար ողտադործելուց՝ նիկոտինի պրեպարատներն ողտադործում են նաև փոշուաման նպատակներով: Ծխախոտի փոշին ողտադործում են հողային լվիկների դեմ պայքարելու համար:

Նիկոտին սուլֆատից և հիմնային նիկոտինից պատրաստում են դեռտեր: Դեռտեր պատրաստելու տեխնիկան այն է, վոր նիկոտին-սուլֆատով կամ հիմնային նիկոտինով ծծեցնում են կրի փոշին: Նիկոտինա պատրաստելիս վերցնում են 95 կշռային մաս հանգած կրի փոշուն 5 մաս նիկոտին սուլֆատ կամ 50 տակոսանոց հիմնային նիկոտին: Հեղուկը ավելացնում են փոշուն քիչ-քիչ և լավ խառնում այնքան, մինչև վոր թույնը հաստարակա տարածվի փոշու մեջ: Խառնելու պրոցեսը կատարում են չոր ակտահամման համար ողտադործվող մեքենաների մեջ (որինակ «Ռիդար»), խառնելով 10-20 բոպե տեվոդուլթյամբ: Այդ ձևով պատրաստված նիկոտինա ողտադործում են փոշուաման համար դաշտային և բանջարանեցային կուլտուրաների վնասատուների դեմ (լվիճները, հողային լվիկների և այլն), մեկ հեկտարին 20-30 կգ. հաշվով:

Նիկոտինի սրբեպարտաները (ճխախոտ) ողտազործվում են նաև Փումիզացիայի նպատակով, մորի ժամանակ աչրվում և ճխախոտը մեկ խորանարդ մետրին 10 զր. ճխախոտի հաշվով: Այլերու ժամանակ նիկոտինը աչրողով վիճակում տարածվում է ողում և միջատների շնչառության ճանապարհներով թափանցելով սրգանիդմի մեջ՝ թունափորում նրանց: Այս մեթոզը ողտազործվում է ջերմոցներում լվիճների, արխոսների, կոկցիդների և սեգերի դեմ պայքարելու նպատակով: Նույն նպատակի համար, ողտազործում են նաև նիկոտին-սուլֆատը և հիմնային նիկոտինը, մորի դեպքում թիթեղների վրա ցնդեցնում են սրբեպարտը, վերցնելով մեկ խորանարդ մետրին 1 զր.:

Միախոտի ծուխը ողտազործվում է նաև աչրու վնասատուների դեմ պայքարելու համար (լվիճներ, ցեցեր), մորի ժամանակ մեկ հեկտարին ողտազործվում է մինչև 150 կգր. ճխախոտի մնացորդ: Վերջին մեթոզը պետք է համարել անսեռապես վոչ ձևնառ:

**ՆԻԿՈՏԻՆԻ ԱԶԻԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱՏՆԵՐԻ ՎՐԱ:** Նիկոտինը միաջանների վրա ազդում է— շնչատար ճանապարհներով թափանցելով սրգանիդմի մեջ, ըստ վորում նա կարող է մաշկի միջով կամ թև բնկներով արախեյանների մեջ դիֆուզիայի յին-թարրիկ և անցնել հեմոլիմֆի մեջ:

Կերի հեռու ասվելիս նա կարող է ազդել սրգանիդմի վրա, բայց բնդհանրապես վորպես աղիքային ինսեկտիսիզ նա թիչ նշանակության ձարող և ունենալ:

Վորպես Փումիզանդ ազդում է աչրողով վիճակում: Ինչ վիճակում էլ, վոր ազդելիս լինի, նիկոտինը միջատների վրա ազդում է նրանց լսկոմոտուային կենսորոնների միջոցով— առաջայնելով կոթված և մահ:

Կարորատար պայմաններում հիմնային նիկոտինը միշտ հանդես է բերում ավելի բարձր թունունակության, քան նիկոտինի սուլֆատը, վորովհետև չլխոտցված մոլեկուլներն ավելի աքաղ են թափանցում րջիջի թաղանթով, բայց դործնականում նրանք համարժեք են, իսկ հաճախ նիկոտին սուլֆատը ավելի լավ աքղյունք է ասլխ, քան հիմնային նիկոտինը: Այս յերևույթը

բացատրվում է նրանով, վոր հիմնային նիկոտինը սրտկաման ժամանակ ավելի արագ է դուրըջիանում և ազդման տեվողությունն ավելի կարճ է լինում: Այդ իսկ պատճառով ներկայումս նիկոտին-սուլֆատը ավելի դերադասվում է: Նիկոտինի պրեպարատները և ֆիֆեկտիլության վրա մեծ չափով ազդում են սրտկաման ժամանակ յեղած ջերմաստիճանային պայմանները, նկատված է, վոր ուժեղ արեվի ժամանակ նիկոտինի պրեպարատներով սրտկլիխ շատ վատ արդյունք է ստացվում, վորովհետև բարձր ջերմաստիճանը նպաստում է նիկոտինի արագ դուրըջիացմանը, վորի հետևանքով նիկոտինը գեւ չաղղած միջատի վրա, արդեն ցնկում է: Այս հանդամանքը հատկապես անհրաժեշտ է հաշվի տանել մեղ մոտ, Արարատյան դաշտավայրում, ամառային ամիսներին սրտկումներ կատարելիս, յերբ կեսրին արեվի տակ ջերմությունը մինչև 70°-ի յե հասնում: Այս տեսակետից գերազանցի յե նիկոտինի պրեպարատներով սրտկումները կատարել հով ժամանակ վաղ առավորյան կամ յերեկոյան:

### **ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՅՍԵՐԻ ՅԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ՎՐԱ:**

Վորպես սրենք նիկոտինի պրեպարատները, թե՛ հեղուկ և թե՛ վորպես վոշի ողտաղործելիս բույսերի վրա ալրվածքներ կամ ալլ մտավածքներ չեն առաջացնում:

Մարդկանց նկատմամբ նիկոտինը շատ ուժեղ թույն է, բովական է հիշել, վոր մարդու համար 0,001-0,004 գր. գոգան համարվում է վտանգավոր և նույնիսկ մահացու: Պետք է սխալ համարել այն կարծիքը, վոր իբր թե նիկոտինի պրեպարատներն անվտանգ են մարդկանց համար, պետք է նրանց ողտաղործման ժամանակ ձեռք տանել ամենալուրջ նախազուշակուն միջոցառումները: Վտանգն ավելի յե մեծանում բարձրորակ նիկոտինի պրեպարատների ողտաղործման դեպքում:

Զուգուրթյունը նիկոտինի պրեպարատների նկատմամբ կարելի է նաև այն տեսակետից, վոր տարբեր մարդիկ տարբեր կերպ են վերարբերվում դեպի նրա թունավոր հատկությունը, պատահում են մարդիկ, վորոնք կարող են թունավորվել նիկո-

տինի ամենաչնչին քանակությանից, այն ժամանակ յերբ նույն քանակը միանդամայն անվտանգ կհանդիսանա բազմաթիվ այլ մարդկանց համար (իդիոսինկուպիա) :

Պետք և արդելել բանջարեղենի-սպուռղների սրսկումը նիկոտինի պրեպարատներով բերքահասվաքից առնվազն 8-10 սր անսը :

Նիկոտինով թունավորելու առաջին նշանները արտահայտվում են որձկուժով, փսխոցով, ընդհանուր թուլությամբ, զըլ-խապտույտով :

### ԱՆՍՖԱՉԻՆ $C_{10}H_{14}N_2$


Նոր, բուսական ինսեկտիցիդ է, վերը 1929 թվին հայտնաբերվեց խորհրդային դիտնականների կողմից Ղազախստանում : Անարազինը արկոլոլիդ է, ունի  $C_{10}H_{14}N_2$  բրոմիական ֆորմուլը— ստանում են Ղազախստանում մեծ չափերով վայրի վիճակում տարածված *Anabasis aphylla* բույսից :

Բույսի մեջ անարազինի քանակը լինում է տասնորդական տոկոսներից մինչև 6-7 տոկոս : Անարազինի պարունակության տարբերությունը կախված է բույսի ֆիզիոլոգիական վիճակից և հատկապես նրա հասակից : Անարազինի տոկոսն ամենից շատ լինում է 7-10 տարեկան բույսերի մեջ (*Anabasis aphylla*-ն բազմամյա բույս է) : Անարազինի տոկոսը տարբեր է բույսի տարբեր մասերի մեջ : Ամենից շատ պարունակվում է դարբ ճյուղերի մեջ : Անարազինի պարունակությունը բույսի մեջ ամենից շատ լինում է ծաղկման նախորդին և ծաղկումից հետո : Ծաղկման Փազայի ժամանակ տեղի չե ունենում արկոլոլիդ պարունակության ուժեղ անկում :

Գյուղատնտեսության մեջ ներկայումս ողտադործվում է միայն անարազին սուլֆատը, վերը ստանում են դործարանային յեղանակով : Սկզբում բույսի միջից և քստարակցիայի յեն յեն-թարկում արկոլոլիդը տաքացնելու ոլնությամբ սպա ստացված հիմնային անարազինի և քստարակտը դոլորչիացումն են և ազդելով ծծմբական թթվով ստանում են անարազին-սուլֆատ, վորն իրենից ներկայացնում է անարազին արկոլոլիդի ծծմբաթթվական աղերի ջրային լուծույթը :

HUS-ի համաձայն (6691-361) անարազին-սուլֆատը պետք է պարունակի 30 տոկոսից քիչ պակաս հիմնային անարազին ( $C_{10}H_{14}N_2$ ): Գույնը պետք է լինի մուգ գորշագույն և լրիվ թափանցիկ: Տեսակարար կշիռը 1,15-1,18, 15° C-ի դեպքում: Թթվությունը քիչ ավելի 0,5 տոկոսից: Ջրում լավ լուծելի: Փաթեթավորվում է 50 և 100 կգրամանոց յերկաթյա տակաոների մեջ:

Քիմիական բաղադրության տեսակետից հիմնային-անարազինը հանդիսանում է նիկոտինի անալոգը, նրան են վերադրում հետեվյալ օտարոչություն կառուցվածքը:



Թորվում է 276°-ում 760 մմ ճնշման տակ:

Անարազին-սուլֆատը գյուղատնտեսության մեջ՝ ուղտազործվում է սրսկման և փոշտաման ձեվով և մասամբ «Անարազինային լողարանների» միջոցով՝ խոզերի վոլյուտության դեմ պայքարելու համար:

Սրսկման և փոշտաման ձեվով ուղտազործվում է նույն վնասատուների դեմ, ինչ վոր նիկոտինի պրեպարատները: Վորպես լուծույթ օդազործելիս՝ կոնցենտրացիան վերցնում են 0,04-0,1 տոկոս (մաքուր անարազինից հաշված): Խնձորենու լիլիճի, դեղձի տերեվային և ցողունային լիլիճների, խնձորենու և պողատու ծառերի ցեղերի համար բավարար է համարվում 0,03 տոկոսը (մեկ լիտր ջրին 1 գր. 30 տոկոսանոց անարազին-սուլֆատ): Կաղամբի լիլիճի, այսճաթիթևոխի համար կոնցենտրացիան բարձրացվում է մինչև 0,08 տոկոսի: Բոլոր դեպքերում անարազին-սուլֆատի հետ խառնում են սապոն 0,4 տոկոսի հաշվով (40 գր 10 լիտր ջրին):

Անարազին-սուլֆատն ուղտազործվում է նաև վորպես անարազին, վորի պատրաստման տեխնիկան նման է նիկոտինային պատրաստման տեխնիկային:

Պատրաստում են 5, 7 և 10 տոկոսանի անարադեաներ: 7 և 10 տոկոսանի անարադեաները մեծ հաջողութեամբ ուղտագործ-  
վում են հողային ըլիկների դեմ պայքարելու համար:

Պաշտպանության դեմ պայքարելիս վաննաները մեջ  
պատրաստում են 0,5 տոկոսանի լուծույթ: Վաննաները պատ-  
րաստվում են 10 մեար յերկարութեամբ և 1,8 մեար խորու-  
թեամբ և 1 մեար լայնութեամբ: Լողացնելու տեխնոլոգիաները  
1 բույն:

Իր ազդեցութեան տեսակետից՝ միջատներին, բույսերի և  
մարդկանց նկատմամբ անարադինը նման է նիկոտինի պրեպար-  
ատներին:

### ՊԻՐԵՏՐՈՒՄ

Պիրետրումը շատ վաղուց հայտնի յե յեղել կովկասի ժողո-  
վուրդներին վորպես միջոց սնային պարազիտների դեմ պայքար-  
ելու համար «լիլի ծաղիկ» անվան տակ: Այս մասին հիշատակ-  
վում է նաև Ամիրտովթաթ Ամասիեցու «անդլիտաց անպես» աշ-  
խատութեան մեջ (1478 թվին գրված):

Պիրետրումը բարդածաղիկալորների բնտանիքին պատկանող  
բույս է: Գոյութեան ունեն Պիրետրումի մոտ 40 տեսակ, վորոն-  
ցից վորպես հումույթ, ինտեկտիսիդներ պատրաստելու համար  
ներկայումս ուղտագործվում են միայն յերեքը: Դրանցից *P.*  
*roseum*-ը և *P. carneum*-ը վայրի վիճակում տարածված են  
դլխամորթապես կովկասում և քիչ քանակութեամբ ցանվում են  
Հյուսիսային Ամերիկայում և Ճապոնիայում: *P. cinerariaefo-*  
*lium*-ը վորը ծագույնով Դալմաթիայից է, ներկայումս մշակ-  
վում է արխարճի համարյա բոլոր կուլտուրական յերկրներում:  
Պիրետրումի տարեկան համաշխարհային արտադրութեանը հաջի-  
վում է մոտ 10 միլիոն կգը.: Պիրետրումից պատրաստած պրե-  
պարատները գործ են ածվում ինչպես դյուրատնտեսութեան մեջ,  
նույնպես և սողնապահահան գործում սնային պարազիտներին  
դեմ: Վորոչ քանակութեամբ ուղտագործվում է նաև բժշկական  
Փարմոկոսյութայում — ստամոքսի վորդերի (գլխատների) դեմ պրե-  
պարատներ պատրաստելու համար: Ծնորճիվ այն հանդամանքի,  
վոր պիրետրումի քիմիական հատկութեաները վատ են ուսում-  
նասիրված, մինչև վերջերս չկային գործարանային յեղանակով  
պատրաստված պիրետրումի ստանդարտ պրեպարատներ և այն  
ուղտագործվում էր կամ նրա ծաղիկները սովորական յեղանակով

վաչի դարձնելով, կամ թե ստորական ջրի եքստրակտներով—  
սասյունի հետ միասին:

Երկրայումն արդեն մշակված և պիրեարումի ստանդարտ  
պրեպարատներ ստանալու գործարանային յեղանակը: Արդանա-  
կան լուծիչների (դիքլորեանն) ոչնութեամբ պիրեարումի ծաղիկ-  
ների միջից եկատրակցիայի յեն յենթարկվում նրա մեջ գտնվող  
թունաւոր բարդ եթերները: Ստացված եկատրակար ցնդեցնում  
են ազատում դիքլորեանից, լուծում ացետոսի սպիրտի կամ  
հանքային յուղերի մեջ ստանալով ցանկացած խտութեան պրե-  
պարատ: Եկատրակցիայի յենթարկված կողմնակի խիժանյութերը  
հետացնում են նստեցնելու միջոցով:

Պիրեարումի մեջ թունաւորող սկիզբը հանդիսանում են պի-  
Ծծմբային աննիգրիկը անգույն, ուժեղ ծակող հոտով գաղ է: Տեսակարար կշիռը ողի հեռ համեմատած— 2,2: Նրա քիմիական ներկայությամբ ծծմբային թթու առաջացնելու նրա ընդունակությունը  $SO_2 + H_2O = H_2SO_3$ , վորը հետագայում անցնում է ծծմբային թթվի—  $2H_2SO_3 + O_2 = 2H_2SO_4$ : Այլ սեակցիան պատճառ է դառնում այն բանի, վոր Փուժիզացիայի յեթարկվող շենքերում (հատկապես խոնավ)  $SO_2$ -ի կոնցենտրացիան շատ արագ կերպով ընկնում է և լավ արդյունք ստանալու համար անհրաժեշտ է լինում շատ բարձր կոնցենտրացիա վերցնել: Բացի այդ,  $H_2SO_3$  և  $H_2SO_4$ -ը ազդում են մետաղների վրա, անդունացնում են ներկերը և ազդում գործվածքների վրա: Ուժեղ սեակցիոնականության հետևանքով նրան չի կարելի ուղտադրուծել սերմացույի և տնկիների սպալարակման համար:

Նրանով Փուժիզացված շենքերի գեղազացիային նպաստելու

Համար չենք սրակում են ամիակի ջրային լուծույթով:  $\text{SO}_2$ -ը մեծ մասամբ ստանում են նրա գործադրման վայրում ծծմբի փոշին շիկացած անխի վրա ալրելով: Կա նաև հեղուկ  $\text{SO}_2$ , վորը պահվում է պողպատյա բալոններով: Դատարկ պահեստների ֆունկցիայի համար վերցնում են 40—80 դր. ծծումբ 1 մ<sup>3</sup>-ին, վորը առաջացնում է 80—160 դր.  $\text{SO}_2$ : Եկսպոզիցիան ընդունում են 12—24 ժամ: Նույն կոնցենտրացիան կիրառելի չե նաև բանջարեղենի պահեստների համար:  $\text{SO}_2$ -ը ուղտադրվում է բավականին մեծ չափերով զինեղործութան մեջ տակառների ղեղինֆեկցիայի, ինչպես նաև կոնսերվի արտադրութան մեջ չոր մըրըղերը ղեղինֆեկցիայի յեթարկելու և վորոչ չափով նրանց դույն սարու համար:

Թունունակությունը մարդկանց համար բավական ցածր է, նրանով թունավորվելու դեպքերը հազվադեպ են: Նրա չնչին քանակությունները ուղի մեջ կարելի չե հեշտությամբ հայտնարերել որդանդեպիկ կերպով (հաղ և առաջացնում):

#### Ծծմբաջրածին.

Ծծմբաջրածին—  $\text{H}_2\text{S}$ — բարձր թունունակությունը միջատների և մնասատու սունկերի ու միկրոորգանիզմների նկատմամբ հայտնի չե վաղուց, բայց նրա խորը ուսումնասիրությունը և գործադրումն սկսվեց 1932 թվից:

Ծծմբաջրածինը սովորական ջերմաստիճաններում անույն գազ է, նեխված ձվի հոտով: Տեսկարար կշիռը 1,18: Հեղուկանում է 15—18 մթորոտային ճնշման տակ: Մեկ լիտր հեղուկ ծծմբաջրածինը կշռում է 960 դր.: Ծծմբաջրածինը հեշտ բունկվում է և ալրվում նկտած նրա 40—45 դր: մեկ խորանարդ մեարին կոնցենտրացիայից մինչև 640, դր. 1 մ<sup>3</sup>-ին: Ծծմբաջրածնի սեակցիոնունակությունը շատ մեծ է, վորը համարվում է նրա բացասական կողմերից մեկը: Նրա ջրից հեշտ կլանվելը և բայբայվելը ստիպում է վերցնել շատ բարձր կոնցենտրացիա (մեկ ծավալ ջուրը 0°-ում լուծում է 4,37 ծավալ  $\text{H}_2\text{S}$ , 10°-ում—3,58 ծավալ, 20°-ում— 2,9 ծավալ): Ծծմբաջրածինը սղուում է մետաղների վրա, այդ իսկ պատճառով այն չի կարելի ուղտագործել մեքենաներով դրայեցրած շեքերում: Հեշտ բանկելությունն ստիպում է հակահրկահային միջոցառումներ ձեռք առնել:

Գարծադրումը: Փորձերը ցույց են տվել, վոր ծծմբաջրածինը կարելի չե ուղտագործել սուսլիկների դեմ պայքարելու, ինչ-

պէս նաև անասնակերի, սերմացվի և ուտելու համար ուղտադործ-  
վող հատիկեղենի ղեղինսեկցիայի համար:

Լավ արդյունքներ են ստացված նաև սերմերի ղեղինֆեկ-  
ցիայի ժամանակ, բակտերիալ և անկային հիվանդութիւնները՝  
բամբակի գոմոլի, բանջարեղենի բակտերիալ փթումի, ցորենի  
և դարու քարամբիկի, կորեկի և վարսակի մրիկի դեմ և այլն:  
Կրծողները ծծմբաջրածնից մահանում են անմիջապէս՝ ողի մեջ  
ծծմբածխածնի 0,03—0,05 դր. մ<sup>3</sup>-ում լինելու դեպքում, բայց  
նրա ջրի կողմից կլանվելու մեծ ընդունակութիւնը հասցնում է  
այն բանին, վեր պրակտիկ աշխատանքների ժամանակ ստիպված  
են լինում ավելի մեծ կոնցենտրացիա փերցնելու: Խոնավ և  
ցուրտ յեղանակներին սուղիկները ամեն մի բնին փերցնում են  
4—6 դր., վերը և տալիս և միշտ լավ էֆֆեկտ: Ավելի չոր յե-  
ղանակներին կարելի չէ բավականանալ 3 գրամով:

Նկատված է, վեր ծծմբաջրածնով պայքարելիս սուղիկները  
ստիպում են իրենց բնիկից վաչ հեռու, այդ հանդամանքը հնա-  
րավորութիւն է տալիս հալաքելու և ուղտադործելու նրանց  
հարսը և մարթիները:

Պահեստի վնասատուների դեմ սիրտարաններում պայքարելիս  
ծծմբաջրածնի կոնցենտրացիաները նմանեցվում են ծծմբածխած-  
նի կոնցենտրացիաներին:

12<sup>0</sup>-ում ցորենի տիլի դեմ լավ արդյունք է տալիս ծծմբա-  
ջրածնի 120—125 դր. մ<sup>3</sup>-ին կոնցենտրացիան, 48 ժամյա էքսպո-  
զիցիայով: 12<sup>0</sup>-ից ցածր դեպքում և մանուսնու վատ հերմետիկ  
և խոնավ պահեստներում պայքար կարգակերպելիս՝ H<sub>2</sub>S-ի  
ծախսման նորման բարձրացվում է մինչև 200—250 դր. մեկ  
խտանարդ մետրին:

Այն դեպքերում, յեր ցորենի մեջ բացի տիլերից կան և ու-  
րիչ միջատներ և բացի այդ ուղում են սերմացուն նաև ախտա-  
հանած լինել մրիկից, H<sub>2</sub>S-ի ծախսման նորման հասցնում են  
300 դր. 1 մ<sup>3</sup>-ին 3—4 որ տեկող էքսպոզիցիայով:

Հատիկեղենը ծծմբաջրածնով հեշտութիւնով կարելի չէ  
Ֆուսիզացնել կուրտերով, բրեկետալ տակ: Այս, ինչպես և սի-  
լոսներում պայքարելու դեպքում ծծմբաջրածնի մտցվում է  
հատիկեղենի մաստիլի մեջ ծախսված խողովակների միջով:  
Խողովակների աղղման շտապիկը հալասար է 0,6—0,8 մետրի:  
էքսպոզիցիան 2—3 սր: H<sub>2</sub>S-ի ծախսը այս դեպքում արտա-  
հայտվում է 250—300 դր. մ<sup>3</sup>-ին:

Հեղուկ ծծմբաջրածինը պահվում է և տեղափոխվում պողպատյա բալոններով: Ծծմբաջրածինը կարելի չէ ստանալ նույնպես նրա ուղտապործման վայրում ծծմբային շլակներից: Շլակներից ծծմբաջրածինն առաջանում է ուղի խոնավության աղբեջության առի և առանձին ուղերեցիաների կարելք չի լինում:

Փորձերը ցույց են տվել, վոր 20 տոկոս  $H_2S$  առաջացնող շլակները տալիս են 92—98 տոկոս սոսլիկների մահացությունը ամեն բնում 8—9 դր. փոշիացրած շլակ լցնելիս:

Հատիկեղենի կույտերը շլակով աղավարակելիս շլակի փոշին խառնում են հատիկների հետ, կամ թե մեշոկների մեջ լցրած շլակը դատավորում են հացահատիկի չեբոտերի մեջ 1—1,5 մետր երարից հետո: Այլիկ լավ արդյունք ստանալու համար կույտերը ծածկում են բրեզնեանով:

Նորմալ խոնավություն ունեցող 1 տոնն հաճարի կամ ցորենի համար ուղտապործում են 1 կգր. շլակ: Թեփուկավոր կույտուրաների դեպքում (18 տոկոսից բարձր խոնավություն), ծախսման նորման վերցնում են 1,5—2 կգր. 1 տոննին: 2—3 որ հետո մեշոկները շլակների մնացորդների հետ միասին, հեռացնում են:

Ուտերու համար նախատեսվող հացահատիկը ծծմբաջրածնով աղավարակելիս՝ նախքան աղբը պետք է լավ դեղնազացիայի յենթարկել բամհարելու միջոցով: Ամառ ժամանակ ինքնադեղնազացիան կարող է ակտի ունենալ 1,5—2 ամսվա բնթացքում:

Բազմաթիվ կույտուրաների սերմեր ծծմբաջրածնով Փումիզացիայի յենթարկելիս չեն կորցնում իրենց ծլունակությունը, բայց խորհուրդ է տրվում, նախքան մասսայական Փումիզացիան նախորդ կատարել այն՝ քիչ քանակի փորձնական սերմացվի նկատմամբ և ստուգել նրա ծլունակությունը:

Ինչպես յերկում է, ծծմբաջրածինը կարելի չէ ուղտապործել նաև անասնակերի Փումիզացիայի համար, բայց այս ուղղությամբ կատարված փորձերը քիչ են և առայժմ այս նպատակի համար ծծմբաջրածինը չի ուղտապործվում:

Ծծմբաջրածինը մարդկանց նկատմամբ բարձր թունունակ է, այդ իսկ պատճառով պետք է ձեռք առնել բոլոր այն նախազգուշական միջոցառումները, ինչ վոր մյուս ուժեղ թունավոր Փումիզանտների դեպքում:

### Յիանջրածնական բթու :

Յիանջրածնական թթուն— HCN— Հանդիսանում է հիմնական Փումիզանտներից մեկը : Վնասատուների վեմ ոգտադործում են ինչպես HCN-ը, նույնպես և նրա աղերը՝ NaCN, KCN, Ca(CN)<sub>2</sub> և այլն :

ԽՄ ՀՄ-ում ջիանջրածնական թթուն մինչև վերջին ժամանակներս ոգտադործվում էր միայն վակուում Փումիզացիայի համար կարանտին տնտեսությունում :

Ֆիզիկական հատկությունները : Անջուր HCN անգույն հեղուկ է : Յետում է 26,6°-ում : Տեսակարար կշիռը 0,7 (18°-ում) : Գոլորչիների տեսակարար կշիռը 0,93 : Յնդողունակությունը 1100 գր. 1 մ<sup>3</sup>-ին (26°-ում) :

Ներկայումս ջիանի պրեպարատների ստացումը հիմնված է սինթետիկ ամիակի արդյունաբերության վրա : Կապելով ողի ազոտը՝ ստանում են NH<sub>3</sub>, վորը մետաղական նատրումի հետ տալիս է 2NH<sub>3</sub> + 2Na = 2NaNH<sub>2</sub> + H<sub>2</sub> ստացված նատրիումի ամիաը ածխի հետ շիկացնելիս տալիս է 2NaNH<sub>2</sub> + C = Na<sub>2</sub>N<sub>2</sub>C + H<sub>2</sub> և ապա Na<sub>2</sub>N<sub>2</sub>C + C = 2NaCN

Կալիումի և նատրիումի ջիանիդներն արտադրում են կտորներով : Նրանց դույնը լինում է սպիտակ կամ մոխրագույն : Կալցիումի ջիանիդը՝ Ca(CN)<sub>2</sub> արտադրվում է փոշիածև ավազանման, կամ մինչև 1 սմ դիամետր ունեցող կտորներով : Կալցիումի ջիանիդների դույնը լինում է սպիտակից մինչև սև :


Յիանի խորհրդային պրեպարատներից ներկայումս գյուղատնտեսության մեջ ոգտադործվում է տեխնիկական կալցիումի ջիանիդը, վորին ջիանպլավ անուն են տալիս : Յիանպլավի համար ստանդարտ գեն չի մշակված, նա նման է արտասահմանյան ալրո-բրենդին (սե ջիանիդ) և ունենում է մոտավորապես հետևյալ բաղադրությունը .

Յիանի պարունակությունը NaCN-ով հաշված— 35—42 տոկոս Na-ը 14%, Ca-ը — 36%, CN<sub>2</sub>-ը = 2,5%, K<sub>2</sub>O-ը — 1% և այլն :

Յիանպլավը լինում է փոշ խոշոր թեփուկավոր, խոշոր ավազանման (վատողանման ջիանպլավ) և սեվ-մոխրագույն փոշի :

Քիմիական հատկությունները : Յիանիդների քիմիական հատկություններից անհրաժեշտ է նշել նրանց ընդունակությունը

Տեչտությամբ քայքայվելու ուղի խոնավության և անխաթթվի ազդեցությունից :




Այս հատկության պատճառով նրանք, բաց վիճակում պահելիս, Տեչտությամբ քայքայվում են և արժեքազրկվում : Դրանից խուսափելու համար նրանց պահում են հերմետիկ կերպով փակված :  $\text{Ca}(\text{CN})_2$ -ի գործածությունը հիմնված է հենց այն հատկության վրա, վոր նա Տեչտությամբ ընդունակ է ուղի խոնավության ազդեցության տակ  $\text{HCN}$  առաջացնելու : Այդ նպատակով  $\text{Ca}(\text{CN})_2$ -ը շաղ են տալիս ֆումիլացիայի յենթարկվող շենքերում, խառնում են հատիկեղենի հետ, մացնում են հողի մեջ և այլն : Այս բոլոր դեպքերում առաջացած  $\text{HCN}$ -ը սպանում է վնասատու միջատներին : Ուժեղ թթուների հետ ցիանիդները տալիս են ինտենսիվ սևակցիա, ըստ վորում առաջանում է սաքություն : Այս պայմաններում առաջացած գազերն ունենում են վոշ միատեսակ կազմություն, վերջինս կախված է թթվի խոնավությունից և ջերմաստիճանից : Անհրաժեշտ է նշել, վոր հաճախ ստացվող  $\text{HCN}$ -ը լինում է թեորեատիկորեն հնարավորից պղպի չափով պակաս :

Յեթե ուղտազործվում է թույլ ծծմբական թթու ( $60-66^\circ \text{Be}$  խոնավություն ունեցող մեկ մաս ծծմբական թթուն յերկու մաս ջրով բաց արած), ստացվում է թեորեատիկորեն հնարավորին մոտ քանակի  $\text{HCN}$



Ուժեղ թթու ուղտազործելիս առաջացած բարձր ջերմաստիճանից  $\text{HCN}$ -ը կարող է հիդրոլիզի յենթարկվել և առաջացած գազերը բազկացած կլինեն գլիափորապես  $\text{CO}$ -ից, վորը ինչպես հայտնի յե վնասատուների համար բոլորովին անվանող է .



$\text{HCN}$ -ի և  $\text{CO}$ -ի հետ կարող են անջատվեց նաև  $\text{CO}_2$  և  $\text{SO}_3$  :  $\text{HCN}$ -ի լրիվ յելույթ ստանալու համար գործնական նշխատանքների ժամանակ ուղտազործվում են հետևյալ հարաբերություններից . 1 մաս  $\text{NaCN} + 1,5$  մաս  $\text{H}_2\text{SO}_4$  ( $66^\circ \text{Be}$ ) + 2 մաս ջուր : կամ 1 մաս  $\text{KCN} + 1$  մաս  $\text{H}_2\text{SO}_4$  ( $66^\circ \text{Be}$ ) + 3 մաս ջուր :

Այս հարաբերություններով կարելի յե ստանալ թեորեատիկ հնարավոր  $\text{HCN}$ -ի 90 տոկոսը : Մնացած 10 տոկոսը հիդրոլիզի յե յենթարկվում կամ թե մնում է լուծույթում :

Աղաթթուն տալիս է HCN-ի 70—80 տոկոս յեղույթ և այդ պատճառով, չնայած նրա եթանությանը, չի սպտապործվում այս նպատակների համար :

Մետաղների, ներկերի, դործվածքների վրա HCN-ը չի ազդում : HCN-ի ներկայութունն ողի մեջ, նույնիսկ մարդկանց համար վոչ վտանգավոր կոնցենտրացիաներով, կարելի չե հայտնարեքել բենդիդինային թղթի ողնությամբ, վորը կապտում է (Ֆիլտրի թուղթը ծծեցրած քացաղաթթվային պղնձի բենդիդինի մեջ) : Ռեակտորները HCN-ից վտանգազերծ անելու համար ավելացնում են ծծմբաթթվային յերկաթ :

Գործադրութուն. Շենքերի ֆումիգացիայի համար ընդհանրապես HCN-ը ստացվում է դործադրման վայրում NaCN-ի կամ KCN-ի վրա ծծմբական թթվով ազդելով, իսկ  $\text{Ca}(\text{CN})_2$  ուղղակի շենքում շաղ տալով : Առաջին դեպքում թթվակայուն ամանների մեջ վորտեղ լցված է ծծմբական թթուն, լցնում են NaCN կամ KCN, վորոնց նախորդ վաթաթում են բարակ թղթով (անվրտանդ դարձեելու համար) : Ռեակցիան տեղի չե ունենում շատ ինտենսիվ : Այս պրոցեսը հաճախ կատարում են շենքից դուրս հատուկ դազոպեներատորների մեջ, վորոնց միջից հատուկ թեղան ների ողնությամբ HCN-ը մացվում է շենքի մեջ :

Մանր  $\text{Ca}(\text{CN})_2$ -ը սպտապործելի՝ HCN-ը շատ հեշտությամբ է ստաջանում ողի ածխաթթվի և ջրի ազդեցությունից. այս հանգամանքը  $\text{Ca}(\text{CN})_2$ -ին դարձնում է ավելի գնահատելի՝ NaCN-ի և KCN-ի հետ համեմատած :

Գոյութուն ունեն կալցիումի ցիանիդի բաղմատեսակ պրեպարատներ, վորոնք մեկը մյուսից տարբերվում են  $\text{Ca}(\text{CN})_2$ -ի պարունակությամբ, մասնիկների ձևով և «սիզնալիզատորների» լինել-չլինելով :

«Սիզնալիզատոր» պարունակող պրեպարատներից է «ցիկլոն»-ը, վորն իր մեջ պարունակում է արտասովաբեր նյութեր : Արտասովաբեր նյութը դուրըչիանալով HCN-ի հետ միասին հնարավորություն է տալիս զգալու վերջինիս ներկայութունը շենքում և կանխելու թունավորման դեպքերը : Սիզնալիզատորների դեքը չի սահմանավախում միայն դրանով, նրանք ունենալով զրգոխ ազդեցութուն՝ առաջացնում են միջատների աշխուժացում, վորն զգալի չափով նպաստում է վերջինիս ավելի շուտ թունավորվելուն :

Արտասահմանում գոյություն ունեն ցիկլոն-ի մի քանի տեսակներ—ցիկլոն «B» կիվիլգուրը ծծեցրած  $\text{HCN}$  և  $\text{CCLOO} \cdot \text{CH}_3$ , ցիկլոն «C» սարբերվում է «B»-ից նրանով, վոր վորպես սիգնալիգատոր մտցված է  $\text{CCL}_3\text{NO}_2$ -ը և բացի այդ  $\text{HCN}$ -ի ստարիլ-դատոր: Ցիկլոնները պահվում են հերմետիկ կերպով փակվող թիթեղյա ամանների մեջ:

Ամերիկայում վորտը տարածում ունի նաև հեղուկ  $\text{HCN}$ -ի ողտազործումը: Վերջինիս անհարմարությունն այն է, վոր պահվում է և տեղափոխվում է սրղպատյա ամաններում, վորոնց մեջ ընդունակ է ինքնապոլիմերիզացիայի յենթարկվելու և բռնկումներով քայքայվելու:

Շենքերում կրծողները դեմ պայքարելիս վերցնում են 5 գր.  $\text{HCN}$  1 մ<sup>3</sup>-ին 4 ժամից վոչ պակաս եքսպոզիցիայով:

Ինչպես այս դեպքում, նույնպես և հետագայում կոնցենտրացիաները մենք կարտահայտենք վոչ թե ցիանիդներով, այլ  $\text{HCN}$ -ով:

Վորպեսզի վորոշել, թե ինչ քանակի ցիանիդ է հարկավոր վերցնել,  $\text{HCN}$ -ի այս կամ այն կոնցենտրացիան ստանալու համար, պետք է խմանալ, վոր 100 տոնոսանոց ցիանիդները կարող են տալ հետևյալ քանակի  $\text{HCN}$ : 1 գր.  $\text{NaCN}$ -ը— 0,551 գր.  $\text{HCN}$ , 1 գր.  $\text{KCN}$ — 0,415 գր.  $\text{HCN}$ ; 1 գր.  $\text{Ca}(\text{CN})_2$  — 0,586  $\text{HCN}$ :

Ալյուրի ցեցի դեմ աղացներում և սահեստներում պայքարելիս վերցնում են 12 գր.  $\text{HCN}$  1 մ<sup>3</sup>-ին, 18 ժամից վոչ պակաս եքսպոզիցիայով: Հատկկեղևների մեջ դանված ամբարային յերկարակնճիթի դեմ  $\text{KCN}$ -ը վոչ միշտ է լավ արդյունք տալիս, վորովհետև վաս է թափանցում հատիկեղևների շերտի միջով: Դատարկ շենքերը դեղինակցիայի յեն յենթարկում 10—12 գր.  $\text{HCN}$ -ով 1 մ<sup>3</sup>-ին 24 ժամյա եքսպոզիցիայով:

Բոլոր թվարկած կոնցենտրացիաններն իրական են 15-ից բարձր ջերմաստիճանների դեպքում: 15<sup>0</sup>-ից ցածրի դեպքում կոնցենտրացիան, հարկավոր է բարձրացնել:

Դատարկ սահեստների, ինչպես նաև աղացների Ֆուսիլ-պացիայի համար մեծ հաջողություն կարելի յե ողտազործել ցիանալրավը: Այս ուղղությամբ կատարված Ֆուսիլպացիոն աշխատանքները ցույց են տալիս, վոր ցիանալրավի 80—100 գր. 1 մ<sup>3</sup>-ին ծախսման նորմայի դեպքում (20—25 գր.  $\text{HCN}$  1 մ<sup>3</sup>-ին) ամառ ժամանակ 24 ժամյա եքսպոզիցիայով կարելի յե լավադույն

արդյունք ստանալ բոլոր տեսակի ամբարային լինաստույթների  
դեմ: Այս նպատակները համար անհրաժեշտ և արտադրծել «վա-  
սողանման» (մանր հատիկավոր) ցիանուրյալը, վերսովհետեվ խո-  
չոր հատիկավորը HCN— դանդաղ և ասաջացնում, իսկ փոշե-  
նմանը վասնդավոր և դործածության տեսակետից (չառ ուժեղ  
կերպով փոշիանում և): Գործադրման տեխնիկան շատ պարզ և  
ցիանուրյալի փոշին բարակ շերտով չալ ևն աալիս Փուճիղացիայի  
յենթարկվող շենքի հատակին: Շենքի ղեկավարացիան տեղում և  
12—24 ժամ:

HCN-ով Փուճիղացիայի յենթարկված սերմացուի ծլունակու-  
թյունն ընդհանրապես չի իջնում: HCN-ի հանդեպ ամենից դի-  
մացկուն ևն յուզոտ սերմերը, պակաս գլմացկուն ևն կրախմայով  
հարուստ սերմերը և ավելի պակաս՝ շառ սպիտակուցներ պա-  
րունակողները: HCN-ով կատարած արտադրական փորձերը  
ցույց ևն աալիս, վոր նրանով ճարպերը, ալյուրը, հատիկեղենը,  
սուրճը, թեյը և նման մթերքները Փուճիղացիայի յենթարկելիս՝  
HCN-ը նրանց կողմից կլանվում և 100 դր. նյութին 0,25—3  
մգր. չափով: Ամենից շառ կլանում ևն ճարսիքը, բոլորից քիչ՝  
հացահատիկները: Այս անալիզները կատարված ևն 4 ժամ տեղով  
Փուճիղացիայի յենթարկված (14<sup>0</sup>-ում լավ հերմետիկ շենքը)  
նյութերը 62 ժամյա քամահարման յենթարկելուց հետո: Կոն-  
ցենտրացիան Փուճիղացիայի ժամանակ յեղել և 6 դր. HCN 1  
մ<sup>3</sup>-ին: Այդ տեսակ նյութերով թունավորելու վասնդ չկա, նա-  
մանավանդ, յեթև ի նկատի ունենանք, վոր նախքան ուտվելը  
նրանք յենթարկվում ևն լրացուցիչ քամահարման: Մարդկանց  
համար հեղուկ HCN-ի մահացու զոզան հավասար և 50 մգր.,  
Փուճիղացիայի յենթարկվող նյութերից HCN-ը աղղում և սուր-  
ճի և թեյի համի վրա:

ԽՍՀՄ-ում կատարված փորձերը ցույց ևն ավել, վոր հացա-  
հատիկի մեծ պարտիաներ ցիանուրյալով Փուճիղացիայի յենթար-  
կելիս (փոշոտման մեթոդով) Փուճիղացիայից հետո հատիկնե-  
րի թաղանթը սպարունակում և զղալի քանակությամբ HCN:  
Դատարկ պարկերի ապավարակման համար HCN ախնքան հար-  
ժար չի, վորովհետեվ դժվար և թափանցում պարկերի շերտի  
միջով և վորպեսզի ստանան քիչ թե շառ լավ ևՓՖեկա, ան-  
հրաժեշտ և դործածել մեծ քանակի HCN՝ 30—40 դր. 1 մ<sup>3</sup>-ին:

Հերմետիկ կերպով փակվող կամերաներում սերմացու և տնկիներ ֆումիլացիայի յենթարկելիս՝ վերցնում են 2,5 գր․ HCN 1 մ<sup>3</sup>-ին, և քսպոզիցիան 45—60 րոպե։ Մնացած որչեղանե-  
րի համար կոնցենտրացիան բարձրացնում են մինչև 4—5 գր-ի։ Այս նպատակի համար ամենից հարմարն է փոշենման Ca(CN)<sub>2</sub>-ի սպտադործումը։ Բամբակի հակերի և սերմերի ղեկդնակցիայի ժամանակ փակում են կամերաներում կոնցենտրացիան բավական բարձր են վերցնում— 50—55 գր․ HCN 1 մ<sup>3</sup>-ին մինչև 100 րո-  
պե և քսպոզիցիայով։ Այս ձևով կատարված ղեկդնակցիան տա-  
լիս և վնաստալի լրիվ մահացութուն, իսկ սերմերի և բամբա-  
կի թելի վորակը զբանից չի տուժում։

Շնորհիվ այն հանդամների, փոր HCN-ը համեմատած մյուս ֆումիլացիաների հետ սրակաս չափով և ազդում բույսերի վրա, այն լայն չափերով սպտադործում են կանաչ բույսերը լվիճների, տրիպաների, կոկցիդների դեմ ֆումիլացիայի յենթարկելու հա-  
մար։ Ջերմոցներում սպտադործում են 0,15—2,5 գր․ HCN 1 մ<sup>3</sup>-ին կոնցենտրացիաները 12—24 ժամ և քսպոզիցիայով, 15<sup>0</sup>-ից վոչ սրակաս լինելու ղեկզբում։ Այս նպատակի համար բոլորից շատ սպտադործվում և փոշենման Ca(CN)<sub>2</sub>-ը։

Բավական տարածում ունի HCN-ի սպտադործումը ցիտրուս-  
ների և թեյի պլանտացիաների ֆումիլացիայի համար։ Այս ղեկզբում ֆումիլացիան կատարվում և վրանների կամ հատուկ կերպով պատրաստված արկղների տակ 1,5—6 գր․ HCN 1 մ<sup>3</sup>-ին կոնցենտրացիայի հաշվով և 45—60 րոպե և քսպոզիցիայով։ Այս նպատակի համար նույնպես լավ և սպտադործել Ca (CN)<sub>2</sub> կամ ցիկլոնը։

Քիչ քանակությամբ ցիանիդներն սպտադործվում են նաև կանաչ բույսերի փոշոտման համար (խաղողի վաղի վնասատուների դեմ)։ Այս ղեկզբում սպտադործում են փոշի Ca(CN)<sub>2</sub>, փո-  
շոտումը կատարում են սովորական մտորային փոշոտիչներով, բայց մեքենաների փոշոտող մասը ծածկույթով պատում են, վորպեսզի թույնի մասնիկները քամին չտանի։

Հողի ղեկդնակցիայի համար ցիանիդներն առայժմ չեն սպ-  
տադործվում։ Սուսլիկների դեմ մեծ հաջողությամբ կարելի չե  
սպտադործել ցիանուլայով, վորի 1—2 գր․ ամեն մի րնին միան-  
դամայն լավ արդյունք է տալիս։

Թունուհակությունը մարդկանց նկատմամբ: Բոլոր հայտնի ֆունդանտներէց HCN-ը հանդիսանում է մարդկանց նկատմամբ ամենից թունավորը: 0,58 գր. HCN-ը 1 մ<sup>3</sup>-ին կոնցենտրացիայի պայմաններում 10—15 րոպե մնալիս անողորման մահ է ստաջանում: 0,1 գր 1 մ<sup>3</sup>-ին սուրկտալ է 0,5—1 ժամ տեւողութեամբ: Անվտանգ կոնցենտրացիան է 0,048 գր. 1 մ<sup>3</sup>-ին: Թեթեւ թունավորման դեպքում առաջանում է կոկորդի դրդիս և դառն համբերանում: Ավելի ուժեղ թունավորման դեպքում առաջանում է փախում, զլիացում, ուշաթափություն, ջրածուրթթյուններ և մահ: Մահը առաջանում է շնչաուլթյան կենտրոնների կաթմածի հետեանքով:

Սուլֆորական ԲՆ հակազարերը անընդունակն են պաշտպանելու HCN-ից: HCN-ի հետ աշխատելիս սպասելով ծուրծուր կենթիվածնի հակազարերի կամ ուտիչ հիմքերի կլանիչներով հատուկ հակազարեր:

### Մ Մ Ո Ւ Մ Բ.

Ծծումբը և նրանից պատրաստած պրեպարատները ինսեկտոֆունդիտիզների մեջ բռնում են հատուկ և առաջնակարգ տեղ: Մենք ղիտմամբ ծծումբը տեղավորում ենք ինսեկտիտիզները ղլխի վերջում, անմիջապես ֆունդանտներէց հետո և անմիջապես ֆունդիտիզներից առաջ, վորովհետեւ իր հանդես բերած ֆիզիոլոգիական հատկություններով ծծումբը կարելի յե դասել ֆունդանտների շարքում, քանի վոր նա կարող է կիրառվել աչքողով վիճակում: «Չուր» տիպի դեմ նա փաստորեն հանդես է գալիս վորպես կոնտակտ ինսեկտիտիզ: Վերջապես ալըացող (ոնդիտում, դոմադիների ալըացողի) և մի շարք ուրիչ սնկերի նկատմամբ նա հանդես է բերում ֆունդիտիզ հատկություններ: Այդպիսով, կարելի յե ստել, վոր ծծումբը տիպիկ ինսեկտոֆունդիտիզ է:

Ծծմբի դործածությունը դյուղաստեպության մեջ հարյուր տարուց ավելի պատմություն ունի:

Առաջին անգամ ծծումբն ուղտադործվել է սնկային հիվանդությունների դեմ 1821 թվին, յերբ դեռ հայտնի չեյին հիվանդությունն առաջացնող սրտաճանկերը: 1846 թվին մեծ հաջողութեամբ ծծումբն ուղտադործվում է Անգլիայում խաղողի վաղի ոնդիտում հիվանդության դեմ: 1850 թվին նույնը կատարվում է Փրանսիայում և միևնչեւ հիմա ծծումբը մնում է վորպես անփոխարինելի պրեպարատ ոնդիտումի դեմ պայքարելու համար:

Վորպես ախարիսիդ (տիգերի դեմ) առաջին անգամ ողտա-  
զործվել է մարդկանց թոս Հիվանդությունն առաջացնող  
Sarcoptes scabie տիգի դեմ:

Բույսերի փնտսատուներից առաջին անգամ ողտազործվել է  
նույնպես տիգերի դեմ: 1898 թվին Թբիլիսիի Ֆելքսերային կո-  
միտեյի հրահանգիչ Կանդուրայովը շատ պրիմիտիվ կերպով  
փորձում է փոշոտել «Չոս»-ով վարակված բամբակը ծծմբի փո-  
շիով: Ստացված արդյունքը լինում է թյնքան ցայտուն և լավ,  
վոր դրանից հետո սկսում են մեծ չափերով ողտազործել ծծումբ-  
ը բամբակենու տիգի («Չոս»-ի) դեմ պայքարելու համար և  
մինչևիվ հիմա այն մնում է վորպես անփոխարինելի պրեպարատ:

Ներկայումս ծծումբը բույսերի պաշտպանության գործում  
պատագործվում է ղլխալորապես բամբակենու տիգի («Չոս»-ի)  
դեմնա նահանգում և Իտալիայում— Սիցիլա կղզու վրա:

Ծծումբը մեծ մասամբ ստացվում է ծծմբի հանքերից, վո-  
րոնց մեջ հաճախ ծծումբը կաղմում է 90 և ավելի տոկոս: Դիչ  
քանակությամբ ծծումբ ստանում են նաև մետաղաձուլական  
գործարաններում (պղնձի, յերկաթի) արդյունաբերության մեջ  
և կոկաի ալյուրաց, վորպես «լազ» ծծումբ: Գործարանների ծխի  
հետ հեռանում է հանքի մեջ գտնված ծծմբի դիսպերսիոն մաս-  
նիկները, վորոնք հատուկ սարքավորումների միջոցով հավաքում  
են և ուտազործում:

Ծծմբի ամենահարուստ հանքերը գտնվում են ԱՄՆ-ի Լուի-  
զիանա նահանգում և Իտալիայում— Սիցիլա կղզու վրա:

Մինչև 1932 թիվը մենք ծծումբը ներմուծում էինք Ամերի-  
կայից և Իտալիայից: Յերկրորդ հնդամյակի ընթացքում հայտ-  
նաբերված հարուստ հանքերը մեզ մոտ և, նրանց արտադրու-  
թյան կազմակերպումը ներկայումս հնարավոր են դարձրել բա-  
վարարել մեր պահանջները սեփական խորհրդային ծծումբով:

Քիմիական հասկալարյունը: Ձրում ծծումբը չի լուծվում,  
բայց լավ լուծվում է ծծմբածխածնի մեջ— վառ և լուծվում  
բենզոլի մեջ և ավելի վառ քլորոֆորմի և սպիրտի մեջ: Ողում  
մնալիս՝ ծծումբը կամաց-կամաց գոլորչիանում է. այս հանգա-  
մանքը կարեւոր է նրա ազդման մեխանիզմը բացատրելու տեսա-  
կետից:

Մարուր ծծումբն ողտազործում են ղլխալորապես փոշի վի-  
ճակում՝ բույսերը փոշոտելու համար: Նայած ծծմբի փոշու

ստանալու գործարանային յեղանակին՝ սարքերվում և 4 տեսակ ծծումբի փոշի (ՈՍՏ 6855) :

1. Աղացված ծծումբ, վորը ստանում են կոչա ծծումբը աղալու (ձեծելու) միջոցով (Марка «Мол»):

2. Վենտիլացիոն ծծումբ, վորը ստանում են աղացված ծծումբը աժեղ քամու ողնությամբ մանր ծակաակեն մեաքսի գործվածքի միջով անցկացնելով (Марка «вен»):

3. Թորած ծծումբ՝ ծծմբի ծաղիկ (Марка «воз»), ստացվում և ծծումբը տերմիկ կերպով թորելու միջոցով: Տաքացնելուց առաջացած ծծմբի գոլորշիները հատուկ կամերաներում կողեանում են և «ծաղիկ» նման նստում կամերայի պատերին:

4. Նստեցրված ծծումբ, ստացվում և լուծույթից քիմիորեն նստեցնելուց (Марка «Оса»):

Վերեվ բերված չորս տիպի ծծմբի պրեպարատները լինում են 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ տեսակի (сорт), նրանց քիմիական բաղադրությունից և Ֆիզիկական վիճակից կախված:

ՈՍՏ-ի համաձայն նրանք պեռք և համապատասխանեն հետևյալ տեխնիկական պահանջներին.

**1 ԳԻՄԻԱԿԱՆ ԲԱՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Խոզրիդիենաներ	1 տեսակ	2 տեսակ	3 տեսակ	4 տեսակ
Մաքուր ծծումբը վոչ պակաս . . . . .	99,5 %-ից	97 %-ից	95 %-ից	75%-ից
Խոնավությունը վոչ ավելի . . . . .	0,2 %-ից	0,5 %-ից	1,25 %-ից	5%-ից
Մոխիրը վոչ ավելի . . . . .	0,3 %-ից	2,3 %-ից	3%-ից	15,5%-ից
Թթվությունը վոչ ավելի . . . . .	0,02 %-ից	0,1 %-ից	0,15 %-ից	չի վորոշվում
Սևեն և Արսեն միասին վոչ ավելի . . . . .	0,001% -ից	0,1 %-ից	0,1 %-ից	չի վորոշվում

**2. ԳՐԱՆՈՒՎՈՄԵՏՐԻԿ ԿԱԶՄԸ**

Տ Ե Ս Ա Կ Ն Ե Ր Ը	Մասնիկների մեծությունը		
	Անդրիական մեշեցով	Անցքերի թիվը 2 1 սմ վրա	Մաղի մեջով անցնող ծծումբի քանակը % -ով, վոչ պակաս
I . . . . .	250	10,000	98
II . . . . .	200	6,400	96
III . . . . .	175	5,000	95
IV . . . . .	175	5,000	93

### 3. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1, 2-րդ, 3-րդ տեսակի ծծումբները պետք է լինեն

ա) դեղին-մոխրագույն,

բ) լավ սորուն,

գ) հալման կետը՝ ծծումբածաղիկի համար 111-113°, աղացված և վենտիլացիոն ծծումբների համար 115-119°:

Բացի ծծմբի նշված պրեպարատներից, դյուզատնետեսության մեջ փոշուաման նպատակով ուղտագործում են նաև ծծումբի կոնցենտրատները, վորոնց ստացման յեղանակն ավելի հեշտ է: Ծծումբի կոնցենտրատներից փոշուաման համար ուղտագործում են միայն 1-ին տեսակը, ըստ վորում ա) 70% ծծումբ պարունակելիս 200 մեշ մաղի միջով պետք է անցնի պրեպարատի 80 -ից վոչ պակասը: Բ) Ծծմբի 50%-ի դեպքում 92%-ից վոչ պակասը: Պրեպարատի խոնավությունը պետք է լինի 5 տոկոսից վոչ ավելի, կոշտեր չպետք է պարունակի:

1933 թվին դործածության մեջ մտցրվեց «Ուլտրածծումբը» Ուլտրածծումբը պատրաստվում է հետևվյալ կերպ՝ մանր աղացված ուսկան բարձր ջերմաստիճանում (110-140°) խառնում են հարված ծծմբի հետ: Հարվելու ժամանակ ծծմբին ավելացնում են շատ քիչ քանակությամբ իոդ և բետանափոս: Վերջիններն ավելացնում են, վորպեսզի խանդարեն ծծումբի մոնոկլինիկ ձևը, ոտմբիկ, ավելի պակաս թունուակ, ձևին անցնելուն և բացի այդ, նրանք դելով հարված ծծմբի մակերեսային լարվածությունը՝ նպաստում են նրանով ուսկանի մասնիկները հափառարաչափ ծածկելուն: Ստանցնելուց հետո մանրացնում են և աղբյղիսով ստացվում է ուլտրածծումբը: Յենթադրվում է, վոր այս դեպքում ստացվում է պրեպարատ, վորի մասնիկների կորիզը կազմում է իներտ մասսան (ուսկան), իսկ նրա մեկերեւարակ շերտով նստած են ծծումբի մասնիկները, բայց արատըրական պայմաններում հնարավոր չի լինում ստանալ պրեպարատի աղբյղիսի իդեալական կառուցվածք:

Ուլտրածծումբը պիտի պարունակի 20% ծծումբ և 175 մեշ մաղի միջով պետք է անցնի նրա մասնիկների 90%-ից վոչ պակասը: Ուլտրածծումբի Ֆիզիկոքիմիական հատկությունները ներկայումս կատարելագործվում են, ստանձին ուշադրություն և դարձվում նրան լավ կաշտղունակություն տալու ինդրի վրա: Ներկայումս շատ սահմանափակ դործածություն ունի այն:

Բացի ծծմբի փոշի վիճակում ողտազործվող պրեպարատներից, կան և ծծմբի պրեպարատներ, Վերոնք ուլտազործվում են հեղուկ վիճակում. դրանցից են կոլոիդալ ծծումբը, վորի զործածությունը բալական տարածված և ԱՄՆ-ում: Մեզ մոտ ևս վերջին ժամանակներս կոկսի գազերի ուլտազործումից ստանում են «Մոսգազ» պրեպարատը, վորը կանաչ դեղնագույն սլաստա յի: Պատան պարունակում և իր մեջ մոտ 40 տոկոս ծծումբ, 50 տոկոս խոնավություն, 0,2—0,5 տոկոս արսեն և այլն: Պատանյի մեջ յեղած ծծմբի մասնիկներն ունենում են 2—5 միկրոն մեծություն, վորը հնարավորություն և տալիս նրանցից կայուն սուպենդիաներ ստանալ: Մուսպենդիային ավելի կայունություն տալու համար լուծույթին ավելացնում են ստարիլիդատոր: Այս պրեպարատը դեռ նոր և և ներկայումս գտնվում և փորձարկման շրջանում:

Ազդեցությունը միջատների և սնկերի վրա: Չնայած ծծումբի զործածման յերկարամյա պատմությանը՝ դեռ մինչև հիմա չկա գիտականորեն վերջնականապես հիմնավորված տեսակետ, վորը բացատրի ծծմբի ազդման մեխանիզմը: Այս խնդրի շուրջը կան բազմաթիվ հիպոթեզներ: Շատ գիտականներ այն կարծիքին էլին, վոր ծծումբն ընդունակ լինելով սքսիդանալու, առաջացնում և  $SO_2$ ,  $SO_3$  և ապա  $H_2SO_4$ , վորը և ազդում և որդանիզմի վրա: Մեկ ուրիշ տեսակետի համաձայն՝ ծծումբն առաջացնում և  $H_2S$ , վորը բարձր թունունակ լինելով հանդեպ փոսատու որդանիզմների, հանդիսանում և նրանց վրա ազդող սկզբնապատճառ: Այս տեսակետների վոչ հիմնավոր լինելն ապացուցում և թեկուզ այն փաստը, վոր ծծմբով փոշոտված դաշտում սգի մեջ  $SO_2$ ,  $SO_3$  կամ  $H_2S$  գտնելու բոլոր փորձերը միշտ անհաջողությամբ են վերջացել:

Ավելի նորագույն հետազոտությունները ցույց են տալիս, վոր ծծումբն ընդունակ լինելով հեշտությամբ դիսպերսվելու, հեշտությամբ առաջացնում և կոլոիդալ ծծումբ, վորի մասնիկները տիզերի շնչատար անոթներով թափանցում են որդանիզմի մեջ վորպես ելեմենտար ծծումբ և միայն որդանիզմի մեջ տեղի ունեցող սեակցիաների ազդեցության տակ՝ առաջացող ծծրական թթան և դանում որդանիզմի քայքայման պատճառը: Մնկերի նկատմամբ հիմնավորված և այն կարծիքը, վոր ելեմենտար ծծումբն ընկնելով սնկի վրա՝ նրա ներկայությամբ (նույնը կարող և կատարվել և բույսի վրա) առաջացնում և  $H_2S$ , վորը և

աղբում և սնկի վրա:  $H_2S$ -ի թունունակութունը սնկերի նկատմամբ շատ բարձր է, բայց նրանց առանձին տեսակները նախ թույլ կերպով են վերականգնում ծծումբը  $H_2S$ -ի և յերկրորդ՝ իրենց ֆիզիոլոգիական առանձնատեսակութունների շնորհիվ կարող են դիմացկուն լինեն  $H_2S$ -ի նկատմամբ, վերով և կարելի չե բացաարել վերջ սնկերի նկատմամբ ծծմբով կտտարված փոշոտման փոշ և ֆֆֆեկտիվ լինելը: Այդպիսով, սնկերի նկատմամբ կարելի չե ասել, վոր ծծմբի գոլորչիանալուց նրա մասնիկերը ելեմենտար վիճակում հպվում են սնկի հետ, վորի մեջ գտնված գլյուտատինոն-ը ծծումբը վերականգնում է մինչև  $H_2S$ -ի, վորը և աղբոյն և հանդիսանում: Այդպիսով կարելի չե դալ այն յեղրակացության, վոր բոլոր այն ֆիզիոլոգիական ֆակտորները, վորոնք կնպաստեն ծծմբին (փոշոտելուց առաջ և հետո) մանր-գլյուպիտինոն վիճակին անցնելուն, կնպաստեն նաև նրա և ֆֆֆեկտիվության բարձրացմանը: Ծծմբի սղտաղորման բոլոր դեպքերում կարելիոր նշանակութուն ունեն ջերմաստիճանային պայմանները: Նկատված է, վոր ծծումբը լավ արդյունք է տալիս, յեթև փոշոտման ժամանակ կա բարձր ջերմաստիճան:  $30^{\circ}-C$ -ից ցածրի դեպքում ծծմբով փոշոտելիս ըստացվում է շատ վատ և ֆֆֆեկտ և դա հարկանալի չե, վորովհետև (ծծմբի աղբման մեխանիզմը, գոյություն ունեցող թեստիաններից վորով էլ բացաարելու լինենք) բարձր ջերմաստիճանը միշտ էլ կարելիոր ֆակտոր է թունալորող սկզբնապատճանն առաջացնելու տեսակետից: Բարձր ջերմաստիճանն արագացնում է ծծմբի գոլորչիացումը և հետևապես կոլոիդալ ծծմբի առաջանալը: Բարձր ջերմաստիճանը նպաստում է ծծմբի սքսիդանալուն և հետևապես,  $H_2S$ -ի, ինչպես նաև  $H_2SO_4$ -ի առաջանալուն: Այդ իսկ պատճառով ծծմբի փոշոտումը չող ամիսներին միշտ ավելի լավ արդյունք է տալիս: Բայց այստեղ պետք է զբոլացնել, վոր ամառվա ամիսներին, յերբ մեզ մոտ Արարատյան դաշտալարում ցերեկը արեփի սակ ջերմաստիճանը մինչև  $70-75^{\circ}$ -ի չե հասնում, ծծմբի փոշոտումը հատկապես հզոր մեքենաներով նպատակահարմար չե, վորովհետև պետի ուժեղ տացաքման հետևմանքով առաջացած կոնֆեկցիոն հոսանքներն իրենց հետ տանում են փոշոտվող ծծմբի մասնիկները և արբիսով դալի պակասեցնում փոշոտվող ծծմբի քանակը, վորի հետևմանքով պակասում է նաև և ֆֆֆեկտիվությունը: Այդ տեսակետից փոշոտման ամենալավ ժամկետը պետք է համարել վաղ

առավոտյան, յերբ դեռ քամինքը չկան, չկան կոնվեկցիոն հոսանքներ և բույսերի վրա կարող է ցոլ լինել, վորը կնպաստի մասնիկների կաշեւուն բույսերից: Ծծմբի եֆֆեկտիվութեան վրա մեծապես ազդում է նաև բույսերի վրա յեղող խոնավութեանը (հատկապես ցողը), վոր նախ նպաստում է ծծմբի հիդրոլիզին և հետեւապես կոլոիդալ ծծմբի առաջացմանը և յերկրորդ՝ նպաստում է ծծմբի փոշի մասնիկների տերեւներին լավ կաշեւուն: Միջին Ասիայում բամբակագործութեան ստախանովահանները նախքան ծծմբով փոշոտելը դաշտը սրսկում են ջրով:

Այնուհետև ծծմբի եֆֆեկտիվութեան վրա մեծապես ազդում է նաև նրա մանրվածքի աստիճանը: Քանի մանր է ծծմբի փոշին, այնքան նրա մասնիկները ավելի մեծ մակերես կունենան և, հետեւապես, ավելի շատ հնարավորութեան ծծումբ գոլորչիացնելու: Համար: Ծծմբի մասնիկների փոքրութեանը մեծապես նպաստում է նաև նրա կաշողունակութեան: Ծծմբի համար կաշողունակութեանն առաջնակարգ նշանակութեան ունի: Ներկայումս արդեն ապացուցված է, այն կարծիքի սխալ լինելը, վորի համաձայն դաշտային պայմաններում ծծումբը կարող է ազդել տարածութեան վրա: Ծծումբն ունի ազդման շատ փոքր շառափիղ և վորպեսզի նրա փոշոտումից ստացվի լավ եֆֆեկտ, անհրաժեշտ է փոշոտումը կատարել այնպես, վոր նրա մասնիկները հավասարապես ծածկեն վարակված բույսի տերեւների մակերեսը թե՛ տակի և թե՛ վերեւի կողմից: Այս բանը նույն չափով վերաբերում է թե՛ ծծումբը վորպես ակարիսիդ, թե՛ վորպես Ֆունգիսիդ ոդտադործելուն, և միանգամայն սխալ պետք է համարել դրականութեան մեջ հաճախ յեղած այն ցուցումները, վորոնց համաձայն ծծումբը կարող է ազդել նույնիսկ այն դեպքերում, յերբ նրան շող են տալիս դեմնի յերեսին:

Կարեւոր հանգամանք է նաև ծծմբի փոշու պահունակութեանը: Ծծումբն ունենալով բավականին յերկար ազդման տեւողութեան (7—8 օր), անհրաժեշտ է, վոր տերեւների վրա վորքան կարելի յէ յերկար պահվի: Այս նպատակին հասնում են ինչպես լավ ազացվածք ունեող պրեպարատներ ոդտադործելով, նույնպես և նրանց հետ հատուկ ինդուրիդինտներ խառնելով, որինակ տալիի փոշի, հանքային յուղեր և այլն:

Ծախուման նորմաները: Բամբակենին «Չոռ»-ի դեմ ծծմբով փոշոտելիս առաջնորդվում են հիմնականում բույսի վիճակով:

յերբ բամբակենին դեռ փոքր է, բավականանում են 20—30 կգր․ մեկ հեկտարին ծախման նորմայով, վեզետացիայի կեսերին այն բարձրացնում են 30—40 կգր—ի, իսկ վերջին փոշոտումների ժամանակ, յերբ արդեն բամբակենին այնքան է աճել, վոր տեղի յե ունեցել շարքերի միակցում, ծախման նորման հասցնում են մինչև 40—50 կգր—ի: «Չոռ»—ի դեպքում բամբակենին փոշոտում են 110—15 սրբ մեկ անգամ, հաշվի առնելով տիզի զարգացման հնատեսիվությունը, ինչպես և ծծմբի աղման տեվողությունը:

Ռիզիումի դեմ պայքարելիս՝ ծախման նորման նույնպես տատանվում է 20—50 կգր․ միջև: Ռիզիումի դեմ կտտարում են յերեք փոշոտում: Առաջին փոշոտումը՝ յերբ չիվերն սկսում են աճել, յերկրորդը՝ խաղողի ծաղկելուց հետո և յերրորդը՝ յերկրորդ փոշոտումից 20—30 սր հետո:

Բացի ռիզիումից, ծծումբն սդտադորմվում է նաև զգմազդիների ալրացողի, դեղձի ալրացողի, ինչպես նաև հացահատիկների ու վուշի ժանգի դեմ:

Այս հիվանդությունների դեմ ճիշտ կերպով մշակված ծախման նորմաներ չկան: Մոտայորապես կարելի յե ասել, վոր 30—40 կգր․ կբավականացնի մեկ հեկտար դաշտային կամ բանջարանոցային կուլտուրաները փոշոտելու համար: Հաճախ ծծմբի ծախման նորման կրճատելու, ինչպես նաև նրա փոշոտելությունը, կպնդունակությունը շաղացնելու նպատակով ծծումբը դարձածում են ինդրիդիենտների հետ միասին: Մեկ մաս ծծումբին վերցնում են մեկ մաս տալի, հանգամ կրի փոշի, սիուլումբին և այլն: Կշռելով հապասար քանակությունների ծծումբը և խառնուրդը՝ նրանք խառնում են իրար և տրորում այնքան ժամանակ, մինչև նրանց մեջ յեղած կոշտերը բոլորը վերվեն և ծծումբը հալասարապես տարածվի խառնուրդի մեջ: Յեթի խառնուրդը պարունակում է չմանրացվող կոշտեր, նրանց հարկավոր է հեռացնել մաղելու միջոցով: Ծծմբի կոնցենտրատները փոշոտում են առանց խառնուրդների․ նրանց ծախման նորմաները մաքուր ծծմբի հետ համեմատած 1—1,5 անգամ ավելի յեն:

Ազդեցությունը բույսերի վրա: Յերկար տարիների ընթացքում կտտարած դիտողությունները մեզ մոտցույց են տվել, վոր ծծումբը փոշ մի բացասական ազդեցություն չի սնննում ինչպես խաղողի վաղի, նույնպես և բամբակենու նկատմամբ, բայց դրականության մեջ կան տվյալներ (Յեվրոպայից), վորոնց համաձայն ծծումբն աղում է խաղողի վաղի՝ վրա՝ առաջացնելով

տերեվաթափ: Կան և տեղեկություններ հակառակ իմաստով, վոր ծծումբը նպաստում և վազի աճեցողությանը և պոուզները հասնելուն:

Բամբակենու նկատմամբ տարածված և այն կարծիքը, վոր նա ազդում և նրա վրա դբական կերպով և հաճախ տալիս և բերքի աճ մինչև 30 ասկոսի չափով, ազդելով վորպես պարարտանյութ:

Ծծումբը միանդամայն բացասաբար և անըրադանում սեխի, և հաղարջենու վրա, նրանով փոշտված սեխի և հաղարջենութիւնը տալիս են ուժեղ ալրվածքներ և տերեվաթափ, վորի պատճառով ծծմբի ոլտադործումը սեխի և հաղարջենու ալրացողերի դեմ չի թուլատրվում:

Ծծումբը բացասաբար չի անըրադանում վարունդի վրա և, ինչպես ցույց են տվել Հայկական Բույսերի Պաշտպանության Կայանի կատարած փորձերը ծծումբը կարելի յի հաջողությամբ ողտադործել Հայաստանի պայմաններում վարունդի ալրացողի դեմ պայքարելու համար:

Ագրեցությունը մարդկանց նկատմամբ: Ծծումբը մաքուր վիճակում մարդկանց նկատմամբ թունավոր ազդեցություն չի հանդես բերում, համենայն դեպս նրա յերկարամյա դործածության ընթացքում մարդկանց կամ անասունների թունավորման դեպքեր չեն յեղել: Ծծումբը բավական ուժեղ կերպով ազդում և մարդկանց աչքերի վրա, առաջացնելով ուժեղ դրդիտ և արտասուճք, վորի համար լայ և փոշտելու ժամանակ աշխատել փոշուց պաշտպանող ակնոցներով: Ծծմբով փոշտված խաղողը ուտելիս կարող և փորլուծ առաջացնել:

Պալիսուլֆիդներ: Պոլիսուլֆիդներ են կոչվում ծծմբի միացությունները ալկալի և հողալիալալին մեծագների հետ: Պոլիսուլֆիդներից գյուղատնտեսության մեջ ամենից շատ ոլտագործվում և կայցիումի պոլիսուլֆիդը: Կայցիումի պոլիսուլֆիդի (HCO — известково-серный отвар) դործածությունը գյուղատնտեսության մեջ բավական յերկար ասրիների պատմություն ունի: 1852 թվին Գրիլոնը յեփում և կրակաթր ծծմբի հետ և ստացած լուծույթը խառնելով ջրի հետ՝ ոլտադործում և սիդիումի դեմ պայքարելու համար: Բավական յերկար ժամանակ ԱՄՆ-ում ըայն դործունելություն ունի այսպես կոչված

կայլիֆորնյան հեղուկը, վորը տարբերվում էր սովորական ծծմբակրային յեղվածքից նրանով, վոր յեղելու ժամանակ նորան սովեյացնում էին սեղանի աղ: Հետագայում նկատեցին, վոր աղ սովեյացնելը սովելորդ է: Ներկայումս համարյա բոլոր յերկրներում լայն գործածութիւն ունի գործարանային յեղանակով պատրաստված կալցիումի պոլիսուլֆիդը: Կալցիումի պոլիսուլֆիդ պատրաստում են նաև գործածութիւն վայրում տնայնագործական յեղանակով:

Մեզ մոտ Հայաստանում պոլիսուլֆիդ պատրաստելու գործը կենտրոնացված է Գյուլամատի շրջանային բազաներում:

Գործարանային յեղանակով պատրաստած պոլիսուլֆիդն ունենում 34—36° խտութիւն (Be խտաչափով): Պրիմիտիվ յեղանակով պատրաստվածները մեծ մասամբ տալիս են 18—20°-ի խտութիւն: Պոլիսուլֆիդ պատրաստելու մի քանի գեղատոմսեր կան: Նայած նրան թե ինչ խտութիւն պոլիսուլֆիդ են ուզում ստանալ, համապատասխանորեն վերցնում են կրի, ծծմբի և ջրի հարաբերութիւնը. այսպես որինակ, կոմպոնենտների 1:2:6 (մեկ մաս կրին 2 մաս ծծումբ և մեց մաս ջուր) հարաբերութիւն դեպքում ճիշտ յեղելիս կարելի յե ստանալ մինչև 32—33°-ի խտութիւն պոլիսուլֆիդ: 1:2:10 հարաբերութիւն դեպքիս պոլիսուլֆիդը ստացվում է 24—25° խտութիւն: 1:2:12 տալիս է 18—20°: Պոլիսուլֆիդը պատրաստում են այսպես— սկզբում հաշվում են վերցվելիք կոմպոնենտների ճիշտ քանակները, առանձին չուզուների կաթսայում (վորի մեջ պիտի յեղվի պոլիսուլֆիդը) բաց են անում կիրը: Կիրը պետք է լինի լայնորակ, յեթե հանդէպուց հետո կաթսայի մեջ մնում են կրի չհանգած կտորներ, նրանց հեռացնում են և յեղն սովեյացնում են նույն քանակի լալ կիր: Հանդցնելու պրոցեսն արագացնու համար լալ և ուղտագործել տաք ջուր: Կիրը հանդցնելուց հետո նրա մեջ են անում ծծումբը— քիչ-քիչ և անընդհատ խառնում են փայտե թիակի ողնութիւն: Նախքան կրի վրա լցնելը ծծումբը պետք է ջրով բաց անել, պատրաստել ծծմբախմոր և նոր լցնել կրի վրա. բայց հաճախ ծծումբը յուզրտ լինելու դեպքում չի թրջվում, այդպիսի դեպքում անհրաժեշտ է ծծումբը ձեռքով տրորել կամ մաղել, վորպէսզի կոշտեր չմնան: Յերբ ծմումբն ու կիրն իրար հետ խառնված են, հատուկ փայտի ձողիկի վրա նշում են կաթսայի մեջ յեղած հեղուկի բարձրութիւնը և

սկսում են յեռացնել: Յեռման պրոցեսի ժամանակ յերկու անգամ տաք ջուր են ավելացնում. ջուրն ավելացնում են այն հաշվով, վոր կաթսայի մեջ հեղուկի բարձրությունը միշտ լինի հեղուկի սկզբնական բարձրության վրա: Առաջին անգամ ջուրն ավելացնում են յեռալուց 25-30 բույե հետո, յերկրորդ ջուրը՝ յեռալու պրոցեսը վերջացնելուց 15 բույե առաջ: 60-70 բույե յեռալուց հետո ստացվում է վառ բալի դուխի հեղուկ: Ստացված հեղուկը լցնում են տակառի մեջ, վորպեսզի պարզի: Պարզելուց հետո ստուգում են նրա խտության աստիճանը (խտաչափի ոգնությամբ) և ալոպիտի հեղուկն արդեն պատրաստ է սրակելու համար: Նայած նրա գործադրման նպատակին, այն բաց են անում ջրի տարբեր քանակների հետ և սրակում: Կայցիումի պոլիսուլֆիդը կարելի յե պատրաստել նաև վոչ մաքուր ծծմբից, Ֆլուտացիոն յեղանակով ստացված կոնցենրատներից, վորի դեպքում ծծմբի քանակը հաշվում են յելնելով նրա մեջ յեղած ծծմբի տոկոսից:

Պոլիսուլֆիդ կալցիումի վորակն ընդունված է վորոշել նրա տեսակարար կշռով, կամ խտության աստիճանով, բայց պետք է ասել, վոր կալցիումի պոլիսուլֆիդի տեսակարար կշռը չի կարող ճիշտ կերպով արտահայտել նրա թունունակությունը, վորովհետև կալցիումի պոլիսուլֆիդի թունունակությունը վորոշվում է նրա մեջ յեղած պոլիսուլֆիդային ծծմբի տոկոսով, իսկ նրա տեսակարար կշռի վրա ազդում են նաև պոլիսուլֆիդի մեջ յեղած ուրիշ միացություններ, վորոնք կամ Ֆիդիոլդիպպես անակտիվ են, կամ համեմատաբար պոլիսուլֆիդային ծծմբի հետ՝ ավելի պակաս թունունակ:

Ծծմբակրային յեխլածքի ճիշտ քիմիական բաղադրությունը մինչև հիմա դեռ պարզված չէ, չնայած նրանով շատերն են դրադվել: Ընդհանրապես կարելի յե յենթադրել, վոր ծծմբի հիմքային հիդրոլիզի հետեվանքով առաջին հերթին ստացվում է ծծմբաջրածին և ծծմբային թթու, վորոնք միանալով կրի հետ տալիս են ծծմբային և ծծմբաթթվային կալցիում: Ծծմբի ավելացուկի ներկայությամբ առաջանում է կալցիումի պոլիսուլֆիդ և կալցիումի ալոսուլֆատ:


Ընդհանրապես կալցիումի պոլիսուլֆիդների ֆորմուլան ընդունված է արտահայտել  $\text{CaS} \cdot \text{S}_x$ -ով. այս ձևով հնարավոր է լինում տարբերել մոնոսուլֆիդ և «պոլիսուլֆիդ» ծծումբները:

Այդպիսով պոլիսուլֆիդային ծծմբի քանակը վարողում և ծծմբի ընդհանուր քանակով հանած մոնոսուլֆիդ ծծումբը:

Ծծմբի ընդհանուր քանակի և պոլիսուլֆիդային ծծմբի քանակների տարբերությունը շատ կարեւոր հանգամանք և, վորովհետեւ ինչպես մենք արդեն ասեցինք պոլիսուլֆիդի թունունակությունը վորողում և նրա մեջ յեղած պոլիսուլֆիդային ծծմբի քանակով:


Պոլիսուլֆիդները ջրի մեջ դանձում են թեթեւ կերպով հիդրոլիզի յենթարկված վիճակում և հեղուկին տալիս են հիմքային բնույթ:

Հատկապես ջրով բացած ծծմբակրային յեփվածքը ողում պահելիս՝ ընդունակ և հեշտությամբ քայքայվելու, այդ քայքայումը տեղի յե ունենում նաև սրկման ժամանակ: Ամենից շուտ քայքայվում և կայցիումի պոլիսուլֆիդը, վորի հետեվանքով առաջանում և տիոսուլֆիդ և ազատ ծծումբ: Այդ ունակցիան կարելի յե արտահայտել հետեվյալ կերպով.



Ծծմբակրային յեփվածքի մեջ մտած, ինչպես և կայցիումի պոլիսուլֆիդի քայքայման հետեվանքով առաջացած տիոսուլֆիդները՝ յենթարկվելով հետադա ոքսիդացման՝ առաջացնում են ծծմբաթթվական կայցիում և հալանորեն նաև ազատ ծծումբ, բայց այս պրոցեսն ընթանում է անհամեմատ ավելի դանդաղ, քան կայցիումի պոլիսուլֆիդի քայքայման պրոցեսը և այդ պատճառով ավելի պակաս նշանակություն ունի: Բացի այս պրոցեսից, տեղի յե ունենում նաև կայցիումի պոլիսուլֆիդի արագ քայքայում ածխաթթվի աղեցություն տակ: Այս պրոցեսը բույսերի տերեփների վրա էտտարվում և ավելի արագ, վորովհետեւ հետեւ ողի ածխաթթվի հետ միանում և նաև տերեփների շնչատության հետեվանքով առաջացած ածխաթթուն:

Վերջին պրոցեսը քիմիորեն արտահայտվում և հետեվյալ կերպով.



Այս դեպքում ամբողջ պոլիսուլֆիդային ծծումբն անջատվում է վորպես մաքուր ծծումբ, իսկ մոնոսուլֆիդ ծծումբն անջատվում է վորպես ծծմբաջրածին: Տիոսուլֆատը ածխաթթվից փոփոխություն չի յենթարկվում: Այդպիսով, յերկու ունակցիաների հետեվանքով պոլիսուլֆիդային ծծմբի մեծ մասը անջատ-

վում և վորպես մաքուր ծծումբ և բարակ շերտով նստում սրակված տերեփների վրա, իսկ ախտուլֆաուր, վորպես ջրում հեշտ լուծվող հեշտուլֆյամբ լվացվում և տերեփների վրայից :

Ածխաթթվային կալցիումը և ծծմբաթթվական կալցիումը նույնպես մնում են տերեփների վրա :

Ազդեցութունը վնասատու որգանիզմների վրա : Ինչպես մենք արդեն ասացինք, պոլիսուլֆիդի թունունակութունը վորոշվում և նրա մեջ յեղած պոլիսուլֆիդային ծծմբի քանակով : Ազդման մեխանիզմը գեո մինչև հիմա պարզ չէ, յենթադրվում և, վոր կալցիումի պոլիսուլֆիդի քայքայման հետեւանքով առաջացած ելեմենտար ծծումբը կոլոիդ վիճակում հանդիսանում և կալցիումի պոլիսուլֆիդի մեջ ազդող սկզբնապատճառը :

Ազդեցութունը բույսերի վրա : Պոլիսուլֆիդի սպտադորմման հետեւանքով ալրվածքների առաջացման գեպքերը քիչ չեն : Առանձնապես վտանգավոր և կալցիումի պոլիսուլֆիդի բարձր կոնցենտրացիաների ուղտադործումը : 0,3-0,5<sup>0</sup>-ի լուծուլթներ ընդհանրապես ալրվածքներ չեն առաջացնում :

Կալցիումի պոլիսուլֆիդի սրակման հետեւանքով առաջացած տերեվաթափը բացատրվում և տերեվի կոթունի ճյուղի հետ միանալու տեղում յեղած հյուսվածքների գեպքերացիայով, ինչպես նաև նրանով, վոր պոլիսուլֆիդի լուծուլթը կլանվելով ազդում է քլորոֆիլի վրա և խանգարում ֆոտոսինտեզին : Կալցիումի պոլիսուլֆիդն ուղտադործում են նույն նպատակների համար, ինչ վոր ծծումբը :

Ամառային սրակումների ժամանակ ուղտադործում են նրա 0,4-0,5<sup>0</sup>-ի լուծուլթը բամբակենու տիղի, ինչպես նաև ալրացող սնկերի դեմ պայքարելու համար : Աշնանը և վաղ գարնանը ստղատու ծառերի սրակման ժամանակ (ծառերի տերեվագուրկ վիճակում) ուղտադործում են նրա 3-5<sup>0</sup> կոնցենտրացիա ունեցող լուծուլթները : Կալցիումի պոլիսուլֆիդը կարելի չէ ուղտադործել նիկոտինի, անաբազինի, ինչպես նաև պղնձարջասպի հետ : Վերջինիս հետ նա տալիս է շատ բարձր թունունակ լուծուլթ, վորը հնարավորութուն և տալիս պակասեցնել պղնձարջասպի ծախսը, իսկ կրի գործածութունը դարձնում և ավելորդ :

Սյգիների և բանջարանոցների համար այս ձևի լուծուլթներ պատրաստելիս վերցնում են 100 լիտր ջրին 400 կգր. 32-34<sup>0</sup> կալցիումի պոլիսուլֆիդ և 350 գր. պղնձարճասպ : Սաղողի վա-

դի համար՝ 600 գր. պոլիսուլֆիդ և 500 գր. պղնձարջասպ :  
 Կալցիումի պոլիսուլֆիդը չի կարելի համատեղ ոգտագործել  
 սապոնի, հանքային յուղերի, հմուլիաների, ինչպես նաև փա-  
 րիզյան կանաչի հետ, վորովհետև այս դեպքում առաջացած  
 փոխանակման օեակցիաները զցում են թունավոր լուծույթի  
 վորակը :

**ԱԶՂԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՅԵՎ-ԳՈՐԾՎԱԾՔՆԵՐԻ**  
**ՎՐԱ:** Կալցիումի պոլիսուլֆիդը ուժեղ չափով ազդում է պղնձի  
 վրա, վորի հետևանքով ինքը նույնպես վորոչ չափով կորցնում  
 է իր թունունակատեթյունը: Այդ իսկ պատճառով պղնձի մասեր  
 ունեցող սրակիչ ապարատներով կալցիումի պոլիսուլֆիդը սրակե-  
 լիս պեաք է հատուկ խնամք տանել ապարատների պահպանման  
 համար: Ամեն անգամ սրակման աշխատանքը վերջացնելիս՝  
 հարկավոր է խնամքով մի քանի անգամ լվալ սրակիչը և չորաց-  
 նել:

Հազուատեղենի վրա պոլիսուլֆիդը ազդում է քայքայիչ  
 կերպով:

### Ս Ո Ղ Բ Ա Ր .

Սուրբարը բավականին յերկար խոնամակ հայտնի յե արաու-  
 սահմանում, վորտեղ ոգտագործվում է ալրացող սնկերի և բու-  
 ստկան տիգերի դեմ նյայքարելու համար: Սուրբարն իրենից ներ-  
 կայացնում է մի քանի նյութերի մեխանիկական խառնուրդ,  
 վորոնցից կարևորներն են՝

1. Ծծմբային բարիում  $BaS$  . . . 40—45 տոկոս
2. Ազատ ծծումբ . . . . . 20—25 տոկոս
3. Զրում անլուծելի  $BaSO_4$ ,  $BaCO_3$  և ածուխ 30—35:

Արտաքին տեսքով Սուրբարը գորը մոխրադույն փոշի յի :  
 Ծծմբային բարիումը խոնավության ներկայութամբ ծծմբի  
 հետ տալիս է  $BaS_4$  և  $BaS_5$ : Սուրբարի ոգտագործումը մեղ մոտ  
 նոր-նոր է սկսվում և ներկայումս այն գտնվում է իր փորձարկ-  
 ման շրջանում: Մտացված նախնական տվյալները ցույց են տա-  
 լիս, վոր այն կարող է գտնել կիրառություն ալրացող սնկերի  
 (հատկապես սիդիումի) և տիգերի դեմ նյայքարելու համար:  
 Գործածման յայն հնարավորությունն ապահովվում է նրան՝  
 դանդաղան քիմիական արտադրություններից վորպես կողմնակի  
 նյութ հեշտությամբ ձևոք բերելու հանդամանքով: Սուրբարը

պատարժմում և պիտարապես սրկաման ձևով: Վորպես լուծույթ ոգտարժեքիս՝ նրա կոնցենտրացիան կարող և տառանջիկ ( ) 5—1, 5 տոկոսի միջև: Սորբարի լուծույթը պատրաստում են փայտե, ապակյա կամ եմալով պատած ամանների մեջ:

Սորբարի կշարված քանակը լցնում են ամանի մեջ և վրան սովեղացնում քիչ քանակի ջուր (մոտավորապես մեկ մաս սորբարին մեկ մաս ջուր): Ստացվածը խնամքով խառնում են միջուկի միատարր առանց կոշտերի մածոնաման զանգված ստանալը, զրանից հետո բաց են անում ջրով, մեկ մաս սորբարին 1 մաս ջրի հաշվով: Այդ ձևով պատրաստած լուծույթը թողնում են 1—2 ժամ և զրանից հետո անջրան ջուր խառնում, վոր ցանկացած կոնցենտրացիան ստացվի: Այդ ձևով պատրաստված լուծույթը լինում է թափանցիկ և դեղնադույն: Լուծույթի տակն նստում և ջրում անլուծելի սև դույնի նստվածք, վորից աղատվելու համար սիֆոնի սղնությամբ կամ թե զզուչությամբ վերելից վերցնում են լուծույթը և լցնում սրակիչ ապարատների մեջ, իսկ տակահնքը թափում:

Սրակման կրկնողությունները և ժամանակները նույնն են ինչ վոր կալցիումի պոլիսուլֆիդի դեպքում, իսկ վորչոտման դեպքում մոտավորապես նույնը ինչ վոր ծծմբի դեպքում:

Առանձին ուժեղ ալյումածքներ սորբարի սրակումից չեն նկատվում:

Փոշի սորբարն անհրաժեշտ է պահել չոր պահեստներում, խնամքով ծաղկված ամանների մեջ: Վատ պահելու հետևանքով նա խոնավության, աղեկցության տակ քայքայվում և՛ տալով ծծմբաջրածին, և կորցնում է իր թունունակությունը:

Մեքենաների վրա աղբում է նույնպես ինչպես կալցիումի պոլիսուլֆիդը, և զրա համար սրակումից հետո ապարատները պետք է խնամքով լվանալ ջրով:

### Յ Ո Ի Ն Գ Ի Ս Ի Գ Ն Ե Ր .

Փունդիստիդներ անվան տակ խմբավորվում են մի մեծ խումբ թունավոր նյութեր, վորոնք ոգտարժեքում են անկային հիվանդությունները վոչնչացնելու համար: Փունդիստիդների մեջ են մտնում նաև մի շարք պրեպարատներ, վորոնք ոգտարժեքում են բակտերիալ հիվանդությունների դեմ և բակտեր-

ընցիս անունն են կրում, բայց մենք նրանց մասին խոսում ենք Փունգիսիդների հետ միասին, նկատի ունենալով նրանց դոր-  
ծադրման ձևերի ինչպես նաև ազդման մոտավոր նմանությունը:

Փունգիսիդները հիմնականում կարելի չե խմբավորել հետևելի լի կերպով. 1. Ծծմբի միացություններ, 2. Պղնձի միացություններ, 3. Մնգիկի միացություններ, 4. Արսեն պարունակող պրեպարատներ, 5. Զանազան Փունգիսիդներ: Փունգիսիդները կարող են սպտազործվել թե՛ վորպես բուժիչ և թե՛ վորպես նախազոչչական միջոցառումներ՝ բույսերի, սերմացվի, հողի, ջերմոցների և պահեստների մշակման համար:

Փունգիսիդները կարող են սպտազործվել օրսկման, փոշոման, ֆոսֆորացման, ինչպես նաև ախտահանման ձևերով:

### ԾԾՄԲԻ ՊՐԵՊԱՐԱՏՆԵՐ:

Ծծմբի պրեպարատների մասին մենք մանրամասնորեն խոսեցինք ինսեկտիսիդների գլխի վերջում, տալով նաև նրանց Փունգիսիդ հատկությունները:

### ՊՂՆՁԻ ՊՐԵՊԱՐԱՏՆԵՐ:

Փունգիսիդների մեջ պղնձի պրեպարատները բռնում են հատուկ առաջնակարգ տեղ: Պղնձի պրեպարատներից կարևորներն են պղնձարջասպը, բորդոյան հեղուկը, ինչպես նաև պղինձ պարունակող ախտահանիչ նյութերը:

### Պ Ղ Ն Ձ Ա Ր Ջ Ա Ս Պ:

Պղնձարջասպը պղնձի ծծմբաթթվական աղն է, ստանում են  $\text{CuO}$ -ի վրա  $\text{H}_2\text{SO}_4$ -ով աղեկում, վորը կրիստալանում է հինգ մոլեկուլ ջրի հետ և ունի  $\text{CuSO}_4 \cdot 5\text{H}_2\text{O}$  քիմիական ֆորմուլը: Արտաքին տեսքով վառ կապույտ գույնի կրիստալներ է, ջրում լավ լուծելի:

Գյուղատնտեսության մեջ փորձագրվող պղնձարջասպը լի նում է յերկու տեսակի (I և II):

ՈՍՏ-ի համաձայն (564)՝ նրանք պետք է ունենան հետևյալ բաղադրությունը:

Ֆիզիկական և քիմիական հատկու- թյունները	1-ին տեսակ	2-րդ տեսակ
ա) Պղնձի (Cu) պարունակությունը	25%	24,5%
կամ $CuSO_4 \cdot 5H_2O$ վոչ պակաս . . .	98,2%	96,2%
բ) Յերկաթ (Fe) վոչ ավելի . . . . .	0,06%	0,4%
գ) Արսեն (As) վոչ ավելի . . . . .	0,015%	0,02%
դ) Թթվությունը ( $H_2SO_4$ ) վոչ ավելի . . . . .	0,25%	0,5%
յե) Անյութների մնացորդ վոչ ավելի . . . . .	0,1%	0,5%
զ) Հիդրոսկոպիկ ջուրը . . . . .	1,9%	3,8%

Պղնձարջասույր փաթեթավորվում է փայտի տակասների կամ արկղների մեջ, փորձնց վրա զբաղված և յինում դործարանի անունը, տեսակը, կշիշուը և ՈՍՏ-ի համարը (564) :

Պղնձարջասույր մաքուր վիճակում ոչտապործվում և շատ քիչ դեպքերում, նրա 0,5—1 տոկոսանի լուծույթներն ոչտապործվում են սպիտակների ուղ աչնան և վաղ դարնան սրակումների համար: Մակային հիվանդությունների, ձմեռող ստադիանների, քարաքոսների դեմ: Պտղատու ծառերի արմատային քաղցկեղի դեմ, անկիների ախտահանման, ինչպես նաև ծխախոտի ջերմոցներն ախտահանելու համար:

Պղնձարջասույր ջրաղրկած վիճակում ոչտապործում էլյին սերմերի ախտահանման նպատակների համար՝ քարամբիկի դեմ: Ներկայումս պղնձարջասույր ոչտապործումը մաքուր վիճակում սերմերի ախտահանման նպատակների համար բոլորովին թողնված է: Նույն նպատակների համար ավելի հաջող կերպով ոչտապործվում է նրանից պատրաստված «Ա.Ֆ» պրեպարատը:

Մաքուր վիճակում քիչ ոչտապործվող պղնձարջասույր հանդիսանում է վորպես հիմնական յերանյութ՝ մի շարք ստաջնակարգ ֆունդիտիզներ պատրաստելու համար:

**Բարդոյան հեղուկ.**

1880-ական թվականներին Միլյարդեն Բորդոյում հետազոտելով խաղողի վաղի միլիկիու հիվանդությունը (փոր նոր երբերվել Ամերիկայից և սկսել եր իր ավերիչ դործը Փրանսիայում), նկատեց, վոր մեկուկ-ժերոնդե ճանապարհի չուրջը գոնավող խաղողի վաղերը պահպանել էլյին իրենց տերեփները, իսկ ճանապարհից քիչ հեռու գոնավող վաղերն ամբողջովին տերե-

վաթառի եյին յեղել: Հետագոտելով այս յերեվույթի պատճառը նա խմացալ, վոր այդտեղի ալյեւտերերը վորպեսզի խաղողը ճանապարհով անցնող մարդիկ չքաղեն, ճանապարհի մտա դարձ-վող խաղողի վազերը սրտկել եյին կրի և սղնձարջասպի խառ-նուրդով, դրանով նպատակ ունենալով թուճախութիւն վտանգով վախեցնելու ճանապարհորդներին:

Միւրորդեն ավելի մանրամասնորեն ուսումնասիրելով այս յե-րեվույթը 1885 թվին առաջարկեց կրի և սղնձարջասպի լուծույ-թը խաղողի միլիգու հիվանդութեան դեմ պայքարելու համար: Այդպիսով ստեղծվեց բորդոյան հեղուկը, վորը մինչեւ սրս մնում և վորպես առաջնակարգ ֆունգիսիդ, մի շարք սնկային հիվանդութեանների դեմ պայքարելու գործում:

Բորդոյան հեղուկն ստանում են լուծված սղնձարջասպը կրակաթի հետ խառնելուց, վորոնց մեջ տեղի ունեցած սեւե-րիանների հետեւանքով առաջանում և կապույտ կաթնազույն լու-ծույթ, վորը ժամանակի ընթացքում նստում և: Այս դեպքում տեղի ունեցող սեւեղիաները և ստաշացած միացութեաններն աշխարհ են բարդ վոր մինչեւ սրս ճշգրիտ տվյալներ նրանց մա-սին մենք չունենք:

Բոլորից հալանակահը կլինել յենթադրել, վոր  $\text{CuSO}_4$ -ի և  $\text{Ca}(\text{OH})_2$ -ի մեջ կարող և տեղի ունենալ հետեյալ սեւեղիան  $\text{CuSO}_4 + \text{Ca}(\text{OH})_2 = \text{Cu}(\text{OH})_2 + \text{CaSO}_4$ , բայց այս յերեւույթի ա-վելի մանրամասն ուսումնասիրութեանը ցույց և տալիս, վոր  $\text{CaSO}_4$ -ը իսկապես առաջանում և, իսկ  $\text{Cu}(\text{OH})_2$ -ը մաքուր վի-ճակում նստվածքի մեջ չի լինում:

Բորդոյան հեղուկը մանրամասն ուսումնասիրութեան և յենթարկվել վերեր-ի կողմից, վորը գտել և, վոր  $\text{CuSO}_4$ -ի լրիվ չեղարացումը  $\text{Ca}(\text{OH})_2$ -ով կարող և տեղի ունենալ միայն այն դեպքում, յերբ նրանցից վերցվում և 4:3-ի հարաբերութեամբ, վորի ժամանակ սեւեղիան հիմնականում ընթանում և հետեյալ կերպ՝  $4 \text{CuSO}_4 \cdot 5\text{H}_2\text{O} + 3\text{Ca}(\text{OH})_2 = \text{CuSO}_4 \cdot 3\text{Cu}(\text{OH})_2 + 3\text{CaSO}_4 + 20\text{H}_2\text{O}$ : Ստացված կապույտ կանաչագույն նստվածքի քի-միական ճիշտ բաղադրութեանը դեռ պարզված չի:

$\text{CuSO}_4 \cdot 5\text{H}_2\text{O}$ -ի և  $\text{Cu}(\text{OH})_2$ -ի հիշված հարաբերութեան դեպքում ստացվում և թթու միջավայր: Կրի հետագա ավելա-ցումով  $\text{CuSO}_4 \cdot 3\text{Cu}(\text{OH})_2$ -ը (կապույտ-կանաչագույն), վորի մասնիկները դեռ գտնվում են լուծույթի մեջ կախված վիճա-

կում, կապում ե, վորովհետև առաջանում ե նոր միացություն, կապույտ գույնի՝  $\text{CuSO}_4 \cdot 4\text{Cu}(\text{OH})_2 \cdot \text{H}_2\text{O}$  ե լուծույթի սեակ-ցիան դառնում ե չեզոք կամ թեթե հիմքային: Կրի ավելցուկի դեպքում՝ առաջացող նոր միացությունների շնորհիվ միջավայրը կամաց-կամաց դառնում ե հիմքային: Վերջի-վերջո ստացվում ե մուգ կապույտ գույնի աղ, վորի բաղադրությունը կարելի յն արտահայտել վորպես  $\text{CuSO}_4 \cdot 4\text{Cu}(\text{OH})_2 \cdot 3\text{Ca}(\text{OH})_2$ : Կրի քանակի ավելացումը չի կարող այլևիս փոխել վերջնական միացության բաղադրությունը, բայց սեփեղացնում ե լուծույթի հիմքայնությունը:

Բորդոյան հեղուկի պատրաստման ժամանակ ստացված վերջնական միացությունները նույնն են, անկախ նրանից, թե պղնձարջասպի լուծույթն ե լցվում կրակաթի վրա—, թե կրակաթը պղնձարջասպի լուծույթի վրա, բայց միջանկյալ միացությունների ստացման արագությունը տարբեր ե ստացվում:

Այսպես սրինակ, յեթե պղնձարջասպի լուծույթն արագորեն լցվում ե կրակաթի վրա, ապա այս դեպքում շնորհիվ այն հանդամանքի, վոր սեակցիան տեղի յն ունենում հիմքի ավելցուկի ներկայությամբ, անմիջապես առաջանում ե վերջնական պրոդուկտը  $3-4$  միկրոն մեծությամբ, վոր համեմատորեն ավելի դանդաղ են նստում: Ընդհակառակը, յերբ կրակաթն են լցնում պղնձարջասպի լուծույթի վրա, — ապա առաջացող սկզբնական միացությունները, վորոնք ունենում են  $6-9$  միկրոն մեծություն, նստում են ավելի արագ: Վերջին հանդամանքը ցանկալի չե սրսկման աշխատանքների շահերի տեսակետից, վորովհետև բորդոյան հեղուկի մեջ թուժուռակ հանդիսանում են հենց սուս պենզին փճակում դանդաղ մասնիկները:

Մանր մասնիկների արագ ստացումը ցանկալի յն վա՛չ միայն նրա համար, վոր մանր մասնիկները դանդաղ են նստում ե լուծույթն ավելի յերկար ժամանակ ե միատարր մնում, այլ ե այն բանի համար, վոր ստացված մանր մասնիկները սրսկելուց հետո ավելի լավ են կոչում տեթեֆներին:

Ասածներիցս յերևում ե, վոր կրակաթի պակաս լինելու դեպքում, յերբ լուծույթն ունենում ե թթու սեակցիա, առաջանում են միացությունների ավելի խոշոր մասնիկներով ե հետևապես ստացվող լուծույթը լավորակ չի լինում: Այլ պատճառով խորհուրդ ե տրվում բորդոյան հեղուկ պատրաստելիս միջա-

վայրը միշտ պահել հիմքային կամ չեզոք վիճակում: Այս դեպքում կախված վիճակում գտնվող մասնիկները կառայվեն մանր և լավ կկաշեն տերեփներին:

Բորդոյան հեղուկի պատրաստումը և գործադրումը: Բորդոյան հեղուկը միշտ պատրաստում են գործածության վայրում հետևյալ կերպով, առանձին փայտի ամանի մեջ լուծում են պղնձարջասպը, վորի համար այն լցնում են ջրի մեջ կամ կախ են տալիս կտորի մեջ լցրած վիճակում—ջրով լի տակաոտի մեջ և թողնում 10—20 ժամ, վորի ընթացքում նա ամբողջովին լուծվում է:

Չեզոք բորդոյան հեղուկ ստանալու համար, թեորեսաիկ հաշվումներով, 1 կգր. պղնձարջասպին պետք է վերցնել 0,5 կգր.  $\text{CaO}$  կամ 0,75 կգր.  $\text{Ca(OH)}_2$ : Բայց նկատի ունենալով, վոր կիրը պահելու և տեղափոխելու ժամանակ զգալի չափով հանգչում և նրա մի մասը դառնում է  $\text{CaCO}_3$  և, բացի այդ, կիրը միշտ իր մեջ պարունակում է վորոչ տոկոսի կողմնակի խառնուրդներ, կիրը վերցնում են պղնձարջասպի քանակի հավասար չափով, իսկ կրի շատ վառ լինելու դեպքում՝ նույնիսկ պղնձարջասպի կրկնակի չափով: Կիրը հանդցնելուց հետո՝ այն բաց են անում վերցվելիք ջրի քանակի կեսի չափով: Ջրի մնացած կեսով բաց են անում պղնձարջասպի լուծույթը: Այլ բոլորից հետո կրակաթը խնամքով և անընդհատ խառնելով՝ դանդաղորեն նրա մեջ են լցնում պղնձարջասպի լուծույթը:

Մեզ մոտ ընդունված և կրակաթը լցնել պղնձարջասպի լուծույթի վրա. այս ձևից հարմար է աշխատանքի կաղմակերպման տեսակետից, բայց ցանկալի չէ քառացվող բորդոյան հեղուկի վորակի տեսակետից:

Չի թույլատրվում յերկու լուծույթներն իրար հետ խառնելուց հետո նոր բաց անել ջրով, վորովհետեով այս դեպքում տեղի յեն ունենում մի շարք ֆիզիկական և քիմիական փոփոխություններ, վորոնք բացասաբար են անդրադառնում բորդոյան հեղուկի վորակի վրա:

Հաջող պատրաստած բորդոյան հեղուկը լինում է վոչ-թափանցիկ, վառ կապտագույն, ջեզոք կամ թույլ հիմքային. վերջինը վորոչվում է լակմուսի թղթի սղնությամբ: Լուծույթը թթու

լինելու դեպքում ունենում ե կանաչ-կապույտ դույն: Կլիբ ալկել-  
ջուկի դեպքում լինում ե հիմքային ե ունենում ե բաց-կապույտ  
դույն:

Այս ձևով պատրաստված բորոլոյան հեղուկն սպառարծ-  
վում ե հնարավորին չափ շուտ (նույն սրը), վորովհետև 1—2  
սր պահելիս սուսպենզիան վիճակում դառնում մասնիկները միա-  
նում են իրար — աղբեղացիայի յեն յենթարկվում ե վաթիլանման  
նստում առկը, վորը հետագայում կամ դրանուլացման ե յեն-  
թարկվում (յեթե լուծույթը չեղք ե) կամ բյուրեղանում ե  
սֆերիկ կրիստալներով (հիմքայինի դեպքում): Յերկու դեպքում  
ել ստացված նստվածքը վատ ե կաշում տերևներին ե սրկումը  
ցանկացած եֆֆեկտը չի տալիս:

Թարմ բորոլոյան հեղուկի կոչչոլունակութունը բավականին  
լավ ե ե կարելք չի լինում նրա հետ վորևե այլ կողմնակի նյու-  
թեր խառնելու նրան կոչչոլունակութուն տալու նպատակով:  
Բորոլոյան հեղուկի կայունացմանը վորոշ չափով նպաստում ե  
0,1 տոկոսի չափով շաքարատականքի ավելացնելը:

Բորոլոյան հեղուկը ներկայումս հանդիսանում Ա անվտխարի-  
նելի պրեպարատ մի շարք հիմնական հիվանդութունների դեմ  
պայքարելու համար, ինչպիսիներն Ան, սրինակ, խաղողի միլ-  
դիուն, կարտոֆիլի ֆիտոֆտորան, պարչան ե այլն):

Բորոլոյան հեղուկի սովորական դործածելի կոնցենտրացիա-  
ներն են 0,75—1% ( $\text{CuSO}_4 \cdot 5\text{H}_2\text{O}$ -ի քանակով հաշված): Բոր-  
լոյան հեղուկը սպառարծվում ե նաև համատեղ ուրիշ ինսկետո  
ֆունգիսիդների հետ, ինչպես սրինակ վարիդյան կանաչի, կալ-  
ցիումի արսենատի— նիկոտինի, անարպոլինի, կալցիումի սուլ-  
սուլֆիդի:

Ազդեցութունը սնկերի վրա: Բորոլոյան հեղուկի ազդման  
մեխանիզմը բացատրող մի քանի հիպոթեզներ գոյութուն ունեն:  
Դրանցից ամենից հավանականի համաձայն՝ բորոլոյան հեղուկի  
թունուենակութունը պայմանավորվում ե նրա մեջ դառնող պղնձի  
աղերի անմիջական ազդեցությամբ— սնկերի վրա: Նրանք լինե-  
լով լուծված վիճակում՝ թափանցում են սպորների կամ նրանց  
ծիւերի բջիջների մեջ ե տեղի տալով սլաղմայի կոագուլյացիա-  
լին (մակարդմանը)՝ առաջացնում են սրպանիզմի առանձին մա-  
սերի կամ ամբողջ սրպանիզմի թունավորում ե մահ: Պղնձի ա-  
ղերի թունուենակութունը չատ բարձր ե, այսպիս սրինակ, վորոշ

անկերի կոնիդիաները մեռնում են 0,001—0,00007 տոկոսանի  $\text{CuSO}_4 \cdot 5\text{H}_2\text{O}$  ջրային լուծույթից:

Սրսկուձից հետո սերեվների վրա պղնձի լուծելի աղեր կարող են առաջանալ՝ ցուլի կամ անձրեվաջրի մեջ՝ յեղած անխաթրթվի և ամիալի ազդեցությունից, սպորների առաջացրած արտաթորությունների ազդեցությունից և յերրորդ տերեվների առաջացրած արտաթորություններից: Առանձին տեսակի սնկերի դիմացկանության սրտոճառը (որինակ այլացող սնկերինը) բորդոյան հեղուկի նկատմամբ՝ մինչևի՛ հիմա դեռ պարզված չէ:

Ազդեցությունը բույսերի վրա: Այնքան, վորքան բորդոյան հեղուկը սրսկվում է բույսերի վրա պրոֆիլակտիկ նպատակներով և նա տերեւների վրա մնում է բավական յերկար ժամանակ, հետաքրքրական է իմանալ նրա ազդեցությունը բույսերի վրա յերկու տեսակետով. առաջին՝ այրվածքներ առաջացնելու իմաստով և յերկրորդ՝ տերեւների ֆիզիոլոգիական ակտիվության վրա նրա ունեցած ազդեցության տեսակետով:

Բորդոյան հեղուկի ունեցած ազդեցությունը տերեւների ֆիզիոլոգիական ակտիվության վրա՝ կարելի յե դիտել վորպես տերեվի կողմից հանդես բերվող պիտակցիա իր վրա դառնված թույնի շերտի հանդեպ:

Ինչպես ցույց են տվել կատարված հետազոտությունները, բորդոյան հեղուկով սրսկված տերեւներն ունենում են ավելի շատ քլորոֆիլ, քստ վորում խրքրպլաստները լինում են մանր, բայց շատ: Պարենխիման լինում է հաստ և հյուսվածքները ակտիվ: Հյուսվածքների ակտիվացման հետևանքով՝ նկատված է, վոր տերեւները ցերեկները պարունակում են ավելի շատ կրախմալ, քան չսրսկված տերեւները: Այնուհետևի՛ նկատված է բորդոյան հեղուկով սրսկված տերեւների տրանսպիրացիայի ավելացում:

Ռումմը բորդոյան հեղուկով սրսկված տերեւների բարձր ակտիվությունը բացատրում է պղնձի աղերի հանդես բերած քիմիական գրգռումով: Յակերը— պղնձի աղերի հանդես բերած դրզիտը բացատրում է երկկտրական յերևույթներով: Աղերհոլը— բորդոյան հեղուկի մեջ յեղած յերկաթի ազդեցությամբ, իսկ Ավինգրին դառնում է, վոր պղնձի մանր մասնիկները, մտնելով բույսի հյուսվածքների մեջ, տեղիք են տալիս սննդատության ուսեթիմի և դազափոխանակման փոփոխությունների:

Այս բազմաթիվ տեսակետներէց մի ընդհանուր յեղբակացու-  
թյուն հանելը բավականին դժուար է, կարելի չէ ասել միայն  
այն, վոր բորդոյան հեղուկով սրսկելու հետեանքները բույսի  
Ֆիզիոլոգիական փոփոխություններ առաջանալու տեսակետից  
կարելի չէ յերկու մասի բաժանել.

ա) Ֆիզիկական ծածկում և հերձանցքներէ փակում, վորին  
կարելի չէ հասնել նաև բույսերը վորեւէ այլ նյութով փոշտակուց  
կամ սրսկելուց.

բ) տերեւի մակերեսի վրա նստած պղնձի միացությունների  
ազդեցությունը տերեւների Ֆիզիոլոգիական ակտիվության վրա:  
Հերձանցքների մեխանիկական փակումը կարող է տեղիք տալ  
ասիմիլացիայի ժամանակավոր դանդաղեցման և վորոշ դեպքե-  
րում կարող է դանդաղեցնել նաև զազափոխանակումը:

Տերեւների վրա առաջացած թույնի շերտի շնորհիվ՝ այն-  
լանում է տերեւների կողմից դուրսշիացվող ջրի քանակը, վո-  
րովհետև սրսկված տերեւներն ավելի դանդաղ են պաղում:  
Պղնձի կլանումը տերեւների կողմից (հատկապես վնասված տեղե-  
րից) կասկածի յենթակա չէ, վերջինը իրա հերթին, ազդում է  
ասիմիլացիայի, զազափոխանակման, ինչպես նաև խլորոֆիլի  
և կրախմալի առաջացման պրոցեսներին վրա: Վորպես հետեանք  
այս բոլորի՝ նկատվում է բույսի աճման դանդաղեցում և տե-  
րեւներէ կանաչ դույնի ավելի յերկար պահպանում:

**ԱՅՐՎԱԾՔՆԵՐ:** Բորդոյան հեղուկի սրսկման հետեանքով  
բույսերի վրա առաջացած այրծավքները հազվադույտ չեն:  
Վորպես որենք նկատված է, վոր թթու կամ ուժեղ հիմքային  
բորդոյան հեղուկը՝ միշտ ուժեղ չափով այրվածքներ և առաջաց-  
նում, իսկ չեղոք բորդոյան հեղուկը կա՛մ բոլորովին այրվածք-  
ներ չի առաջացնում, կա՛մ յեթև առաջացնում էլ է, ապա հա-  
մեմատած առաջին յերկուսի հետ, զբալիորեն պակաս չափով:  
Այդ իսկ պատճառով միշտ խորհուրդ է տրվում բորդոյան հե-  
ղուկը պատրաստել կա՛մ չեղոք, կա՛մ թեթև հիմքային: Ավելի  
ուժեղ այրվածքներ պատահում են խոնավ յեղանակներին, վոր  
բացատրվում է նրանով, վոր այս դեպքում տերեւների վրա ա-  
վելանում է պղնձի լուծելի աղերի քանակը և բացի այդ յեր-  
կարատեով խոնավ յեղանակներին տերեւների կուտիկուլան դառ-  
նում է ավելի բարակ, վորը հեշտացնում է Ֆունգիտիդի թա-  
փանցումը հյուսվածքների մեջ: Մեղ մտտ Հայաստանում նկատ-

վում են խաղողի վազի դալար տերևների այրվածքներ առաջին բուժման ժամանակ, փորոնք առանձին մեծ լինաւ չեն պատճառում:

Սովորաբար բորղոյան հեղուկի առաջացրած այրվածքները պտուղների վրա (որինակ խնձորի) լինում են չաղանակաղույն, խցանային հյուսվածքների ցանցի ձևով: Ուժեղ այրվածքները դեպքում, բացի ցանցից, պտուղների վրա առաջանում են գորշ լաքաներ, փորի հետեանքով կարող է առաջանալ պտղի կեղևի ճաքճքում: Զահել պտուղների այրվածքները նրանց հետագա աճման հետեանքով առաջացնում են պտղի ծուլթյուն և այլն:

Տերևների վրա այրվածքներն ունենում են տարբեր մեծության գորշ-չաղանակաղույն կլոր լաքաների տեսք, տեբեւ այրված և առողջ մասի սահմանում առաջանում է խցանային շերտ, փորի հետեանքով այրված կտորը պոկվում ընկնում է և տերևը ծակոտկեն է դառնում:

Տարբեր բույսեր բորղոյան հեղուկի հանդեպ տարբեր դեմացկունություն են հանդես բերում. այս յերևույթը բացատրվում է տարբեր տեսակի բույսերի տերևների կամ պտղի կուտիկուլային շերտերի կառուցվածքային առանձնահատկություններով: Նկատված է, վոր բորղոյան հեղուկի հանդեպ դեղձը և ծիրանը ավելի դժայուն են, քան սալորը, խնձորը և տանձը:

Բորղոյան հեղուկը ճիշտ պատրաստելու դեպքում այրվածքներ չեն նկատվում, կամ յեթե լինում են, ապա անտեսապես շոշափելի չեն նրանք:

### ԱՄԽԱԹԹՎԱՅԻՆ ՊՂԻՆՁ ՅԵՎ ՊՐԵՊԱՐԱՏ ԱՐ.

Ածխաթթվային պղինձն ստանում են պղնձարջասպի վրա սողա ազդելուց, փորի հետեանքով առաջանում է  $\text{CuCO}_3$ ,  $\text{Cu}(\text{OH})_2$ ,  $\text{CuCO}_3$  և  $\text{Cu}(\text{OH})_2$ -ի հարաբերությունը կարող է տարբեր լինել՝ կախված պատրաստման տեխնիկայից: Արտաքին տեսքով ածխաթթվային պղինձը ամորֆ փոշի յե, վատ է լուծվում ջրում, ունի լավ կաշտողունակություն, սորուն է և սովորական պայմաններում պահվելուց չի կնձիկանում:

Ածխաթթվային պղինձը մեծ հաջողությամբ ողտագործվում է չոր ախտահանման համար ցորենի և հաճարի քարամբիկի դեմ: Մախտման նորման մեկ տոննի համար վերցվում է 1,5—

3.0 կգր․, կախված սերմերի վարակվածության աստիճանից։ Ներկայումս անխթիթվային պղնձի ոլտապործումը մաքուր վիճա կում թողնված է։

Ա. Ի. Բորխարդի կողմից ստաջարիված պրեպարատը, վորին ԱՖ անուներ արվեց (Աքեքսանդր Բորխարդ), ներկայացնում է անխաթիթվային պղնձի քիչ փոփոխված ձևը։

ԱՖ ստանում են նույն անխաթիթվային պղնձից խառնելով նրան կավճի հետ։ Ներկայումս զործարանային յեղանակով ԱՖ ստանում են ուղղակի պղնձաբջասպը կավճի հետ խառնելուց։ Պղնձաբջասպը— վորը ստանում են զործարանների թափթփուկ պղնձից խառնվում է մանր կավճի հետ, թացացվում է և տաքացվում 50—60° կամ պահվում յերկար ժամանակ 20—25°-ում։ Այս զեպքում անկի ունեցող սեակցիաները կարելի յե արտահայտել այսպես՝

$2\text{CuSO}_4 + 2\text{CaCO}_3 + \text{H}_2\text{O} = \text{CuCO}_3 \cdot \text{Cu}(\text{OH})_2 + \text{CaSO}_4 + \text{CO}_2$ ։ Այդպիսով, ԱՖ զործարանային յեղանակով ստանալիս՝ սողա չի ոլտապործվում։ Ստացված ԱՖ չորացնում են, մանրացնում և արդեն պատրաստ է ոլտապործման համար։ Գործարանային յեղանակով պատրաստած ԱՖ պետք է համապատասխանի հետևյալ տեխնիկական պահանջներին։

- ա) խոնավությունը 3 տոկոսից ավելի չպետք է լինի,
- բ) պրեպարատի 95 տոկոսը պետք է անցնի 175 մեշ մաղի միջով,
- գ) Լիմոնաթիթի մեջ լուծելի պղնձի տոկոսը՝  $\text{CuO}$ -ով հաշված պետք է լինի 15—16 տոկոս․
- դ) մաքուր վոչ ակտիվ  $\text{CuO}$  պրեպարատի մեջ չպետք է լինի։

ԱՖ-ով սերմերը ախտահանելիս մեկ տոնն սերմացվին վերցնում են 2—3 կգր․։

Սելեկցիոն կայանները, սերմարուծական կոլտնտեսությունները և կոլտնտեսությունների սերմադաշտերում ցանվելիք սերմացուն ախտահանում են ԱՖ-ով, վերցնելով մեկ տոնն յարովիկացիայի չենթարկված սերմացվին 3 կգր․ և յարովիկացիայի յենթարկված սերմացվի 1 տոննին 2 կգր․, մնացած զեպքերում ԱՖ ծախսման նորման կազմում է մեկ տոննային 2 կգր․։ Ածխաթիթվային պղնձը, ինչպես նաև ԱՖ կարող են ոլտապործվել միայն մերկ սերմերի ախտահանման համար։ Թեխնիկավոր սեր

մերի (ինչպիսի որինակ, զարու և վարսակի) ախտահանումը ԱՒ-ով կամ անխաթթվալին պղնձով լավ կՖֆեկտ չի տալիս: ԱՒ-ով ախտահանված սերմացուն ալյուր կամ անասնակեր դարձնել չի կարելի, վարովհետև կարող և թունավորման տեղիք տալ:

ԱՒ-ով աշխատելիս՝ անհրաժեշտ և բերանակալներ ոգտա-  
դործել:

## Կ Ո Ւ Պ Ֆ Ե Ր Մ Ե Ր Ի Տ Ո Ւ .

Կուպֆերմերիտոլը հանդիսանում և պղնձի և կալցիումի ար-  
սենատի բարդ կոմպլեքսը նույն մետաղների հիդրատների և սուլ-  
ֆատների հետ: Հիմնական միացությունը կուպֆերմերիտոլի մեջ  
 $Cu_2Ca(AsO_4)_2$ -ն է:

Կուպֆերմերիտոլի ստացման դործարանային յեղանակը հե-  
տևյալն է, պղնձարժասպի լուծույթին (80—90°-ում) ավելաց-  
նում են  $Ca(OH)_2$ , վորից հետո խառնում են 45—60 բույե և ա-  
վելացնում կալցիումի արսենատը: Դրանից հետո նորից են խառ-  
նում և պահում 90°-ի տակ մինչև չեղոք՝ ուսեցիա ստանալը:  
Ստացված նստվածքը չորացվում և, մանրացվում և պտրաստ  
և դործադրման համար:

Կուպֆերմերիտոլը պլիտակ-կապտապուշյն կամ կապույտ-  
մոխրագույն փոշի յե: Անցնում է 175 մեջ մաղի միջով: Պա-  
րունակում է 20 տոկոս  $As_2O_5$  20 տոկոս  $CuO$ : Ջրում լուծելի  
 $As_2O_5$  թույլատրվում է 3 տոկոսից վոչ ավելի:

Կուպֆերմերիտոլը լինակտոֆունդիսիզ և և ոգտադործվում  
է այն դեպքերում, յերբ անհրաժեշտ և լինում միաժամանակ  
պայքարել և՛ սնկային հիվանդությունների (որինակ միլիուսի)  
և՛ կրծող մեջամների (որինակ խաղողի վողկուզակերի) դեմ  
միաժամանակ: Մեկ հեկտար խաղողի այգիի փոշոտելու համար  
դործադրում են 30 կգր., իսկ պտղատու այգիների համար  
60 կգր.:

## ՍՆԴԻԿ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՖՈՒՆԳԻՍԻԴՆԵՐ:

Սնդիկ պարունակող ֆունգիսիզները բոլորը ախտահանիչ-  
ներ են: Նրանք բոլորը, սուլեմայից բացի՝ սնդիկորդանական  
միացություններ են:

Մնչիկ պարունակող ախտահանիչների բացասական կողմերից կարևոր և չիչել, վոր նրանք ուժեղ թույներ են մարդկանց նկատմամբ և կարող են ողտադործվել միայն թաց ատահանման համար:

### Ս Ո Ւ Լ Ե Մ Ա .

Սուլեման—  $HgCl_2$ — սպիտակ կրիստալական կտորներով նյութ և, բավական լավ լուծվում է ջրում (մինչև 25 տոկոս տաք և 6 տոկոս սառը ջրում): Սուլեմայի լուծույթները ազդում են մետաղների վրա: Սուլեման, բացի վորպես Փունդիսիդաբոսպործվելուց, ողտադործվում և նաև վորպես կոնտակա ինսեկտիսիդ՝ կաղամբի ճանճի ձվիկները վոչնչացելու համար, վորի ղեպչում սուլեմայի 0,1 տոկոսանի լուծույթով թրջում են սածիկների չորս կողմի հողը:


Ծնորհիվ սուլեմայի թանգության և ուժեղ թունունակության մարդկանց նկատմամբ՝ նրան յերբեք չեն ողտադործել հացահատիկների ախտահանման համար:

Սուլեման ողտադործում են բանջարաբուծության մեջ, կաղամբի, վոյորի, վարունգի, տոմատի և ճակնդեղի սերմերի ախտահանման համար: Տոմատի սերմերը ախտահանելիս ողտադործում են 1:3000—1:4000 ջրի հետ բաց արած: Ախտահանելուց հետո մաքուր ջրով լվանում են չորացնում և նոր ցանում:

### Գ Ե Ր Մ Ի Զ Ա Ն .

Գերմիզանը վաղուցվանից հայտնի յե արտասահմանում վորպես ախտահանիչ: 1932—33 թ. թ. ինսեկտոֆունգիսիդների ղխտահետազոտական ինստիտուտին հաջողվեց սինտետիկ կերպով ստանալ խորհրդային գերմիզանը:

Գերմիզանը կարմիր-մանիչակազույն փոշի յե, հեշտությամբ լուծվում է ջրում, ունի հետևյալ ֆորմուլան:



խորհրդային գերմիզանը պարունակում և 16 տոկոս անդիկ: Թաց ախտահանման համար ողտադործում են նրա 0,1—0,25

տոկոսանի լուծույթները, վորի մեջ սերմերը պահում են 30—45 րոպե: Ախտահանումից հետո սերմերը չորացնում են և այդ վիճակում կարող են ուղտադորձվել ցանկուռ համար: Այդ ձևով ախտահանելիս՝ ղերմիզանի ծախսման նորման կազմում է 200—300 գր․ մեկ տոն սերմացուին: Կիտաչոր ախտահանման ղեպքում կոնցենտրացիան հասցնում են մինչև 2,5 տոկոսի: Սերմացուն հեղուկով թրջելուց և լավ խառնելուց հետո ծածկում են կտորով և թողնում են այդ վիճակում 5—8 ժամ, վորից հետո չորացնում են: Գերմիզանով ախտահանված (թե՛ թաց և թե՛ կիտաչոր յեղանակով) սերմացուն կարող է յերկար ժամանակ (մի քանի ամիս) պահվել մինչև ցանելը, առանց ծրուռակությունը կորցնելու:


Կիտաչոր ախտահանման ղեպքում մեկ տոնն թեփուկավոր սերմացուին ծախսվում է 800 գր․ ղերմիզան, իսկ ցորենի և հասձարի համար 400 գր․, հաշվելով, վոր ատաջին ղեպքում կծախսվի 30 լիտր թունավոր լուծույթ մեկ տոնին, իսկ յերկրորդ ղեպքում՝ 15 լիտր: Գերմիզանը լավ արդյունք է տալիս նույնպես բանջարանոցային կուլտուրաների սերմերը ախտահանելու: Գերմիզանով ախտահանված սերմացուն ալյուր անելը կամ նրանով անասուններին կերակրելն արգելվում է:

### ՄԵՐԱՆԻՆ

Մերանինն ստաջին անպամ ստացվել է (սինթեզի յե յենթարկվել) Մոսկվայի Ինսեկտոֆունդիսիզների գիտահետազոտական ինստիտուտի կողմից 1932 թվին:

Մերանինը (Меркурированный анилин) ստացվում է անիլինը քացախաթթվի մեջ անղիկոքսիղով մշակելուց: Այդ ղեպքում ստացված նստվածքը (ացիլմերկուր անիլին) ֆիլտրվում է և լուծվում 25 տոկոսանի ամիակի մեջ:

Մերանինը ստացվում է յերկու իզոմերներով՝



Յերկու իզոմերներն էլ ջրում պրակտիկ անլուծելի յեն, բայց լավ լուծվում են ամիակի լուծույթում, տալով կայուն

լուծույթներ, վորոնց կոնցենտրացիան կարելի չե հասցնել մինչեւ 50 տոկոսի (մերանինի կշռով հաշված) :

Դժվարույթյուններից խուսափելու համար մերանինը պատրաստվում է զործարանում ամիակի մեջ 40—50 տոկոսանի և այդ վիճակում ուղարկվում տեղերը՝ ողտազործելու համար : Գործադրելու ժամանակ այն բաց են անում այնքան ջրով, վորպէսզի ստացվի 0,01—0,025 տոկոսանի 40 տոկոսանոց մերանինի լուծույթ :

Մերանինով հացահատիկները թաց յեղանակով ախտահանելիս սպառազործում են մերանինի 0,01—0,025, իսկ կիսաչորի դեպքում 0,05 տոկոսանի լուծույթները : Այդ կոնցենտրացիաներով ախտահանելիս՝ ստացվում է մըրիկի հարյուր տոկոսանի վոչնչացում : Մերանինի նույնիսկ 4 տոկոսանի լուծույթը սերմերի ծլունակության վրա չի ազդում :

Լավ արդյունքներ են ստացվել մերանինով կարտոֆիլի պլարների ախտահանումից, վորի դեպքում ողտազործվում է մերանինի 0,05—0,1 տոկոսանի լուծույթը : Նույնիսկ ծլած կարտոֆիլը մերանինով ախտահանելիս՝ ծլունակության կորուստ տեղի չի ունենում :

Կարտոֆիլի պլարները մերանինով ախտահանելիս վոչնչացնում են կարտոֆիլի քոսերի, ֆիտոֆտորայի և այլ սնկային հիվանդությունների վարակման սաղմերը :

## ԱՐՍԵՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՖՈՒՆԳԻՍԻԳՆԵՐ

Արսեն պարունակող ֆունգիտիզները բոլորն ախտահանիչներ են և ողտազործվում են միմիայն չոր ախտահանման համար : Արսեն պարունակող ախտահանիչներից կարելվորներն են ՊԴ պրեպարատը, տակ-արսինը և նիվարսինը :

### ԴԱՎԻԳՈՎԻ ՊՐԵՊԱՐԱՏԸ— ՊԴ

Դավիգովի կողմից առաջարկված պրեպարատն իրենից ներկայացնում էր յերկաթի արսենիտը խառնած ինքրա խառնուրդի՝ կավճի հետ : Դավիգովի փոշին ողտազործվում էր ցորենի և հաճարի չոր ախտահանման համար : Չնայած այն հանդամանքին, վոր սկսած 1933 թվից ՊԴ այլևս չի ողտազործվում, բայց այդ անունը պահպանվել է մեկ ուրիշ պրեպարատի համար—

Պրոտարսի, վորն ստեղծվել է Ինտեկտաֆունդիտիզների դիտահե-  
տագրողական ինստիտուտի կողմից վորպես ՊԴ-ին վորտարինող:

ՈՍՏ-ի համաձայն (7833/758) պրոտարսը պետք է պարու-  
նակի՝

1.  $As_2O_3$  վորն պակաս 10 և վորն ավելի 11 տոկոսից,

2. Սոնավուլթյունը վորն ավելի 1 տոկոսից,

3. Ջրում լուծելի նյութերը վորն ավելի 3,5 տոկոսից,

4. Պրեպարատի 95 տոկոսը պետք է անցնի 175 մեկ մաղի  
միջով, իսկ մնացած 5 տոկոսը 100 մեկ մաղի միջով:

Պրոտարսը հանդիսանում է հիմնական չոր ախտահանիչներից  
մեկը և ուտադործվում է ցորենի, հաճարի և վուշի սերմերի  
ախտահանման համար:

Հացահատիկների ախտահանման համար ուտադործվում է  
0,75— 1 կգր. մեկ տոնն սերմացվին:

Պրոտարսով չի կարելի ախտահանել յարսվիզացիայի յե-  
թարկվող սերմացուն:

Պրոտարսով սերմացուն պետք է ախտահանել վորն չուտ քան  
մեկ ամիս ցանքից առաջ, վորովհետև պրոտարսով ախտահան-  
ված սերմացուն յերկար պահելուց կարող է կորցնել ծլուճակու-  
թյունը:

Վուշի սերմերն ախտահանելիս՝ վերցնում են մեկ տոննին  
1,5 կգր: Նկատված է, վոր պրոտարսով վուշի սերմերն ախտա-  
հանելիս բերքը բարձրանում է՝ սերմերինը 14 և՛ ցողուններինը՝  
10 տոկոսով:

### ՏԱԼԿԱՐՍԻՆ ՅԵՎ ՆԻՎԱՐՍԻՆ.

Տալկարսին և նիվարսին պրեպարատները բաղկացած են 96  
տոկոս տալկից կամ կաոլինից և 4 տոկոս արսենոբիդանական  
միացություններից: Արտաքին տեսքով նրանք մոխրագույն լավ  
կպչող վուշիներ են: Ծնորճիվ այն հանդամանքի, վոր շատ քիչ  
արսեն են պարունակում՝ 2—3 տոկոս, և ընդամեն 0,75 կգր.  
մեկ տոննային ծախման նորմա ունեն, նրանց զործածությունը  
հնարավորություն և տալիս 3—4 անգամ խնայելու արսենի  
ծախսը: Տալկ-արսենը ուտադործվում է ցորենի, կորեկի, վուշի  
(ֆուզարիումի դեմ) սերմերի ախտահանման համար: Նա կարող  
է ուտադործվել նույնպես բանջարոնացային սերմերի ախտա-  
հանման համար:

Մերմերի վրա բացասական արբեցությունն չի ունենում :

Բոլոր արսեն պարունակող ախտահանիչներն արսենի մյուս պրեպարատների նման թունավոր են մարդկանց համար և այդ պատճառով նրանց հետ աշխատելիս պետք է ձեռք սունել բոլոր այն նախազրուչական միջոցառումները, ինչ վոր արսենի մյուս պրեպարատների դեպքում :

ՄԻ ՔԱՆԻ ԱՅԼ ԳՈՒՆԳԻՍԻԳՆԵՐ

### Ֆորմալին

Ֆորմալին է կոչվում ֆորմալդեհիդի (HCHO) 40 տոկոսանի ջրային լուծույթը, վորը իր մեջ պարունակում է տարբեր քանակությամբ մետիլ կամ ետիլ սպիրտ և կամ յերկուսը միասին, վորոնք ավելացվում են՝ ֆորմալդեհիդի պոլիմերիզացիային խանդարելու նպատակով :

ՈՍՏ-ի համաձայն (307) ֆորմալինը պետք է համապատասխանի հետևյալ անխնիկական պահանջներին :

1. Ֆորմալինը անուռնյն թափանցիկ հեղուկ է : Յուրտ տեղում պահելիս ֆորմալինը կարող է պղտորվել և նստվածք տալ, վորը տաքացնելիս պետք է լուծվի :

2. Ֆորմալինը ջրի և սպիրտի հետ պետք է խառնվի բոլոր հարաբերություններով :

3. Տեսակարար կշիռը 20°—C-ում 1,081—1,086

4. Ֆորմալդեհիդի պարունակությունը 40 գր. 100 սմ<sup>3</sup>. ֆորմալինի մեջ

5. Թթվությունը, մրջնաթթվով հաշված 100 սմ<sup>3</sup>.-ում վուչ ավելի 0,2 դրամից :

Ֆորմալինը վաթեթավորվում է 25 լիտրանոց ապակե բալոններում : ՈՍՏ-ով նախատեսված ֆորմալինի նստվածքի առաջացումը հետեվանք է ֆորմալդեհիդի պոլիմերիզացիայի : Ֆորմալինը յերկար ժամանակ պահելուց հատկապես յեթե այն պահվում է ցուրտ տեղ և իր մեջ պարունակում է դանդան կեղտոտություններ, կարող է բավական դրսյի նստվածք առաջացնել և հաճախ ամբողջ հեղուկը մածուցիկ դանդված է դառնում :

Ընդհանրապես ֆորմալինի նստվածքն աննշան է լինում և հեշտությամբ անցնում է տաք և նույնիսկ սառը ջրով բաց անելիս :

Քանի, վոր Փորձալղեհիղի տոկոսը Փորձալինի մեջ պակասում և նստվածքի առաջանալուց, հետեւագեա պակասում և նաև Փորձալինի թունունակութունը, բացի այդ, նստվածքով Փորձալինը կարող և առաջացնել սերմերի ծրունակութան անկում, վորովհետև Փորձալղեհիղի պոլիմերները սերմերի համար ավելի թունունակ են, քան ինքը Փորձալղեհիղը:

Փորձալինի ուժեղ պոլիմերիզացիայի դեպքում, յերբ նստվածքը չի լուծվում առաջացնելիս կամ առաջ ջրով բաց անելիս, նրան դեպոլիմերիզացիայի յեն յենթարկում հետեւյալ կերպ. վերցնում են Փորձալինի չափ առաջ ջուր, յուրաքանչյուր մեկ լիտրին 8 գր լվացքի կամ 4 գր. կաուստիկ սոդա և լուծում այն ջրի մեջ (խմելու սոդան այս նպատակի համար արգելվում և ոգտադործել): Ստացված լուծույթը լցնում են Փորձալինի վրա, խառնում և թողնում առաջ շնչում այնքան ժամանակ, մինչեւ նստվածքն ստրողջովին լուծվի: Այս ձեւով պատրաստած Փորձալինն ոգտադործելիս նրան ջրի հետ խառնում են այն հաշվով, վորպեսզի ստացվի Փորձալղեհիղի պահանջվող կոնցենտրացիան (0,13 տոկոս):

Գործածությունը: Վորպես Փունդիսիզ ոգտադործվում և սերմերի ախտահանման համար, ինչպես թաց, նույնպես և կիսաչոր յեղանակով: Առաջին հերթին Փորձալինը ոգտադործվում և թեփուկալոր սերմերի ախտահանման համար, վորոնք չի կարելի չոր ախտահանման յենթարկել (գարի, վարսակ): Ներկայումս մշակվում և Փորձալինի չոր պրեպարատներ ստանալու խնդիրը:

Թաց ախտահանման դեպքում ոգտադործում են Փորձալինի 0,13 տոկոսանի (Փորձալղեհիղով հաշված) լուծույթը, այսինքն՝ 1 մաս 40 տոկոսանի Փորձալինը խառնում են 300 մաս ջրի հետ: Յեթև Փորձալինը ստանդարտինն չի համապատասխանում, այսինքն՝ պարունակում և 40 տոկոսից ավելի կամ պակաս Փորձալղեհիղ, այդ դեպքում համապատասխանորեն ավելացնում են կամ պակասեցնում վերցվելիք ջրի քանակը. այսպես որինակ, յեթև Փորձալինը 30 տոկոսանոց և, ապա նրա 1 մասը բաց են անում 225 մաս ջրի հետ:

Փորձալինն ոգտադործվում և նույնպես և բանջարանոցային կուլտուրաների սերմերի ախտահանման համար, վորի դեպքում

ողտազործում են նրա 0,10—0,15 տոկոսանի լուծույթը 3—7 րոպե թրջման ակտիվությամբ:

Ֆորմալինով վիսաչոր արտաճանում կտարելիս՝ ողտազործում են նրա 0,5 տոկոսանի լուծույթը:

Բացի սերմերի արտաճանումն համար ողտազործելուց, Ֆորմալինն ողտազործում են նաև բանջարեղենի պահեստների, ջերմոցների, հողի ղեղինֆեկցիայի համար: Այս ղեպքում ողտազործում են Ֆորմալինի 0,5—1 տոկոսանի լուծույթը— պատերը, ջերմոցների շրջանակները սրսկելու համար, իսկ հողի ղեղինֆեկցիայի ղեպքում ողտազործում են նրա 0, 5 տոկոսանի լուծույթը, վերցնելով ամեն 1 մ<sup>2</sup>-ին 0,3—0,4 լիտր լուծույթ: Հողն այդ ձևով թրջելուց հետո խստում են և ծածկելով թողնում այդ վիճակում 3—4 սր:

Վերջին ժամանակներս Ֆորմալինը սկսել են ողտազործել նաև բամբակի սերմերի արտաճանումն համար դոմող հիվանդության դեմ: Այս ղեպքում ողտազործում են նրա 0,4 տոկոսանի լուծույթը:

Ֆորմալինի ազդեցութունը սերմերի՝ ծլունակության վրա:

Ֆորմալինի ունեցած ազդեցությունը սերմերի ծլունակության վրա այնքան ել լավ ուսումնասիրված չէ: Նկատված է, վոր արտաճանումն ղեպքում վորքան բարձր և ջերմաստիճանը, այնքան ավելի արագ և տեղի ունենում Ֆորմալինի թափանցումը ղեպի հատիկի սաղմը և ավելի ուժեղ չափով և ընկնում սերմերի ծլունակությունը:

Սերմերի ծլունակության անկումն ուղիղ հարարերական և Ֆորմալինի կոնցենտրացիային և եքսպոզիցիային, այդ իսկ պատճառով անհրաժեշտ և համարվում սերմացվի քամհարումը տամկացումից հետո: Քամհարման փոխարեն կարելի չե ջրով լվանալ արտաճանված սերմերը, բայց այս ձևվը շատ դժվարությունների հետ և կապված և դործադրում են միայն այն ղեպքում, յերբ սերմերի լվանալը արտաճանումից հետո համընկնում և սերմերի յերբորդ թրջման հետ (յարսփիղպացիայի ղեպքում): Ֆորմալինով արտաճանված սերմերը յերկար ժամանակ պահելիս՝ նրանց մեջ մնացած Ֆորմալինը շարունակում և ազդել սաղմի վրա և, այդ պատճառով, վորքան յերկար ժամանակ և պահվում արտաճանված սերմացուն, այնքան ավելի շատ և տուժում

ներա ծլունակությունը: Այս հանդամանքը նկատի ունենալով խորհուրդ և արվում Փորձալինով ախտահանված սերմացուն ցանկ ախտահանելուց 2—3 օրից վրչ ուչ:

Սերմերի ծլունակության վրա մեծապես ազդում և նաև այն հանդամանքը, թե արդյոք ինչ տեսակի հողի մեջ և ցանվում ախտահանված սերմացուն: Լավ և, յեթե հողը խոնավ և և տաք, վորովհետև այս դեպքում սերմերի միջից Փորձալինը շուտ հեռանում և, իսկ յեթե սերմերն ընկնում են խոնավ, բայց սառը հողի մեջ, ապա տեղի յե ունենում ծլունակության զգալի անկում, վորովհետև այս դեպքում սերմերը ծլում են դանդաղ, տալիս են թույլ ծիլեր, իսկ Փորձալինը ցածր աստիճանի տակ սլոլիմերիկացիայի յենթարկելով՝ ավելի բացասաբար և անդրադառնում ծիլերի վրա:

Ախտահանված սերմերի ցանքսը չոր հողում նույնպես տեղիք և տալիս սերմերի ծլունակության ուժեղ անկման: Այս դեպքում ախտահանված սերմերը շեն ստանում բավարար քանակությամբ խոնավություն և ուչ են ծլում, վորի հետեվանքով սերմերի մեջ մնացած Փորձալինն ավելի յերկար ժամանակ և ազդում: Ախտահանելիս սերմերը, չոր լինելու դեպքում, ավելի շատ են Փորձալինհիզ կլանում և, հետեվապես, ավելի շատ են ծլունակության անկում տալիս, քան խոնավ սերմերը: Նկատված և, վոր Փորձալինն ազդում և Ֆերմենտատիվ պրոցեսների վրա և առաջացնում և շնչառության թուլացում: Կան ցուցումներ նաև այն մասին, վոր Փորձալինը վորոչ չափով դանդաղեցնում և տերեկների պարզացումը:


#### ՔԼՈՐԱԿԻՐ:

Քլորակիրը վորպես ախտահանիչ նյութ առաջին անգամ լուրջ կերպով առաջարկվել և 1932 թվին: Քլորակիրի դրական կողմերից և այն, վոր կարելի յե ստանալ վորպես կողմնակի նյութ քլորի արդյունաբերության մեջ կիրը քլորով հագեցնելուց, ևժան և և լինելով բավականին բարձր թունուճակ՝ կարող և փոխարինել զեֆիցիտային Փորձալինին:

ՈՍՏ-ի համաձայն (59 և 3087) քլորակիրը պետք և լինի սպիտակ, փոշենման (յերբեմն քիչ քանակի կոշտերով):

Ակտիվ քլորի պարունակությունը առաջին տեսակի մեջ պետք և լինի 35 սոկոս, իսկ յերկրորդ տեսակի մեջ՝ 32: Քլորա-

կիրը փաթեթավորվում և փայտե կամ յերկաթե տակառների մեջ: Քլորրակիրն ունի հետեվյալ մոտավոր ֆորմուլը:



Զրային լուծույթներում այս նյութն ընդունակ և տարալուծվելու առաջացնելով  $\text{Ca Cl}_2$ ,  $\text{Ca}(\text{ClO})_2$  և  $\text{Ca}(\text{OH})_2$

Փոշի ըլորակիրը բաց ողում մնալիս՝ ուղի խոնավության և ածխաթթվի աղբեցության տակ դառնում և խոփրանման, ծորում և և կամաց-կամաց կորցնում ակտիվ ըլորը:

Գործադրությունը: Մերմերի ախտահանման համար ոգտագործում են նրա 0,6 տոկոսանի լուծույթը (վերցնում են 6 գր. 1 լիտր ջրին): Այս հարաբերությամբ պատրաստած լուծույթը պահում են 1,5—2 ժամ, վոր նստի, նստվածքը հեռացնում են, իսկ լուծույթն ողտագործում ախտահանման համար: Ախտահանվող սերմացուն ըլորակիրի լուծույթի մեջ պահում են 4—5 րոպե:

Մինչեվ հիմա ըլորակիրը լափապես փորձված և կորեկի փշեմրիկի դեմ և հաջող կերպով կարելի չե ողտագործել այդ նպատակի համար: Ցորենի և դարու քարամրիկի դեմ կատարած նախնական փորձերը նույնպես դրական արդյունքներ են տվել:

Մերմերի ծլունակության վրա ըլորակիրն առանձին բացասական աղբեցություն հանդես չի բերում: Քլորրակիրը հաջողությամբ կարելի չե ողտագործել նաև բանջարեղենի պահեստների դեղինֆեկցիայի համար: Այս դեպքում ողտագործվող ըլորակիրի լուծույթը պատրաստում են 1—3 տոկոսանի, այսինքն՝ մեկ լիտր ջրին վերցնում են 10—30 գր. ըլորակիր: Լուծույթը պատրաստելուց հետո նույնպես նստեցնում են և սրսկում պահեստները: Դեղինֆեկցիան վերջացնելուց հետո չենքը ողտախախում են՝ ըլորակիրի հոտը հեռացնելու համար: Բանջարեղեն լցնելու մոմենտին պահեստը ըլորակիրի հոտ բոլորովին չպետք և ունենա:

#### ԾՄՄՐԱԿԱՆ ԹԹՈՒ:

Ծմբական թթուն վորպես ֆունցիսիզ ողտագործվում և չատ քիչ դեպքերում: Նրանով ախտահանում են բամբակի սերմերը զոմմողի դեմ:

Այս նպատակի համար ողտագործում են 1,55—1,56 տեսա-

կարար կշիռ ունեցող տեխնիկական ծծմբական թթուն: Ծծմբական թթվով ըամբակի սերմերի ախտահանումը կատարվում է հետեվյալ կերպով. փայտե ամանների մեջ (կամ հատուկ մեքենաների ուղնությամբ) սերմերը թրջում են ծծմբական թթվով (առանց բաց անելու), ուղտադործելով մեկ կգր. սերմացվի համար 120—130 գր. ծծմբական թթու, յեթե սերմերը մերկ են, և 180—190 գր. սերմերը մերկ չլինելու դեպքում: Այդ ձևով թրջված սերմերը պահում են ամանների մեջ 20 րոպե տեվողությամբ, ապա սերմերը լավ լվանում են, լվանալուց հետո չորացնում, վորից հետո նրանք պատրաստ են ցանելու համար:

### Յերկաթարջասպ.

Յերկաթարջասպը յերկաթ ոկսիդի ծծմբաթթվական աղն է, վորը կրիստալանում է 7 մոլեկուլ ջրի հետ ( $\text{FeSO}_4 \cdot 7\text{H}_2\text{O}$ ) խոչոր կանաչագույն բյուրեղներով:

ՈՍՏ-ի համաձայն (63) յերկաթարջասպը պետք է համապատասխանի հետեվյալ տեխնիկական պահանջներին:

$\text{FeSO}_4$ -ի առկուսը պետք է լինի վոչ պակաս 52,5-ից

անլուծելի մնացորդներ վոչ ավելի . . . . . 0,5 տոկոսից

ազատ ծծմբական թթուն վոչ ավելի . . . . . 0,3 տոկոսից

Յերկաթարջասպը փաթեթավորվում է փայտե 200 կգր արկղների մեջ:

Վորպես ֆունգիսիդ յերկաթարջասպը ոգտադործվում է 3—5 տոկոսանի լուծույթով կրկնակի քանակի կրի հետ՝ ալգիների վաղ դարնան սրսկումների համար քարաքոսների և սնկային հիվանդությունների ձեռող ստադիաների դեմ:

Լավ արդյունք տալիս է 3—5 տոկոսանի յերկաթարջասպի լուծույթը հաղարջենու ամերիկական ալրացողի դեմ:

Սաղողի վաղի անտրակնոզի (*Gloeosporium ampelinum*) դեմ յերկաթարջասպը տալիս է ավելի լավ արդյունք, քան պղնձարջասպը: Այս դեպքում ուղտադործում են նրա 6 տոկոսանի լուծույթը, սրսկելով խաղողի վաղերը վաղ դարնանը, նախքան բողբոջների բացվելը:

## ԶՈՈՍԻԴՆԵՐ

Զոոսիդներ ընդունված է անվանել այն թունավոր նյութերը, վորոնք ուղտադործվում են կրծողների դեմ պայքարելու համար (մկներ-տուսլիկներ և այլն):

Զոոսփղների մեծ մասը նաև առաջնակարգ ինսեկտիսփղներ են և նրանց մասին մենք մանրամասնորեն կանգ ենք առել ինսեկտիսփղների զլխում, տալով նաև կրծողների դեմ պայքարող կոնցենտրացիաները, ծախսման նորմաները և այլն: Այստեղ մեզ մնում է խոսել միայն այն զոոսփղների մասին, վորոնք բնագրկված չեն յեղել ինսեկտիսփղների զլխում:

Իրենց ազդման ձևով զոոսփղներ կարող են լինել կամ ֆունկցանոններ քլորպիկրին, ծծմբածխածին, ցիանի պրեպարատներ և այլն, կամ աղիքային թույներ, որինակ, արսենի պրեպարատները:

Զոոսփղներից այս կամ այն մեկի ընտրությունը պայմանավորվում է կրծողի տեսակով, տարվող սրայքարի միջավայրով (դաշտ, ծածկատուն և այլն), ինչպես նաև յեղած թունավոր նյութերի ասորաիմենտով:

Զոոսփղներից, վորոնք ողտապործվում են միմիայն կրծողների դեմ, արժե հիշատակել ածխաթթվային բարիումը, Փոսֆորը, սորիխնինը:

#### Ածխաթթվային բարիում ( $\text{BaCO}_3$ )

Ածխաթթվային բարիումը սպիտակ դույնի, ջրում չլուծվող փոշի յե: Ստացվում է դաշտային շպտից: Շատ հաճախ այն պատրաստում են քլորական բարիումից, վորն ափելի հեշտ և ձևոք բերվում: Գլորական բարիումից ածխաթթվային բարիում ստանալու համար վերցնում են 100 մաս քլորական բարիում, յուծում են յեռացող ջրի մեջ և նրա մեջ լցնում սուղայի լուծույթ 100 մաս քլորական բարիումին 119,1-ի հաշվով: Այս գեպքում ստացվում է 80,76 մաս ածխաթթվային բարիում:

Ստացվող սպիտակ դույնի նստավճքը՝ ածխաթթվային բարիումը-լվանում են, չորացնում և մանրացնում:

Իր թունունակության տեսակետից ածխաթթվային բարիումը անհամեմատ պահատ թունունակ է, քան արսենի պրեպարատները, բայց այն հանդամանքը, վոր նա չունի արսենի պրեպարատներին հատուկ անդուրեկան համը, աունեաների կողմից լավ և ուսվում և ափելի լավ արգյունք և աախս:

Աունեաների համար մահացու դոզան համարվում է 0,2 գր., մարդկանց նկատմամբ ածխաթթվային բարիումը անհամեմատ

ափելի քիչ թունուենակ և՛ արսենի սրբեպարամների հետ համեմատած : Այս հաստիությունը հնարավորություն և տալիս այն լայն շափերով սպտապարծելու գերատիզայնացի համար (տներում, պահեանաներում և այլ մարդարենակ վայրերում) :

Մարդու համար մահացու դոզան համարվում է 2 գր .

Շների համար մահացու դոզան համարվում է 6 գր .

Հափերի համար մահացու դոզան համարվում է 0,6 գր .

Ածխածնի վայրի բարեխումով թունավորվելիս՝ ստաջ և դալիս արյունատար անոթները հեղուկի ուժեղ հոսանք դեպի ստամոքսը : Որդանիզմի հեղուկը արյան միջին ամբողջովին ձգտում է դեպի ստամոքսը ստաջ բերելով վերջինիս ուժեղ բորբոքում :

Նույն ձևով և բացատրվում նաև նրա աղյժան մեխանիզմը կրծողների նկատմամբ :

Մարդկանց մոտ թունավորման նշանները հանդես են գալիս ուժեղ փորսեցավով, թունավորվածը ծարավ և զրում, ապա սկսվում է փորհարիք և փսխում, գլխապտույտ, ջրածգություններ և ուշաթափություն :

### Փոսֆոր (P)

Փոսֆորը բնության մեջ շատ սարածված նյութ է, նա հանդիսանում է կենդանական և բուսական օրգանիզմների մեջ վորպես նրանց բազադրիչ անհրաժեշտ ելմանոր :

Փոսֆորը լինում է շորս մոլեկուլիկացիաներով . նրանցից վորպես գոտիզ սպտապարծվում է գլխավորապես դեղին կամ անգույն ֆոսֆորը :

Դեղին ֆոսֆորը կակուզ է, հալվում է  $+ 44^{\circ}$  և  $+ 30^{\circ}$ -ում խոնավ նոսմ ինքնավառվում է՝ ստաջացնելով թանձր սպիտակ ծուխ ( $P_2O_5$ ) Դեղին ֆոսֆորը պահվում է ջրի մեջ : Ինչպես ինքը ֆոսֆորը, նույնպես և նրա գոլորշիները շափապանց թունավոր են : Փոսֆորը հատկապես ուժեղ քայքայիչ աղ-դեցություն է ունենում ստամոքսի և վոսկորների վրա՝ ստաջացնելով նրանց փխումը :

Փոսֆորի հոար բազադրիանիս սուր և և անգուրեկան (ուների սխտորի հոա) : Մարդկանց համար մահացու դոզան համարվում է 0,05 գր . : 0, 015 գր . ստաջ և բերում ծանր թունավորում :

Փոսֆորն սպտապարծում են գլխավորապես առնանների դեմ պայքարելու համար : Նկատված է, վոր ֆոսֆորով խնամքով

պատրաստված թունավորված զրավչանյութերն առնետները միշտ ուտում են մեծ ատրժակով: Այս հանգամանքը նրան զարձնում է առաջնակարգ զրտիզ: Նրա մահացու զոզան առնետների համար համարվում է 0,005 գր:

Փոսֆորից զրավչանյութեր պատրաստելու համար, սկզբում այն տաքացնելով հեղուկացնում են (իհարկե ջրի տակ), այնուհետև ջրի հետ թափահարելով ստանում են եմուլսիա, վորը և խառնելով ալյուրի և ճարպի հետ պատրաստում են զրավչանյութ:

Այս բոլոր աշխատանքը կատարվում է արագ վորպեսզի տեղիք չարվի Փոսֆորի ինքնայրմանը: 0,5—1 տոկոս պարունակող պատան տալիս և միանգամայն լավ արդյունք: Վերել նշված ձևով պատրաստած զրավչանյութը փակ ամաններում կարելի չէ բավականին յերկար ժամանակ պահել:

Փոսֆորով թունավորվելիս առաջին նշաններն սկսում են փորացավով և փսիսցով: Ուժեղ թունավորման դեպքում առաջ է գալիս արյունահոսութիւն և ուշաթափութիւն:

## ՍՏՐԻԽՆԻՆ

Ստրիխնինը ալկալոիդ է, ունի  $C_{21}H_{22}N_2O_2$  քիմիական ֆորմուլը: Ստացվում է Strychnos ցեղին պտականոց բույսից, վորը տարածված է արևելական յերկրներում (Աֆրիկա, Հարավային Ամերիկա և այլն):

Կրծողների դեմ ոչտազործվում է ազոտաթթվային ստրիխնինը, վորը ջրում լուծելի նյութ է:

Ստրիխնինը հայտնի ուժեղ թունյներից մեկն է: Ստրիխնինի բնորոշ հատկութիւններից է այն, վոր նա արգանիզմի միջից շփաթությամբ և դուրս գալիս և ընդունակ է փոքր զոզաներով ընդունելիս կուտակվելու և մահացու դառնալու:

0,03 գր: մարդկանց համար մահացու զոզա չէ: Նրանով թունավորվելիս՝ իրանը մեջքի կողմից կորանում է: Կրծողների դեմ ադազործվում է թունավորված զրավչանյութերով: Պատրաստում են 1:200 և 1:50 հարաբերությամբ ազոտաթթվական ստրիխնինի լուծույթ և նրա մեջ թաթախում մեկ որ տեվորությամբ, հացահատիկներ, կարտոֆիլ, գազարի կտորներ և այլն:

Կարելի չէ նույնպես ստրիխնինի փոշով ծածկել բանջարեղենը և այդպես տալ կրծողներին:

Ստրիխններ լավ աղբոջ նյութ և, նրա զլխավոր թերությունն այն և, վոր ուժեղ թունաւնակ և մարդկանց նկատմամբ, վորի պատճառով անհրաժեշտ և նրանով աշխատելիս ծայրահեղ զգուշություն հանդես բերել:

Վորդեա գոտսիղներ օլտադորձվում և նաև մի շարք այլ թույններ, ծովաստիբը (Uriginea scilla) և այլն, բայց սրանց վրա կանգ չենք ստնի վորովհետև նրանք առանձին գործածական նշանակություն չունեն:

Վերջերս հայտնաբերված գոտսիղներից արժե կանգ առնել Scilla maritima-ի վրա վորը նույնպէս լինելով սոխարմատ բույս աղբում և միջիայն սունկաների վրա, թունաւնակ չլինելով նույնիսկ ուրիշ տաքարյուն կենդանիների նկատմամբ: Նրա այս սահմանափակ թունաւնակությունը սունկաների նկատմամբ՝ հնարավորություն և ապիս օլտադորձելու նրան զբովանջութեան ձեւով աննեաների դեմ դոմբում, հալանոցներում և նույնիսկ զտոլոգիական աշխիներում:

## ԻՆՍԵԿՏՈՒՑԻՍԻԳՆԵՐԻ ՂԱՀՂԱՆՈՒՄԸ, ՅԵՂՂՓՈՒՄՈՒՄԸ ՅԵՎ ՓԱՏԵՏԱՎՈՐՈՒՄԸ

Նայած ինտեկտո-ֆունկտիոլի բնույթին, այն կարող և փաթեթաւորվել տարբեր կերպ: Յեթե թունավոր նյութը սովորական ջերմաստիճանում զանվում և զազային փիճակում (քլոր, ծծմբաջրածին) կամ թե ունի յեռման ցածր կետ (30-ից ցածր ինչպէս որինակ, ցիանջրածնական թթուն), ապա այդպիսի թունավոր նյութերը փաթեթաւորվում և տեղափոխվում են հատուկ սղոլպատյա բալոններով: Ուժեղ թունավոր նյութերը ինչպէս որինակ, քլորպիլիբրներ փաթեթաւորվում և յերկաթե տակաոնների մեջ: Մյուս թունավոր հեղուկները (ծծմբական թթու, ֆորմալին) սահվում և տեղափոխվում են աղակի բալոնների մեջ:

Պինդ թունավոր նյութերը փաթեթաւորվում են փայտից սլատրատամ արկղների, փայտից կամ ֆաներկայից սլատրատամ տակաոնների մեջ: Մարդկանց համար վուշ վտանգավոր ինտեկտոֆունկտիոլներն, ինչպէս որինակ ծծումբը, փաթեթաւորվում և խիտ գործած կտորից, կամ թե կրաֆտցելուլոլայից սլատրատամ սլարկերի մեջ:

Թունավոր նյութերի վրա անպայման պետք է դրված լինեն գործարանի անունը, նյութի անունը, կշիւր նետոս և բրուտոս և պարտիայի համարը: Բացի այս բոլորից, յեթե նյութը թունավոր է, նրա վրա փակցվում են հատուկ նախազգուշացնող նշաններ— նկարներով և գրված՝ «Թույն է», «զգուշացիք թունավորումից» և այլն:

Որինավոր ամանների մեջ թունավոր նյութերը կարող են տեղափոխվել յերկաթուղով և յայլ ձևվի տրանսպորտով:

Ինտեկտ-Փունդլիսիդները պահելու համար պահեստներ կառուցելիս սրահնորդվում են պահվելիք թունավոր նյութի բնույթից:

Հեշտ բռնկվող նյութերը պահելու համար (որինակ՝ ծծմբածխածինը, ծծմբաջրածինը և այլն) պահեստները կառուցում են բնակելի շինքերից առնվազն 200 մետր հեռավորութեան վրա: Յեթե թունավոր նյութի քանակը քիչ է, պահեստը կարելի յե կառուցել բնակելի շինքերից 10—15 մետր հեռավորութեան վրա:

Այս նպատակի համար պատրաստված պահեստները պետք է ամբողջովին անփոսանց լինեն հրդեհի տեսակետից (պահեստը չպետք է ունենա հեռախոս, էլեկտրականութեան, պետք է ունենա շանթարդիք), բացի այս բոլորը պահեստը պետք է ունենա հակահրդեհային կահավորանք և հրդեհաչեջ պահակ:

Քլորպիկրինի պահելու դործը նույնպես պահանջում է մեծ զգուշութեան և այն պետք է անպայման համաձայնեցված լինի ՆԳՓԿ-ի տեղական կազմակերպութեաններին հետ:

Մնացած թունավոր նյութերը պահվում են լավ պատրաստված և պինդ կերպով փակվող պահեստների մեջ:

Թունավոր նյութերի (աղիքային և կենտակա թույների) պահեստները պետք է լինեն անպայման առանձին, արգելվում է նրանք պահել սեռականների և վերանյութերի հետ միասին կամ նրանց կից պահեստում:

ԻՆՍՏԵԿՏՈ-ՖՈՒՆԳԻՍԻԴՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ  
ԳՈՐԾԱՂԻՎՈՂ ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ինչպես մենք գիտենք, ինտեկտ-Փունդլիսիդներից մեծ մասը թունավոր են նաև մարդկանց ու բնտանի կենդանիների համար: այդ իսկ պատճառով զժրախտ պատահարները կանխելու համար՝ նրանց գործածութեան ժամանակ ձեռք են առնվում մի շարք նախազգուշական միջոցառումներ:

Հեշտ բանկվող նյութերով աշխատելու խստով կերպով արգելվում է ծխելը, լուցկի վառելը, կամ պահեստը տաքացնելու նպատակով վառարան վառելը: Արգելվում է պահեստում կատարել այնպիսի աշխատանք, զորք կարող է կայծ առաջացնել, ինչպես որինակ տակաոնների բերան բանալը մետաղե դործիքներով, կամ թե բետոնե հատակի վրա մեխեր ունեցող կոչիկներով ման գալը: Յեթե պահեստում թույլատրվում է ելեկտրականություն անցկացնել, ապա այն պետք է լինի բացարձակապես լավ վիճակում, ըստ վորում անջատիչները պետք է դրվեն շենքից դուրս, իսկ լապտերները սպակե ծածկոցների տակ: Ծծմբածխածինը դատարկելիս՝ արգելվում է ուղտադործել մետաղե սիֆոն, այն պետք է լինի անպայման սեղիկից:

Բանկվող նյութերը պահեստից մինչև դործադրման վայրը տեղափոխելու պետք է ձեռք ամուլեն բոլոր հակահրդեհային միջոցառումները:

Շենքերը ֆումիլացիայի յենթարկելիս՝ նախորք ձեռք են ամնվում հակահրդեհային միջոցառումներ, ինչպես որինակ անջատվում է ելեկտրական հասանքը, վառարանները՝ յեթե նրանք տաք են, հովացնում են, իսկ նրանց մեջ յեղած կրակը դուրս թափում: Հեշտ ալրվող նյութերով ֆումիլացիա կատարելու անպայման պետք է իմաց անել մոտոհա հրշիջ խմբին: Շենքը դադացիայի յենթարկելուց հետո պետք է լավ վակել և նրա մոտ պահակ կանդնեցնել: Ֆումիլացիայի յենթարկվող շենքից ամնվազն 20-30 մետր հեռավորության վրա արգելվում է կրակ անել:

Ինչպես պահեստներում, նույնպես և ֆումիլացիայի յենթարկվող շենքերում պիտի ունենալ համապատասխան դեղորայք՝ առաջին ողնության համար «կրակամարներ» և ջուր՝ հրդեհը հանդցնելու համար:

Թունավոր գազերի հետ դործ ունենալիս պետք է աշխատել անպայման հակադադերով:

Փոշի պրեկարատներով աշխատելիս— դատարկելիս, չոր ախտահանման ժամանակ, դաշտում փոշոտում կատարելիս և այլն, թունավոր փոշու թափանցումից աչքերի, բերանի, քթի մեջ, խուսափելու համար անհրաժեշտ է ուղտադործել ակնոցներ և սեպիրատորներ (բերանակալներ):

Թունավոր նյութերով աշխատելու ժամանակ չի կարելի

կերակրվել: Աշխատանքը հարկավոր և կատարել այնպիսի հաղուստի մեջ, վորը հնարավոր լինի աշխատանքից հետո փութել: Թունավոր նյութերով աշխատողները պետք և պահպանեն անհատական գիզփենայի սրենքները՝ աշխատելուց հետո շորերը փոխել, ձեռքերը և յերեսը մաքուր լվանալ սապոնով, լազ և աշխատանքից հետո դուռը ընդունել: Բացի թունավոր նյութերով անմիջականորեն աշխատողների մասին մտածելուց, պետք և մտածել նաև շրջապատի աղբարեակուսթյան անխտանդուսթյան մասին: Աշխատանքը պետք և կազմակերպել այնպես, վոր տեղիք չարվի թունավորման դեպքերի: Աշխատանքը վերջացնելուց հետո պետք և ստուգել, վորպեսզի թունավոր նյութի մնացորդները չմնան դաշտում, պահեստում և այլն: Յեթև Փումիլդայիայի յե յենթարկիված պահեստը, Փումիլդայիայից հետո պետք և այն լազ դեգաղացիայի յենթարկել, ապա հանձնել սղտաղործման համար:

Յեթև սրտիված կամ փոշտոված և դաշտը, կամ թև դաշտում շաղ և տրված թունավորված դրավչանյութը ապա այդպիսի դաշտերում պետք և հսկողություն սահմանել, մինչև թունավորման վտանդի անցնելը (15-20 սր), վորպեսզի տեղիք չտալ անասունների թունավորման:

Թունավոր նյութերի հետ վործ ունեցող մարդկանց պետք և նախորք պատրաստել, մանրամասն կերպով նրանց բացատրելով թունավոր նյութերի հետ վարվելու կանոնների մասին:

Մարդկանց թունավորման դեպքեր պատահելիս՝ անմիջապես պետք և դիմել մոտակա բժշկական պոլեկտի ողնության: Փումիլդայիայի ժամանակ շենքոնձ թունավորվածներին անմիջապես պետք և դուրս հանել մաքուր սղի մեջ: Ուժեղ թունավոր նյութերով (քլորպիկրին, արսեն և այլն) աշխատելիս նախորք պետք և տեղյակ պահել մոտակա բուժկայանին և համապատասխան ցուցումներ ստանալ:

ՈՒՍԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

1. **В. Ф. Болдырев и др.**—«Основы Защиты с. х. растений от вредителей и болезней» часть I, 1936 г.
2. **В. Трапман** «Борьба с вредителями». Русский перевод, 1932 г.
3. **Г. Мартин**—«Научные основы защиты растений» Русский перевод, 1931 г.

ЦЕНА

18123

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո

Պայմարի բիմիական մեքողը . . . . .	5
Քիմիական մեքողի բնութագրումը . . . . .	4
Թույն և բունավորում . . . . .	4
Թունավոր նյութերի դասակարգումը . . . . .	8
Գյուղատնտեսության մեջ ոգտագործվող բունավոր նյութերից պահանջվող ընդհանուր հատկություն- ներ . . . . .	10
Հասկացողություններ ինսեկտոֆունգիսիդների կոնցենտ- րացիայի դոզայի և ծախսման նորմաների մասին . . . . .	12
Ինսեկտոֆունգիսիդների գործադրման ձևերը . . . . .	14
Փոշոտում . . . . .	15
Մրսկում . . . . .	19
Ֆումիգաչա . . . . .	28
Գրավչաչությունով մղվող պայմարը . . . . .	40
Ախտահանում . . . . .	42
Ներքին տերապեա . . . . .	44
Ինսեկտիսիդներ . . . . .	46
Ադիբային ինսեկտիսիդներ . . . . .	46
Կոնտակտ ինսեկտիսիդներ . . . . .	76
Ֆումիգանտներ . . . . .	101
Ֆունգիսիդներ . . . . .	138
Չոոսիդներ . . . . .	159
Ինսեկտոֆունգիսիդների պահպանումը, տեղափոխումը և փաթեթավորումը . . . . .	163

16056

Պատ. խմբագիր՝ Ա. ԳԱՍՏՅՅՆ  
 Մասնագ. խմբագիր՝ Հ. ԹՈՒՄՍՆՅԱՆ  
 Տեխ. խմբագիր՝ Հ. ԱՅՎԱԶՅԱՆ  
 Սրբագրիչ՝ Վ. ԹՈՅԱԶՅԱՆ

Գրավիտե լիպոթ և 1191 պարտիկ № 440 տիրամ 1000

Հայկական ԽՍՀ ժկե-ին կից գեորբիոլոգիկ Հայաստան»  
Իրատարակչության ստեղծում, Ֆերման

